




U. G. ✓

1286

652

1999

Ա. Ե.

1286

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ

ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԵՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 մասն—ամբողջ թուերը

Զարբերակ

Փոխադրող իւր

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԻՄԵՐՆԵԱՆՑ

ՎԱԴԱՐՋԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՄՆԻ

ՌՅԼԸ—1882

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

ՀԱՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԵՈՐԴԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.



1286-81

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ պարունակում է իւր մէջ խնդիրներ և թուական օրինակներ ամբողջ թուերով և բաղկանում է երկու զլխաւոր բաժնից՝ ՏԱՐԲԱՆԿԱՆ և ԿԱՆՈՆԱԻՈՐ ընթացքից:

Տարրական ընթացքը բաղկացած է հետևեալ բաժանմունքներից: Ա. Խնդիրներ առաջին հարիւրեակի թուերով: Բ. Թուական օրինակներ հաշուարարութեան համար մինչև 100:

Կանոնաւոր ընթացքը բաղկացած է նոյնպէս երկու բաժնից: Ա. Թուական օրինակներ և խնդիրներ վերացական թուերով և Բ. Թուական օրինակներ և խնդիրներ բարդ անուանական թուերով:

Առաջին բաժնի սկզբի տասը զլխում՝ զրաժ են գործնական խնդիրներ, որոնք մեծ մասամբ բարդ խնդիրներ են, այսինքն այնպիսիք, որոնց լուծելու համար պահանջվում է մի քանի թուաբանական գործողութիւն: Այդ խնդիրները կազմած են այնպէս որ աշակերտները կարողանան վճռել դոցա բերանացի կերպով, թէպէտ նոցա կարելի է վճռել և զրաւոր կերպով, որպէս զի աշակերտները ընտելանան զրաւոր կերպով վճռելու զասաւորութեան եղանակին:

Առաջին հարիւրեակի գործնական խնդիրներից յետոյ զրաժ են հաշուարարութեան օրինակներ վերացական թուերով մինչև 100, որ նոյնպէս բաղկացած են տասը զլխից: Այդ օրինակները համապատասխան խնդիրների հետ միասին հանգամանքօրէն ծանօթացնելով աշակերտին թուերի կազմութեան հետ, կարող են ծառայել և հետևեալ նպատակների համար. այն է աշակերտի միտքը մշակելու արագ հաշուարարութեան մէջ և զառնալն իւր զրաւոր զբաղմունքի համար:

Կանոնաւոր ընթացքի երկու բաժանմունքում ևս իւրաքանչիւր զլխի սկզբում զրաժ են առաջ թուական օրինակներ, յետոյ խնդիրներ, ըստ որում կանոնաւոր ընթացքի մէջ առաջին տեղը զրաւում է գործողութիւնը թուերով, իսկ երկրորդ տեղը՝ գործողութեանց գործադրութիւնը:

Այդպէս թէ վերացական և թէ անուանական թուերի իւրաքանչիւր գործողութեանց վերայ առանձին և չորս գործողութեանց վերայ միասին, բերած են բաւականին և բոլորովին կանոնաւոր կերպով պարզիցը դէպի բարձր դասաւորված թուական օրինակներ։ Տարրական ընթացքի վերջումը զրած է բազմապատկութեան աղիւսակը, իսկ Վանոնաւոր ընթացքի վերջերումը զրած է ուսական չափերի աղիւսակը և ապա խնդիրների պատասխանիքը։

ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻԻՐԵԿԻ ԹՈՒՆԵՐԸ

ԽՆԴԻՐՆԵՐ

1—10

1. Արտաշէսը երկու խնձոր ունէր, մինն էլ քոյրը տուեց նորան։ Այժմ քանի՞ խնձոր ունի։
2. Վարսենիկը իւր հօրիցը Ջառիկին ստացաւ մի ձու, իսկ մօրիցը երկու ձու։ Մնացածը քանի՞ ձու ստացաւ նա։
3. Որդին իւր հօրիցը ստացաւ երեք կոպէկ, մի կոպէկը տուեց խնձորի, իսկ մնացած փողով առաւ երկու զրիչ, ամեն մի զրիչն ուրբան փող տուեց։
4. Աթուի մի ոտը կտրուած էր, քանինն էր ամբողջ։
5. Աթենիկը չորս տանձ ունէր, երեքը կերաւ։ Վանինը մնաց իւր մօտ։
6. Մի աղջիկ ծառի տակից չորս սերդէիլ վերցրեց, բայց նոցա կէսը փտած էր։ Վանինն էր լաւ։
7. Տանտիկինը երկու զոյգ բաժակ ունէր, որոնցից մինը կտրվեց։ Վանինը մնաց ամբողջ։
8. Երկու սայլում լծած էր չորս հղը, ամեն մի սայլում քանինն էր լծած։
9. Մի տան կային երկու աղայ և մի աղջիկ, փոքր տղան մի տարեկան էր, աղջիկը երեք անգամ նորանից մեծ էր, իսկ երկրորդ տղան մի տարով աղջկանիցը մեծ էր։ Վանին տարեկան էր երկրորդ տղան։
10. Պերդաստանի հայրը և մայրը ունէին մի աղայ և մի աղջիկ։ Վանին հօգի կար այդ գերդաստանում և նոցանից քանինն էր սղամարդ և քանինն էր կինարմատ։

11. Մի երեխայ ունէր երկու թերթ թուղթ, իսկ միւսը երկու անգամ նորանից աւելի. երկրորդը առաջինին տուեց մի թերթ: Ամեն-մէկը այժմ քանի՞ թերթ ունի:

12. Մի ընտանիք զբօսնում էր այգիումը. առջևիցը զընուակին երկու քոյրը, նոցանից յետոյ երկու եղբայրը, իսկ հակիցը հայրը: Վանի՞ հոգի էին զբօսնում:

13. Աշակերտը խնձորներ բերեց ուսումնարան. նոցանից իւր երկու ընկերին տուեց մի-մի զոյգ և իւր մօտ մնաց մի խընձոր: Նա քանի՞ խնձոր էր բերել:

14. Մի աղջիկ հինգ կոպէկ ունէր, զորանից մի կոպէկ տուեց մի աղքատի. իսկ մնացածը հաւասար բաժանեց երկու ուրիշ աղքատի: Ամեն-մի աղքատին նա քանի՞ կոպէկ տուեց:

15. Հայրը իւր աղջկանը ընծայեց հինգ պատկեր. նա երեքը պահեց իւր համար, իսկ մնացածը տուեց իւր քոյրերին մի-մի հատ: Նա քանի՞ քոյր ունէր:

16. Ի՞նչպիսի հաւասար զրամների հետ կարելի է փոխել հինգ-կոպէկանոցը, ի՞նչպիսի երկու անհաւասար զրամի հետ, ինչպիսի երեք անհաւասար զրամի հետ և ի՞նչպիսի չորս անհաւասար զրամի հետ:

17. Աշակերտը գնաց վարժապետի մօտ և երկու ժամ պարպեց հայերէն լեզուով, մի ժամ հանգստացաւ, մի ժամ գրեց, դարձեալ մի ժամ հանգստացաւ, յետոյ մի ժամ ևս պարպեց թուաբանութիւնով ու գնաց տուն: Նա ո՞րքան ժամանակ մնաց վարժապետի մօտ:

18. Սայրումը լծած էին մի զոյգ զօմէշ և երկու զոյգ եղջ: Ի՞նչորը քանի՞ կենդանի էին լծած:

19. Գեղացին վեց հատ եղն ունէր. նա քաղաքը փայտ տանելու համար ամեն-մի սայրումը լծեց մի զոյգ: Վանի՞ սայլ փայտ տարաւ:

20. Մի երեխայ հինգ կոպէկ ունէր, իսկ միւսը մի կոպէկ. նոքա իւրեանց բոլոր փողովը միասին առան երկու հաց: Ամեն մի հացը քանի՞ կոպէկ արժէր:

21. Ի՞մ մի զրպանումը կար երկու խնձոր, իսկ միւսումը երկու անգամ զորանից աւելի: Վանի՞ խնձոր պէտք է երկրորդ զրպանիցս դնեմ առաջինում, որ երկուսումն էլ հաւասար լինի և ես քանի՞ խնձոր ունեմ:

22. Երկու տանձին երկու անգամ աւելի փող առին քան թէ երկու սալորին: Ամեն-մի սալորը ո՞րքան արժէր. եթէ որ բոլորին տուին վեց կոպէկ:

23. Մի երեխայ առաւ մի խնձոր, իսկ միւսը երկու խնձոր հաւասար դնով և երկրորդը իւր խնձորներին երկու կոպէկ աւելի տուեց առաջինից: Ո՞րքան արժէր բոլոր երեք խնձորը:

24. Մի շաբաթը քանի՞ օր է: Շաբաթուայ մէջը բացի կիւրակեից հինգշաբթի օրն էլ տօն էր: Այդ շաբաթուայ մէջը քանի՞ հասարակ օր կար:

25. Երեխային տուին երեք զրամ. երկուսը երեք—կոպէկանոց, իսկ մէկը մի-կոպէկանոց. նա այդ փողերից երկու կոպէկ տուեց մատիտ առաւ, իսկ մնացած փողովը տանձ առաւ՝ ամեն մէկին վճարելով մի կոպէկ: Նա քանի՞ տանձ առաւ:

26. Վանի՞ զրամից կարելի է եօթը կոպէկ կազմել:

27. Երեխան ամեն—մի ձեռն ունէր չորս բաժակ. դոցանից երեքը նա վայր դրեց և կտրեց: Վանի՞նք մնաց ամբողջ:

28. Մեծ եղբօրը տուին հինգ կոպէկ, իսկ փոքրին նորանից երկու կոպէկ պակաս: Նոքա իւրեանց բոլոր փողերովը առան չորս խնձոր: Ո՞րքան արժէր մի խնձորը:

29. Մի հաւ երեք ձու դրեց, իսկ միւսը զորանից երկուսը աւելի: Այդ ձուաները բաժանեցին երեխանցը և ամեն մէկին ընկաւ երկու ձու: Վանի՞ երեխայ էին:

30. Հայրը իւր երկու որդուն հինգ խնդիր առաջարկեց լուծելու և խոստացաւ, որ ամեն-մի ուղիղ վճռած խնդրի համար երկու տանձ տայ: Մի որդին ստացաւ ութ տանձ, իսկ միւսը՝ երկու անգամ նորանից պակաս: Ամեն մի երեխան քանի՞ խնդիր չկարողացաւ լուծել:

31. Վանի՞ օրումը կտրելի է սովորել զորքի ութ երեսը, եթէ որ օրէնք սովորեն երկու կամ չորս երես:

32. Աշակերտի տետրակը բաղկացած էր ութ երեսից. դոբանից երկու երես նա վաւորեց և դուրս կտրեց, իսկ մի երեսը դրեց: Վանի՞ մաքուր երես մնաց տետրակումը:

33. Արեւսան չորս անգամ գնաց այգին և ամեն-մի անգամ ում բերեց երկու խնձոր: Այդ խնձորներէիցը նա իւր երկու եղբօրը տուեց երեք-երեք խնձոր, իսկ մնացածը հաւասար բաժանեց իւր երկու քրոջը: Ամեն-մի քոյրը քանի՞ խնձոր ստացաւ:

34. Մի ընտանիքի մէջ կային ութ հոգի՝ հայրը, մայրը, տղերք և աղջկերք. տղերքը երկու անգամ աւելի էին աղջկաներից: Վանի՞ աղջիկ կար այդ ընտանիքի մէջ:

35. Սենեակումը ութ աթոռ կար. դոցա կէսը ուղարկեցին նորոգելու, բայց երկուսը բոլորովին ջարդուած էին: Վանի՞ աթոռ մնաց սենեակումը:

36. Արկու երեսայ ութ խնձոր առան. նոցանից մինը երեք անգամ աւելի փող տուեց քան միւսը: Ամեն-մէկը քանի խնձոր պէտք է վերցնի:

37. Տան երկարութիւնը ութ սաժէն էր, իսկ լայնութիւնը վեց սաժէն. աշակերտը դորա պատկերը քաշելիս՝ երկարութիւնը թղթի վերայ նշանակեց, չորս վերջոյ: Այնութիւնը քանի՞ վերջոյ պէտք է նշանակի:

38. Աշակերտը տետրակից դուրս գրեց ութ երես, էլի մնաց դրելու մի երես: Վանի՞ ժամումը նա բոլորը կաւարտէր, եթէ որ մի ժամումը դուրս էր գրում երեք երես:

39. Մրդավաճառը երեք թաբախ ունէր, ամեն-մէկի մէջը կար երեք ձմերուկ. դոցանից նա չորսը վաճառեց: Վանի՞ ձմերուկ մնաց:

40. Մի մարդ աղքատներին իննը կոպէկ բաժանեց, երեք հոգու ամեն մէկին հասաւ մի կոպէկ, իսկ մնացածներին մի—մի կոպէկ նոցանից աւելի: Բոլորը քանի՞ աղքատ էին:

41. Մեծ եղբայրը իննը տարեկան է, իսկ փոքրը երեք անգամ նորանից ջահել է: Մեծ եղբայրը քանի՞ տարով է մեծ փոքրիցը:

42. Արկու երեսայ միասին իննը դեղձ ունէին. նոցանից մինը կերաւ երկուսը, իսկ միւսը՝ երեքը և նոցա մօտ հաւասար մնաց: Ամեն-մի երեսան քանի՞ դեղձ ունէր:

43. Սենեակումը կային աթոռներ և բաղկաթոռներ, բոլորը միասին իննը հատ էին, բայց աթոռները երկու անգամ աւելի էին բաղկաթոռներից: Վանի՞ բաղկաթոռ կար սենեակումը:

44. Մի ընտանիքի մէջ որքան տղերք կային, այնքան էլ աղջկերք կային: Ամեն-մի տղային տուին երկու խնձոր. իսկ ամեն-մի աղջկանը մի խնձոր, յետոյ տեսան որ բոլոր տղերքը երեք խնձոր աւելի են ստացել աղջկաներից: Վանի՞ երեսայ կար այդ ընտանիքի մէջ:

45. Արեւսան ունէր մի կոպէկ. նա իւր հօրիցը ստացաւ էլի երեք հատ երեք-կոպէկանոց: Այդ բոլոր փողովը նա թուղթ առաւ և ամեն-մի թերթին տուեց մի կոպէկ: Նա քանի՞ թերթ թուղթ առաւ:

46. Արեք եղբօր տարիները ինն են: Մեծը հինգ տարեկան է, իսկ միջնակը երկու տարով նորանից փոքր է: Վանի՞ տարեկան է փոքր եղբայրը:

47. Հինգ երեսայ ծաղիկներ ցանելու համար պարտիզումը մի մարկ շենեցին, որի երկարութիւնը տասն արշին էր. յետոյ այդ մարկը իւրեանց մէջը հաւասար բաժանեցին: Ամեն-մէկին քանի՞ արշին ընկաւ:

48. Արկու երեսայ միասին տասը տանձ ունէին, երբոր նոքա հաւասար կերան իւրեանց տանձերից, այն ժամանակը մէկի մօտ մնաց մի տանձ, իսկ միւսի մօտ երեք տանձ: Ամեն-մի երեսան քանի՞ տանձ ունէր:

49. Մի տակառ տանում էր տասը վեղրօ ջուր. եթէ բանում էին նորա մի խողովակը, բոլոր ջուրը դուրս էր թափվում երկու բոպէումը. իսկ եթէ բանում էին միւս խողովակը, բոլոր

Ջուրը դուրս էր թափվում հինգ բոպէումը: Առաջին խողովակից մի բոպէումը քանի՞ վերջո ջուր աւելի էր թափվում երկրորդից:

50. Երեք երեխայ փող վէր իկան և տասը խնձոր առան: Մինը տուեց մի կոպէկ, իսկ մնացած երկուսը տուին երկու-երկու կոպէկ: Ամեն-մի երեխան քանի՞ խնձոր պէտք է վերցնէր:

51. Մի երեխայ երկու կոպէկ ունէր, իսկ միւսը երեք. այդ փողերովը նոքա միասին տասը դեղձ առան: Ամեն-մէկը իւր փողին քանի՞ դեղձ պէտքէ վերցնի:

52. Մի աշակերտի տուին երկու տետրակ, իսկ միւսին երեք. յետոյ տեսան որ երկրորդ աշակերտը երկու թերթ աւելի է ստացել առաջնից: Ամեն-մէկի տետրակները քանի՞ թերթ էին:

53. Մըգավաճառը տասը կոպէկով տալիս է հինգ սերգէի: Նա քանի՞ խնձոր կտայ տասը կոպէկի, եթէ որ խնձորը երկու անգամ արժան է սերգէից:

54. Մի երեխայ երկու մատիտ առաւ, իսկ միւսը հինգ մատիտ, միայն երկրորդը առաջնից վեց կոպէկ աւելի տուեց: Իւրաքանչիւրը որքան փող տուեց:

55. Մի մարդ աղքատներին բաժանեց տասը կոպէկ. երեքին տուեց երկու-երկու կոպէկ. իսկ մնացածներին մի-մի կոպէկ: Բոլորը քանի՞ աղքատ էին:

56. Աշակերտը զրբիցը դուրս էր գրում տետրակի վերայ. զրբի երկու երեսը մտնում էր տետրակի չորս երեսումը: Նա իւր տետրակի տասը երեսը լցրեց: Պրբի քանի՞ երեսն էր դուրս գրել:

57. Երեխան երկու անգամ կերաւ երեք-երեք կակալ, երկուսն էլ տուեց եղբորը, իւր մօտ էլ մնաց երկու կակալ: Նա ընդամենը քանի՞ կակալ ունէր:

58. Աշակերտը երկու մատիտ առաւ. ամեն մինը երեք կոպէկով, էլ առաւ երեք քարէզրիչ, մինը մի կոպէկով. նա տուեց երկու-շահանոց: Որքան փող պէտքէ յետ ստանաւ:

59. Թուխը ձուտեր հանեց, նոցանից երկուսը կատուն

կերաւ, երեքը ուրուրը տարաւ, այդքան էլ մնաց: Թուխը քանի՞ ձուտ էր հանել:

60. Երեխան տասը կոպէկ ունէր. դորանով առաւ մի քանի մատիտ, մինը երկու կոպէկով. էլ մնաց երկու կոպէկ, որոնցով առաւ երկու զրիչ: Նա քանի՞ մատիտ առաւ:

61. Հայրը որդուն տուեց տասը կոպէկ. նա առաւ երկու խնձոր, մինը մի կոպէկով. իսկ մնացած փողը հաւասար բաժանեց երկու աղքատի: Ամեն-մի աղքատը որքան ստացաւ:

62. Չառան մըգավաճառին երկու-շահի տուեց և առաւ երկու սերգէիլ. ամեն-մի շահուցն էլ երկու կոպէկ յետ ստացաւ: Ամեն մի սերգէիլը որքան արժէր:

63. Մեծ եղբայրը տասը տարեկան էր, իսկ երկրորդը եօթը տարով նորանից փոքր էր, քոյրն էլ երկու անգամ մեծ էր երկրորդիցը: Քանի՞ տարեկան էր քոյրը:

64. Եթէ վեց կակալը հաւասար բաժանենք երեխանցը, քանի՞ երեխայի կհասնի և ամեն-մէկին քանի՞ հատ:

65. Ինը դեղձը պէտքէ բաժանել երեք երեխայի ինչպէս կամենան: Ամեն-մէկին քանի՞ կհասնի:

66. Տասը խնձոր հաւասար բաժանեցին մի քանի աղջկայ: Քանի՞ աղջիկ էին և քանի՞ խնձոր ընկաւ ամեն—մէկին:

67. Այս զրվանքայ հացը արժէ մի կոպէկ. չորս մարդ միասին առան ութ կոպէկի հաց և հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Ամեն-մէկին քանի՞ զրվանքայ ընկաւ:

68. Ինչպիսի երեք, չորս կամ հինգ անհաւասար դրամներէց կարելի է տասը կոպէկ կազմել:

69. Աղջիկըքը երեք թուի կապեցին միմեանցից և ճլորթի շինեցին. մի թուիլը երկու արշն էր. միւսը երկու և կէս արշն, իսկ երրորդը չորս ու կէս արշն: Ճլորթու երկարութիւնը որքան գուրս եկաւ:

70. Աշակերտը երկու թերթ թուղթ չորստակեց և տետրակ կարեց. այդ տետրակի վեց երեսի վերայ թարգմանութիւն

արեց. իսկ մնացած իւրաքանչեւը երկու երեսի վերայ դրեց երկու դաս: 'Նա քանի՞ դաս դրեց:

71. Մի զիւղեցը մինչեւ միւս զիւղը երեք վերստ էր. սայլը սուաջին զիւղեցը ճանապարհ ընկաւ դէպի միւսը և մէկ ու կէս վերստ գնալուց յետոյ վերադարձաւ. յետոյ կրկին ճանապարհ ընկաւ և հասնելով միւս զիւղը՝ նոյն օրը վերադարձաւ առն: Սայլը այդ օրը քանի՞ վերստ ման եկաւ:

72. Նրեկայի քայլը կէս արշին էր. նա սենեակի մի պատիցը միւսը հասնելու համար տասը քայլ փոխեց: Պատերի հեռաւորութիւնը որքան էր:

73. Նրկու երկուսի իւրեանց մրդերը միմեանց հետ փոխեցին. մինը տուեց երեք նուռը, իսկ միւսը զորա փոխարէն տուեց իննը տանձ, Որքան արժէր ամեն-մի տանձը, եթէ որ մի նուռը արժէր մէկ ու կէս կոպէկ:

74. Ոստայնագործը մի ժամումը պատրաստում է երկու արշին կառւ: 'Նա քանի՞ արշին կպատրաստի չորս ու կէս ժամումը:

75. Աշակերտը մի ընդունումը կարդում է երեսի երրորդ մասը: 'Նա քանի՞ ընդունումը կկարդայ երկու կամ երեք երես:

76. Նրեկան խնձորներ բերեց ուսումնարան. զոցանից ութ ընկերի ամեն-մէկին տուեց մի խնձորի քառորդ մասը. վեց ընկերի ամեն-մէկին տուեց մի խնձորի երրորդ մասը. իւր մօտ էլի մնաց երկու խնձոր: 'Նա քանի՞ խնձոր էր բերել:

77. Աշակերտը վեց մատիտ ունէր. զոցանից երկու ընկերին տուեց մի-մի մատիտ. հինգ ընկերին էլ տուեց կէս կէս մատիտ: 'Նորա մօտ քանի՞ մատիտ մնաց:

78. Գիւղացին եկեղեցումը հինգ կոպէկի մօմ առաւ, մինը կէս կոպէկով և ամեն-մի պատկերի առաջը նա մինը վառեց: 'Նա քանի՞ պատկերի առաջ մօմ վառեց:

79. Նրեկան երեք թու ունէր, մէկի երկարութիւնը երկու և կէս արշին էր, միւսինը երեք և մի քառորդ արշին, իսկ երրորդինը երեք և կէս արշին. նա այդ թուերը կապեց միմեանց ծայրից: Թուի երկարութիւնը որքան դուրս եկաւ:

80. Հայրը իւր երեխանցը տասը թերթ թուղթ բաժանեց. մեծ տղան ստացաւ բոլոր թղթի հինգերորդ մասը. միջնակը ստացաւ մնացածի չորրորդ մասը. փոքրը ստացաւ դարձեալ մնացածի երրորդ մասը: Մնացածն էլ հաւասար բաժանեցին երկու աղջիկը: Որքան թուղթ ստացաւ ամեն-մի տղան և աղջիկը:

ԽՆԴԻՐՆԵՐ

11—20

81. Վաճառականը մի արկղումը տասը կիտրոն ունէր, իսկ միւսումը զորանից մէկն աւելի: 'Նա առաջին արկղեցը վաճառեց վեց հատ, իսկ երկրորդիցը չորս հատ: 'Քանի՞ կիտրոն մնաց երկու արկղումը:

82. Նրեկան ունէր 3 հատ երեք-կոպէկանոց և մի հատ երկու-կոպէկանոց: 'Նա այդ փողերը մանրացրեց և բաժանեց աղքատներին, ամեն-մի աղքատին ընկաւ մի կոպէկ: 'Նա քանի՞ աղքատի փող տուեց:

83. Տասնումեկ արշին քաթանից կարեցին 5 երեկայի շապիկ ամեն-մի շապիկի համար մի արշին, իսկ մնացած քաթանիցը կարեցին սփռոցներ՝ ամեն մինը 2 արշինիցը: 'Քանի՞ սփռոց դուրս եկաւ:

84. Աղախին ուղարկեցին մի զրվանքայ նաւթ առնելու. զորա համար նորան տուին 3 հատ երկու կոպէկանոց և էլի մի ուրիշ դրամ: Այդ վերջի դրամը քանի՞ կոպէկանոց էր, եթէ որ նաւթի զրվանքան արժէր 11 կոպէկ:

85. Այգիպանը վաճառեց տասը դղում և նորա մօտ մնաց էլի երկու հատ: 'Նա ընդամենը քանի՞ դղում ունէր:

86. Սենեակի մէջ կար 12 աթոռ. զորանից երկու պատերի իւրաքանչիւրի մօտ դարսած էր 5 հատ, իսկ մնացածը դարսած էր սեղանի մօտ: Վանի՞ աթոռ կար սեղանի մօտ:

87. Ղասաթան մէջ 4 նստարան կար. ամեն-մէկի վերայ նստում էին երեք աշակերտ. Վանի՞ աշակերտ կար դասա-տանը, եթէ որ մէկը չէր եկել:

88. Հայրը իւր փոքր որդուն տուեց հինգ խնձոր, իսկ մե-ծին նորանից երկուսն աւելի և հրամայեց միւս երկու եղբայր-ների հետ միասին հաւասար բաժանեն: Իւրաքանչիւրին քանի՞ խնձոր կընկնէր:

89. Պիւղացու կովերից երկուսը սև էին, երկու անգամ չորանից աւելի միսը ազոյն էին, իսկ երեք անգամ՝ աւելի կար-միր էին: Բնդամենը քանի՞ կով ունէր զիւղացին:

90. Երեխան գնաց ուսումնարան առաւօտեան 8 ժամին և պարապեց այնտեղ 3 ժամ: Ելել քանի՞ ժամ պէտք է մնար մինչև կէս օրը:

91. Աշակերտը տարվայ մէջ երկու ամիս հիւանդ էր, իսկ երեք ամիս արձակուրդին զիւղումն էր: Նա քանի՞ ամիս էր ուսանում:

92. Իմ մի զրպանումը 3 կակալ կայ, միւսումը 5, իսկ եր-րորդումը 4: Այդ բոլոր կակալները ես կամենում եմ ածել իմ երկու զրպանը հաւասարապէս: Ամեն—մի զրպանումն քանի՞ կակալ կընկնի:

93. Մի սայլապան ունէր 3 եղբ, իսկ միւսը երեք անգամ նորանից աւելի: Նոքա կամենում էին ապրանք տանել քա-ղաք, զորս համար ամեն—մի սայլումը լծեցին մի զոյգ: Վա-նի՞ սայլով տարան ապրանքը:

94. Ուսումնարանի մի դասատանը կար 10 աշակերտ, իսկ միւսումը նոցանից 3-ը աւելի: Տօներին առաջին դաստա-նիցը գնացին տուն 4 աշակերտ, իսկ երկրորդիցը 6 աշակերտ: Վանի՞ աշակերտ մնաց ուսումնարանումը:

95. Երեք երեխայի համար 13 մատիտ առան. զոցանից

մէկին տուին 5 հատ, իսկ մնացածը հաւասար բաժանեցին եր-կուսին: Ամեն—միւսը քանի՞ մատիտ ստացաւ:

96. Ղասաթանը 5 նստարան կար երկուսի վերայ նստած էին երկու-երկու աշակերտ. իսկ մնացածների վերայ երեք-երեք: Ղասաթանը ընդամենը քանի՞ աշակերտ կար:

97. Աշակերտը արձակուրդ առաւ և գնաց զիւղը իւր ծնող-ների մօտ. նա այնտեղ մնաց մի շաբաթ, գնալ—դալու հա-մար էլ զօրծ զրեց 6 օր: Նա քանի՞ օր էր արձակուրդ ստացել:

98. Երեխան ունէր մի երկու-շահանոց և մի 3-կոպէկանոց. նա իւր հօրիցը խնդրեց էլի մի կոպէկ և այդփողերովը առաւ եր-կու ակտրակ հաւասար գնանի: Ո՞րքան արժէր ամեն մի տետրակը:

99. Չորս ձի տարան պայտեղու (նախնելու), նոցանից երկու ձիու երեք-երեք ոտը պայտեղին, իսկ մնացածների չորս — չորս ոտը: Բնդամենը քանի՞ պայտ գնաց:

100. Երկու շաբաթուայ մէջ բայի կիւրակի օրերը, երեք օր տօն էր, մնացած օրերումը աշակերտը թարգմանութիւն արաւ, իւրաքանչիւր 3 օրումը 4 երես: Նա քանի՞ երես կա-րողացաւ թարգմանել այդ երկու շաբաթումը:

101. Երկու պատուհանում 14 ապակի կար, բայց նոցա-նից մէկում երկու ապակի աւելի էր միւսից: Ամեն—մի պա-տուհանում քանի՞ ապակի կար:

102. Ղասաթան մէջ 14 աշակերտ կար, մի աշակերտ էլ նոր մատաւ. այդ բոլորը ակաւարեցին 5 նստարանի վերայ: Իւրաքանչիւր նստարանի վերայ քանի՞ աշակերտ նստեց:

103. Երկու սայլապան ապրանք էին տանում քաղաք. նո-ցանից միւսը ունէր 3 սայլ, ամեն-մէկումը լծած էր 3 ձի. միւսը ունէր նոյնպէս 3 սայլ, բայց ամեն-մէկումը լծած էր երկու ձի: Բնդամենը քանի՞ ձի էր լծած:

104. Մի կին 13 միտալ թել առաւ, ամեն-մի լոտը 3 կո-պէկով և տուեց երեք-շահանոց, Նա քանի՞ կոպէկ պէտք է չկա ստանար:

105. Խոհանոցի ապիառը տանում էր 15 վեղրօ ջուր. նո-

բա մէջը արդէն կար 3 վերջոյ: Տրբերը քանի՞ անգամ պէտք է 2 վերջոյ ջուր անէր, որ տակաւը լցվէր:

106. Աշակերտը 15 երեսից արտագրել էր 7 երես և մնացածը կամենում էր արտագրել 2 ժամումը: Եւրաքանչիւր ժամումը որքան պէտք է արտագրէր:

107. Երեսիսային 15 կուպէկ տուին, որ խնձոր առնի, բայց առնելիս մի կուպէկ պակասեց, այդ պատճառով միայն 7 խնձոր առաւ: Նա քանի՞ կուպէկ յետ բերեց:

108. Նա ունեւ 2 հատ երեք-կուպէկանոց և 2 հատ 5-կուպէկանոց: Այդ բոլորը քանի՞ կուպէկ է անում:

109. Երեսիսան 16 սալոր ունէր. զոցանից նա 5 ը կերաւ, 2-ը անպիտան էին, դէն գցեց, իսկ մնացածը հաւասար բաժանեց 3 ընկերին: Եւրաքանչիւր ընկերը քանի՞ սալոր ստացաւ:

110. Մրդավաճառը 16 դեղձ գնեց, զոյգը մի կուպէկով, իսկ ինքը վաճառեց ամեն-մի 4 հատը 3 կուպէկով: Նա ընդամենը որքան աշխատեց:

111. Աշակերտը 16 քարէգրիչ առաւ. իւրաքանչիւր 4 հատը 3 կուպէկով, ինքը վաճառողը 8 հատին տուել էր 5 կուպէկ: Նա որքան աշխատեց դորանում:

112. Պղնձէ լարի արշնը արժէր 16 կուպէկ. վանդակի կարկատելու համար արհեստաւորը դրո՞ զրեց այդ լարից 9 վերջոյ, շինելու վարձ էլ ստացաւ 6 կուպէկ: Վանդակի կարկատանը որքան նստեց:

113. Մի երեսիսայ 12 զրիչ առաւ, իսկ միւսը 16 և երկրորդը իւր գրիչներին երկու կուպէկ աւելի տուեց առաջնից: Նոցանից իւրաքանչիւրը որքան տուեց իւր գրիչներին:

114. Նա ունեւ 3 հատ 5-կուպէկանոց և 2 հատ մի-կուպէկանոց. այդ բոլոր փողովը գնեցի 3 խնձոր, ամեն-մինը 3 կուպէկով և տանձեր, ամեն-մինը 2 կուպէկով: Նա քանի՞ տանձ գնեցի:

115. Աշակերտը 17 թերթ թղթից տետրակներ կարեց, որոնց մի հատը 5 թերթից էր. իսկ մնացածների ամեն-մինը 3 թերթից: Ընդամենը քանի՞ տետրակ դուրս եկաւ:

116. Աշակերտը 17 կուպէկ ունէր. նա կամենում էր առնել 3 քարէգրիչ, մինը 3 կուպէկով և 3 մատիտ մինը 4 կուպէկով: Որքան փող կպակասէր դորա համար:

117. Աղախնին տուին մի հատ երկու-շահանոց, մի հատ 5-կուպէկանոց և մի հատ 3-կուպէկանոց, որ 6 տանձ առնի. նա ամեն-մի տանձին տուեց 3 կուպէկ: Որքան փող յետ բերեց:

118. Երեսիսան 18 ծիրան ունէր, զոցանից մի քանի հատ կերաւ. իսկ մնացածը հաւասար բաժանեց իւր 4 ընկերին և ամեն-մէկին ընկաւ 3 ծիրան: Ինքը քանի՞ հատ կերաւ:

119. Գիւղացի կինը գործեց 9 զոյգ գուլթայ. օրէնը մի հատ: Նա քանի՞ շաբաթում և օրում գործեց գուլթաները:

120. Եղբայրը 18 կուպէկով առաւ 3 նուռ, իսկ քոյրը 12 կուպէկով առաւ 6 խնձոր. յետոյ քոյրը խնդրեց եղբորից, որ մի նուռ փոխի խնձորների հետ: Նա քանի՞ խնձոր պէտք է տար եղբորը մի նուռ փոխարէն:

121. Գիւղացին գնեց 3 սաժէն թոկ, արշնը 2 կուպէկով: Նա որքան տուեց թոկին:

122. Իմ ծանօթի դահլիճումը դարսած էր 12 աթոռ, զրասնեակումը 3 անգամ դորանից պակաս, իսկ ննջարանումը 6 անգամ դորանից պակաս: Նորա տանը քանի՞ աթոռ կար:

123. Մի երեսիսայ առաւ 2 խնձոր և 3 տանձ և այդ բոլորին տուեց 16 կուպէկ, իսկ միւսը միւսնոյն խնձորիցը առաւ 3 հատ և տանձիցը նոյնպէս 3 հատ և տուեց 18 կուպէկ: Ամեն մի խնձորը և տանձը որքան արժէր:

124. Երկու սննեակումը դարսած էր 18 աթոռ, միայն դահլիճումը երկու անգամ աւելի էր քան զրասնեակումը: Ամեն-մի սննեակումը քանի՞ աթոռ կար:

125. Տանտիկինը դիւթին ու կէս ափսէ ունէր. զոցանից 7-ը կտորվեց: Նա քանի՞ ափսէ պէտք է առնէր, որ մի դիւթինը լրանար:

126. Մի կին 19 կուպէկ ունէր. եկեղեցուցը դուրս գալիս նա ամեն մի աղքատի տուեց 2 կուպէկ. իսկ վերջինին տուեց

մնացած մի կոպէկը: Նա քանի՞ աղքատի փող բաժանեց:

127. Այգեպանը թոյլ տուեց մի քանի երեխայի չորս-չորս վարունկ քաղել: Նոքա քաղեցին 19 վարունկ և տեսան որ 3 հատ աւելի են քաղել: Վանի՞ երեխայ էին:

128. Մեծ եղբօր բարձրութիւնը 1 արշին և 3 վերշոկ էր, իսկ փոքրը նորանից 5 վերշոկ ցածր էր: Որքան էր փոքր եղբօր բարձրութիւնը:

129. Իմ զրպանումը մի քանի կոպէկ կայ. եթէ այնտեղ զնեմ էլի այնքան կոպէկ, ինչքան որ կայ և դարձեալ 5 կոպէկ, այն ժամանակը կդառնայ 19 կոպէկ: Վանի՞ կոպէկ կայ զըրպանումն:

130. Մրդավաճառի մի թաբախումը 10 խնձոր կար, իսկ միւսումը 9-ը. նա երկրորդ թաբախումը էլի զրեց մի խնձոր և բոլորը վաճառեց՝ տասը 5 կոպէկով: Նա որքան փող ստացաւ:

131. Նրեխան 2 հատ երկու-շահանոց ունէր. դոցանով նա առաւ 4 քարէղրիչ, մինը 2 կոպէկով և 4 մատիտ, մինը 3 կոպէկով: Նորա մօտ որքան փող մնաց:

132. Տանտիկինը 3 հաւ ունէր, նոցանից մինը հանեց 10 ձուտ, երկրորդը դորանից չորսը պակաս, իսկ երրորդը երկրորդից 2-ը պակաս: Ընդամենը քանի՞ ձուտ ունէր տանտիկինը:

133. Մեծ եղբայրը 20 տօրեկան էր, ամենից փոքր քոյրը նորանից 5 անգամ փոքր էր, իսկ միջնակ քոյրը 3 անգամ մեծ էր. փոքրիցը: Միջնակ քոյրը եղբօրիցը քանի՞ տարով էր փոքր:

134. Մի մարդ 4 մանէթ փող ուղարկեց փոստայով. դորա համար նա պէտք է քաշի փող տար 10 կոպէկ, տոմսակի փող 5 կոպէկ և իւրաքանչիւր մանէթի ապահովութեան փող 1 կոպէկ: Նա տուեց մի ապաստանոց: Որքան պէտք է յետ ստանար:

235. Նրեխան իւրաքանչիւր շաբաթ իւր մօրիցը ստանում էր 20 կոպէկ և ուսումնարան գնալիս օրէնք առնում էր 3 կոպէկի հաց: Նա որքան փող յետ կզցէր 5 շաբաթումը, եթէ որ կիւրակի օրերը հաց չէր առնում:

136. Մի մարդ 4 օրդի ունէր, նա մեծ որդուն տուեց 20 կո-

պէկ և հրամայեց առնել այնքան խնձոր, որ իւրաքանչիւր փոքր եղբայրը մի խնձոր պակաս ստանայ իւր մեծիցը և որ ամենիցը փոքրին ընկնի 1 խնձոր: Վանի՞ խնձոր պէտք էր առնել և ամեն-մինը որքան կարժենար:

137. Զիւռն օրէնք տալիս են 2 դարնց զարի: Վանի՞ շաբաթ և օր կբաւականանայ նորան 2 չեովերիկ և 4 դարնց զարին:

138. Մեծ եղբօր բարձրութիւնը 1 արշին և 4 վերշոկ է, իսկ փոքրը 6 վերշոկ ցածր էր նորանից: Որքան է փոքրի բարձրութիւնը:

139. Նրեխեքը ձլորթու համար միմեանց ծայրից կապեցին երեք թօկ, որոնց մէկի երկարութիւնը 4 արշին էր, միւսինը 7 արշին, երրորդինը 3 սաժէն: Որքան դուրս եկաւ ձլորթու երկարութիւնը:

140. Մրդավաճառը ծիրան առաւ, իւրաքանչիւր 5 հատը 3 կոպէկով. իսկ ինքը վաճառում էր 4 հատը 4 կոպէկով: Նա վաճառեց 20 հատ: Որքան աշխատեց դորա մէջ:

141. Հայրը իւր որդուն 12 կակալ տուեց և խոստացաւ նորան տալ էլի այնքան անգամ 3 կակալ, որքան անգամ նա կարողանայ 12 կակալը հաւասար բաժիններ անել: Որդին էլի քանի՞ կակալ կարող է ստանալ հօրիցը:

142. Վանի՞ հաւասար կտոր կարելի է անել 18 արշին թօղը և քանի՞ արշին կլինի ամեն-մի կտորը:

143. Վանի՞ տանձ կարելի է առնել 16 կոպէկով, եթէ որ տանձերի զինը հաւասար լինի:

144. Նստարանների վերայ պէտք է տեղաւորել 20 երեխայ հաւասարապէս: Վանի՞ նստարան պէտք է լինի և իւրաքանչիւրի վերայ քանի՞ երեխայ:

145. Մի ապաստանոցը որպիսի հաւասար զրամների է հաւասար, որպիսի երկու անհաւասար զրամի, որպիսի երեք անհաւասար զրամի, որպիսի 4 անհաւասար զրամի, որպիսի 5 անհաւասարի և որպիսի 6 անհաւասարի:

146. Երկու երեխայ ձեռնափայտ առան. մէկինը երեք քառորդ արշին էր, իսկ միւսինը 14 վերշոկ: Որի փայտն էր երկայն և ո՞րքան:

147. Բազի երկարութիւնը քուչայի կողմից 16 արշին է: Այդ տարածութեան կէսը բռնում է տուենը, ութերորդ մասը նորա կողքի ղուռը, չորրորդ մասը բազի ղուռը, իսկ մնացածը՝ չափարը: Ո՞րքան է չափարի երկարութիւնը:

148. Գրբերի տակառումը կար 20 վեղրօ ջուր, որի հինգերորդ մասը նա տուեց առաջին տանը, չորրորդ մասը երկրորդ տանը, երրորդ տանը տուեց 6 վեղրօ, իսկ մնացածը տուեց չորրորդ տանը: Նա ո՞րքան ջուր տուեց վերջին տանը:

149. Ուսումնարանումը իւրաքանչիւր երեխայի ճաշի ժամանակը տալիս են մի-երրորդ գրվանքայ հաց: Քանի՞ երեխայ կային սեղան նստած, եթէ որ ընդամենը դարսած էր 6 գրվանքայ հաց:

150. Վարժապետը աշակերտներին 18 թերթ թուղթ բաժանեց հետեւեալ կերպով. մէկին տուեց բոլորի վեցերորդ մասը. միւսին մնացածի հինգերորդ մասը. երրորդին մնացածի չորրորդ մասը. իսկ մնացած թուղթը բաժանեց 3 աշակերտի հաւասարապէս: Ամեն—մի աշակերտը քանի՞ թերթ ստացաւ:

151. Մի սեղանի երկարութիւնը 17 վերշոկ է, իսկ միւսինը կէս արշին: Առաջինը ո՞րքան է աւելի երկրորդից:

152. Հայրը 20 կակալ ունէր. զոցանից մի որդուն տուեց բոլոր կակալն տասերորդ մասը. միւսին տուեց մնացածի երրորդ մասը. իսկ ինչ որ մնաց, այն էլ հաւասար բաժանեց երեք աղջկանը: Ամեն-մէկին քանի՞ կակալ ընկաւ:

153. Վարժապետը աշակերտին մի քանի թերթ թուղթ տուեց և հրամայեց նորա կէսը տալ իւր ընկերին, իսկ մնացածից շինել երկու տետրակ, ամեն—միին 4 թերթից: Աշակերտը քանի՞ թերթ ստացաւ:

ԽՆԴԻՐՆԵՐ

21—30

154. Խոհարարը ունէր երկու անգամ 10 ձու և էլի մի ձու. զոցանից առաջին օրը նա գործ դրեց 8 հատ, իսկ երկրորդ օրը 9 հատ: Քանի՞ ձու մնաց:

155. Շանապարհորդը 3 շաբաթ ման եկաւ. 8 օր ման—եկաւ շողենաւով, 7 օր երկաթուղով, իսկ մնացածը ձիով: Նա քանի՞ օր մանեկաւ ձիով:

156. Թոկի երկարութիւնը 7 սաժէն էր. նորանից 5 արշին կտրեցին ձին կապելու համար, 8 արշին ձլորթու համար, իսկ մնացածը բազումը կապեցին լուացք փռելու համար: Լուացքի թոկի երկարութիւնը ո՞րքան էր:

157. Այգիումը 21 ծառ կար. նոցանից որքան կեռասի էին, այնքան էլ տանձի էին. մի քանիսն էլ խնձորի և 4 հատ ծիրանի: Քանի՞ ծառ կար իւրաքանչիւր տեսակից:

158. Դասատանը 21 աշակերտ կար, մինն էլ նոր մտաւ. նոքա հաւասարապէս տեղաւորվեցան 11 նստարանի վերայ: Ամեն-մի նստարանի վերայ քանի՞ աշակերտ նստեց:

159. Մրդավաճառը մի թաբախում ունէր 12 խնձոր, իսկ միւսում 10-ը: Նա բոլոր խնձորները վաճառեց՝ ամեն մի զոյղը 1 կոպէկով: Նա բոլոր խնձորները ո՞րքանով վաճառեց:

160. Մի մարդ ունէր երկու չեովերիկ և 6 դարնց դարի. որից նա իւր ձիուն օրէնը տալիս էր 3 դարնց: Նորա մօտ ո՞րքան դարի կմնար 6 օրից յետոյ:

161. Քանի կոպէկ որ ունեմ, եթէ այնքան էլ աւելացնեմ և բացի դորանից էլի ստանամ 8 կոպէկ. այն ժամանակը կու նենամ 22 կոպէկ: Նա ո՞րքան փող ունեմ:

162. Ծառան առաջի երկու ամսումը ստացաւ հինգ-հինգ



մանէթ, իսկ վերջի երկու ամսումը վեց-վեց մանէթ, մի մանէթ էլ ընծայ ստացաւ: Նա որքան փող վերցրեց այդ չորս ամսումը:

163. Գրհորի խորութիւնը 7 սաժէն և 2 արշին էր, նորանից ջուր հանելու համար երեք թոկ կապեցին միմեանց ծայրից. մի թոկի երկարութիւնը 8 արշին էր, միւսինը 7 արշին, իսկ երրորդինը 6 արշին: Ելի որքան թոկ էր պահատում:

164. Գիւղեցը մինչև քաղաքը 23 վերստ էր: Գիւղացին 2 ժամումը ոտով գնաց 8 վերստ, իսկ մնացած ճանապարհը գնաց սայլով. ամեն մի ժամումը 5 վերստ: Նա քանի՞ ժամ էր ճանապարհ գնում:

165. Հայրը որդուն տուեց 8 հատ 3-կոպէկանոց և հրամայեց առնել մի քանի մատիտ. ամեն մինը 4 կոպէկով: Վանի՞ մատիտ առաւ որդին, եթէ որ 4 կոպէկ էլ յետ բերեց:

166. Երեխան 24 կախալ ունէր, զոցանից նա երեք ընկերին տուեց երեք երեք հատ, իսկ մնացածը հաւասար բաժանեց միւս երեք ընկերին: Վերջններից ամեն-մինը որքան ստացաւ:

167. Հայրը իւր 4 որդուն տուեց 24 տանձ և հրամայեց այնպէս բաժանել, որ իւրաքանչիւր մեծը իւր փոքրիցը 2 տանձ աւելի վերցնի: Ամեն-մէկին քանի՞ տանձ կընկներ:

168. Երեք աշակերտ միասին առան 24 զրիչ. նոցանից մինը դորա համար տուեց 3 կոպէկ, միւսը 4 կոպէկ, իսկ երրորդը 5 կոպէկ: Ամեն-մինը քանի՞ զրիչ պէտք է վերցնի:

169. Մի մարդ ունէր 3 չեովերիկ դարի. որ նորա ձիաները կերան 4 օրումը, իւրաքանչիւր 3 ձին օրէնը ուտում էր 2 զարնց: Ընդամենը քանի՞ ձի ունէր նա:

170. Ոսկերիչը 8 լոտ ոսկուց շինեց մի քանի մատանի. ամեն մէկի վերայ գնաց 6 մսխալ ոսկի և նա իւրաքանչիւր մատանին վաճառեց 5 մանէթով: Նա ընդամենը որքան փող ստացաւ:

171. Մշակը իւրաքանչիւր երեք օրում աշխատում է 2 մանէթ, իսկ 6 օրում մսխում է երեք մանէթ: Նա որքան փող յետ կըցի 24 օրում:

172. Վաստատանը 5 նստարան կայ, երեք նստարաններից

ամեն-մէկի վերայ կայ 7 աշակերտ. մէկի վերայ էլ կայ 3 աշակերտ. իսկ վերջինի վերայ 1 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այդ վաստատանը:

173. Մի աշակերտ ունէր 5 հատ 5-կոպէկանոց, իսկ միւսը 8 հատ 3-կոպէկանոց: Նոցանից ով աւելի ունէր և որքան:

174. Մի տեղ կային 25 հոգի տղամարդիք, կանայք և երեխայք: Տղամարդիքը 2 անգամ աւելի էին կանանցից, իսկ երեխայքը 10 հոգի էին: Վանի՞ տղամարդ և քանի՞ կին կար այնտեղ:

175. Չորս երեխայի համար շոր կարեցին: Իւրաքանչիւրի վարտիկի համար գնաց 1 արշին մահուտ, սերտուկի և ժիլիաի համար 2 արշին. վերարկուի համար 3 արշին. 1 արշին էլ գնաց բոլորի գոտակների համար: Ընդամենը քանի՞ արշին մահուտ գնաց:

176. Հայրը իւր երեք որդիներանցը տուեց 25 կոպէկ և հրամայեց բաժանել իւրեանց մէջ այնպէս, որ փոքրը 5 կոպէկ պակաս ստանայ միջնակից, իսկ միջնակը և մեծը հաւասար ստանան: Ամեն մինը քանի՞ կոպէկ ստացաւ:

177. Երկու զրազիր 25 կոպէկով մի թուղթ արտադրեցին: Նոցանից մինը արտադրեց 2 ժամ, իսկ միւսը 3 ժամ: Իւրաքանչիւրը որքան փող պէտք է վերցնի:

178. Հիւանդին պատուիրեցին, որ 26 մանէթի բազկաթոռներ շինի: Գոցա համար նա զօրծ զրեց 14 մանէթի փայտ, 4 մանէթի ներկ և ամեն-մի բազկաթոռի շինելու վարձ վերցրեց 2 մանէթ: Ընդամենը քանի՞ բազկաթոռ շինեց:

179. Երկու երեխայ միասին առան 26 հատ ծիրան. մինը տուեց 5 կոպէկ, իսկ միւսը 8 կոպէկ: Ամեն-մէկը քանի՞ հատ պէտք է վերցնի իւր տուած փողի համար:

180. Մի մարդ ունէր երկու տեսակ ալիւր. առաջին տեսակից 9 զրվանքայ, զրվանքան 2-կոպէկանոց, երկրորդ տեսակից 4 զրվանքայ, զրվանքան 1-կոպէկանոց. նա այդ ալիւրները խառնեց միմեանց հետ: Խառնած ալիւրի ամեն — մի զրվանքան

հրքանով պէտք է վաճառի, որ բոլորի մէջը աշխատի 4 կոպէկ:

181. Դասատանը 26 աշակերտ կար, որոնք տեղաւորված էին 6 նստարանի վերայ այնպէս, որ առաջինի և երկրորդի վերայ իրար հաւասար, իսկ մնացած չորսի վերայ նոյնպէս իրար հաւասար: Իւրաքանչիւր նստարանի վերայ քանի՞ աշակերտ կար:

182. Մի գիւղացի տուեց միւսին 9 տոպրակ ալիւր. ամեն մի տոպրակի ալիւրը արժէր 3 մանէթ, իսկ միւսը զորա փոխաբէն տուեց 13 տոպրակ դարի, որի ամեն-մի տոպրակը արժէր 2 մանէթ: Երկրորդ գիւղացին էլ ինքն պէտքէ վճարի առաջինին:

183. Առաջին դասատանը 5 նստարան կար, իւրաքանչիւրի վերայ 5 աշակերտ, իսկ երկրորդումը 11 նստարան, իւրաքանչիւրի վերայ 2 աշակերտ: Վանութիւնից յետոյ առաջին դասատանը մնացին 4 աշակերտ, իսկ երկրորդումը 6 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այժմ՝ երկրորդ դասատանը:

184. Մի մարդ ունէր 27 ձի. օրէնը ինքն դարի էր գնում նոցա համար, եթէ որ նա իւրաքանչիւր 9 ձիուն օրէնը տալիս էր 8 դարնց:

185. Մի մարդ առաւօտը 8 ժամին փոստայով ճանապարհ ընկաւ մի իջեանից և առաջին ժամումը գնաց 9 վերստ, իսկ մնացած ճանապարհը նա վերջացրեց, իւրաքանչիւր ժամում՝ գնալով վեց վերստ: Նա քանի՞ ժամումը հասաւ միւս իջեանը, եթէ որ երկու իջեանների հեռաւորութիւնը 27 վերստ էր:

186. Օգտակին 7 աղջիկ ձու էին խաղում, նոցանից ամեն մինը ունէր 4 ձու: Խաղալիս երեք ձու կտորվեց և երկու աղջիկ իւրեանց ձուաները տանուէլ տուին, տանողների ձուաներն էլ հաւասար դարձան: Տանողներից իւրաքանչիւրը քանի՞ ձու ունեցաւ:

187. Վասն և ութ չեովերիկ ալիւրը ածած էր հաւասար տոպրակների մէջ. ամեն-մէկում 4 չեովերիկ և իւրաքանչիւր տոպրակի ալիւրը արժէր 3 մանէթ: Որքան արժէր բոլոր ալիւրը:

188. Տանտիկինը երկու զիւժին և 4 հատ գղալ ունէր: Նա հիւրերի համար սեղաններ պատրաստեց և ամեն—մէկի վերայ

դրեց 7 գղալ: Նա քանի՞ սեղան էր պատրաստել:

189. Մի տեղ թնդանութիւնը կային, դոցա բերիւու համար լծեցին 14 զոյգ ձի, ամեն-մի թնդանութի համար 4 ձի: Վանի՞ թնդանութ էր:

190. Մի աղջիկ 7 թերթ թուղթ չորստակեց և տետրակներ կարեց, տետրակի 2 թուղթը կազմ դառաւ: Այդ տետրակի մէջ նա դուրս դրեց 4 տպած երես հայերէնից. ամեն-մի տպած երեսի համար գնաց 3 թուղթ. յետոյ դրեց 6 խնդիր ամեն-մինը մի թղթի վերայ. իսկ մնացած թղթի վերայ նա դրեց 4 հայերէն դաս: Ամեն-մի դասը գրելու համար քանի՞ երես թուղթ էր գնում:

191. Փետրվար ամսին 9 օր ցուրտ էր, 8 օր տաք ու պարզ, իսկ մնացած օրերը անձրև էր գալի: Վանի՞ օր էր անձրև գալի:

192. Երեք հիւսն իւրեանց աշխատանքի համար միասին ստացան 29 մանէթ. որից մի մանէթ մսխեցին, իսկ մնացածը իւրեանց մէջը բաժանեցին: Ամեն-մինը ինքն ստացաւ, եթէ որ մինը բանել էր 3 օր, միւսը 5 օր, իսկ երրորդը 6 օր:

193. Պատիցը պատկերներ էին քաշարած՝ 3 կարգ չորս-չորս հատ, 3 կարգ երեք-երեք հատ, 3 կարգ երկու-երկու հատ. բացի դրանից վերէն և ներքէն մի-մի հատ: Ընդամենը քանի՞ պատկեր էր քաշարած:

194. Տանը 29 աթու կար. դոցանից ննջարանումը 5 հատ էր. իսկ մնացածը դարսած էր դահլիճումը և գրասենեակումը և դահլիճի աթուները երկու անգամ աւելի էին գրասենեակի աթուներից: Ամեն-մի սենեակումը քանի՞ աթու կար:

195. Աշակերտը 8 մատիտ գնեց և վճարեց երկու շահանոցներ. նա ամեն-մի երկու-շահանոցից յետ էր ստանում 2 կոպէկ: Ամեն-մի մատիտին նա ինքն փող տուեց, եթէ որ ընդամենը յետ ստացաւ 6 կոպէկ:

196. Գիւղացին մշակ վարձեց ամսէնը երկու մանէթով. այդ մշակը մասը-մասը ստացել էր 8 մանէթ: Մի տարի և երեք ամսից յետոյ նա դուրս գնաց և իւր վարձումը ստացաւ

13 մանէթ փող և մնացածին շոր: Նորա ստացած շորը որքան արժէր:

197. Ծառի վերայ նստած էին 20 աղաւ: յետոյ էլի եկան նորանց մօտ երկու անգամ 5 աղաւ: Ներկու որսորդ միասին հրացաններ արձակեցին, 3 հատ սպանեցին և 4 անգամ ղոցա չափ վերաւորեցին: Վանի աղաւ թռաւ:

198. Հայրը իւր երեք որդուն 30 կոպէկ տուեց և հրամայեց այնպէս բաժանել, որ ամեն-մի փոքրը իւր մեծիցը 5 կոպէկ պակաս վերցնի: Իւրաքանչիւրը քանի՞ կոպէկ ստացաւ:

199. Գիւղացի կիներ երեք քթոց ձու տարաւ քաղաք վաճառելու: Երկուսի մէջը կար մի-մի դիւժին, իսկ երրորդումը կէս դիւժին: Նա վաճառեց իւրաքանչիւր 10 հատը երկու-շահով: Բոլոր ձուաները որքանով վաճառեց:

200. Մի մարդ առաւ 4 լոտ և 2 մսխալ թել, ամեն մի լոտը 6 կոպէկով, նա տուեց 2 հատ երեք-շահանոց: Որքան փող պէտք է յետ ստանար:

201. Մշակը մի ամսուայ մէջ որքան պարապ մնաց, 5 անգամ նորա չափ բանեց: Բնդամենը քանի՞ օր բանեց:

202. Ներկու երեխայ պատշգամբը չափում էին փայտերով, մէկի փայտը չորս արշն էր, միւսինը հինգ արշն էր: Առաջինը պատշգամբի մէկ ծայրից իւր փայտը դրեց երեք անգամ և իսկ երկրորդը միւս ծայրիցը իւր փայտը դրեց 2 անգամ և այդ փայտերի մէջ էլի մնաց երկու սաժէն և երկու արշն տարածութիւն: Պատշգամբի երկարութիւնը քանի՞ սաժէն էր:

203. Մանրում-ծախողը գնեց 7 մատիտ, ամեն-մինը 5 կոպէկով և էլի մի քանի հատ ուրիշ մատիտ, ամեն մինը 4 կոպէկով, իսկ ինքը վաճառեց մինը 6 կոպէկով և բոլորի մէջ աշխատեց 30 կոպէկ: Բոլորը քանի՞ մատիտ էր:

204. Հինգ-շահանոցը կամենումեմ մանրացնել: Վանի՞ հատ և ի՞նչպիսի մանր զրամներ կտան:

205. Հայրը իւր որդուն տուեց 24 կակալ և խոստացաւ տալ նորան այնքան անգամ 3 կոպէկ՝ որքան տեսակ նա կա-

րողանայ այդ կակալները հաւասար բաժանել: Որպիսի բաժիններ արաւ որդին, եթէ որ նա ստացաւ հօրիցը 24 կոպէկ:

206. Եղիումը նստած էին 30 երեխայ նստարանների վերայ հաւասարապէս: Վանի՞ նստարան կար այդիւմը և ամեն-մէկի վերայ քանի՞ երեխայ էր նստած:

207. Պէտք է 28 ծառ տնկել հաւասար խմբերով: Վանի՞ խումբը զուրս կդայ և իւրաքանչիւրի մէջ քանի՞ ծառ կլինի:

207. 29 արշն թուր 4 կտոր արին: Իւրաքանչիւր կտորը քանի՞ արշն զուրս եկաւ:

208. Խոհարարը 30 կոպէկ ունէր ձեռքին: Եղ փողի կէսը նա տուեց վարունկի, որի 10 հատը արժէր 5 կոպէկ, մնացած փողի երրորդ մասը տուեց զեանախնձորի, իսկ զորանից յետոյ մնացած փողով գնեց ձուաներ՝ ամեն-մինը 2 կոպէկով: Նա քանի՞ վարունկ առաւ և քանի՞ ձու:

209. Զինորաները 30 ձուկը բռնեցին, որոնց հինգերորդ մասը կարմրախայտ էր, մնացածի չորրորդ մասը կապոյտ էր, իսկ մնացածի կէսը մուրճայ էր և կէսը փիչխուլ: Իւրաքանչիւր տեսակից քանի՞ ձուկն էին բռնել:

210. Վեց երեխայ միասին 30 տանձ առան և բաժանեցին այնպէս, որ մինը վերցրեց բոլոր տանձի երրորդ մասը, միւսը հինգերորդ մասը, երրորդը վեցերորդ մասը, իսկ մնացածը միւս երեխերքը հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Իւրաքանչիւրը քանի՞ տանձ ստացաւ:

211. Մի մարդ կէս դիւժին սեղանի գդալ առաւ և կէս դիւժին թէյի զգալ, ամեն մի սեղանի գդալին տուեց 3 մանէթ, իսկ ամեն-մի թէյի գդալին 2 մանէթ: Բոլոր գդալները որքան արժէին:

212. Մի երեխայ Յունիս ամսի հինգերորդ մասը մնաց ամարանոցում ծանօթների մօտ, վեցերորդ մասը մնաց քաղաքում, տասներորդ մասը ճանապարհին էր, իսկ մնացած ժամանակը անցկացրեց գիւղումը իւր ծնողների մօտ: Նա քանի՞ օր մնաց իւր ծնողների մօտ:

ԽՆԴԻՐՆԵՐ

31—40

213. Մի երեխայ վեր եկաւ 2 շահի միւսը 3 հատ 3 կոպէկանոց, իսկ երրորդը 6 հատ 2-կոպէկանոց: Եւ յո փողերով նոքա միասին 9 խնձոր առան, ամեն-մինը 3 կոպէկով, իսկ մնացած փողը բաժանեցին աղքատներին և ամեն-մի աղքատին ընկաւ 2 կոպէկ: Քանի՞ աղքատ էին:

214. Իմ մի զրպանումը կայ 2 հատ 3 շահանոց և 1 կոպէկ. իսկ միւսումը կայ 3 հատ երկու-շահանոց և 2 կոպէկ: Ո՞ր զրպանումն աւելի փող կայ և ո՞րքան:

215. Ղառառանը 8 նստարան կար, որոնց ամեն-մէկի վերայ սովորաբար նստում էին 4 աշակերտ. մէկ օր վեց աշակերտ հիւանդութեան պատճառով դասի չեկան: Եւ յո օրը քանի՞ աշակերտ կար դասատանը:

216. Գիւղեցը մինչև քաղաքը 32 վերստ է. գիւղացին քանի՞ ժամումը զիւղեցը կհասնի քաղաք, եթէ որ իւրաքանչիւր 5 ժամումը գնայ 20 վերստ և ճանապարհին հանգստանայ 4 ժամ:

217. Ուսումնարանի ննջարանում մահճակալները դարսած էին երկու կարգ, ամեն-մի կարգումը 16 հատ: Աւերակի օրը երեխանցից մի քանիսը տուն էին գնացել, այնպէս որ 17 մահճակալ դարդակ էին մնացել: Քանի՞ երեխայ կար պարկած այդ օրը:

218. Օճառային 32 կոպէկ տուն, որ 4 կիտրոն առնի, բայց նա առաւ 5 այնպիսի կիտրոն, որոնց ամեն-մինը երկու կոպէկ պակաս արժէր: Նա ո՞րքան փող յետ բերեց:

219. Մի աշակերտ գնեց 4 քարէզրիչ և 6 մատիտ և տուեց 32 կոպէկ, իսկ միւսը միւսնոյնցը գնեց 4 քարէզրիչ և

5 մատիտ և տուեց 28 կոպէկ: Ո՞րքան արժէր իւրաքանչիւր քարէզրիչը և մատիտը:

220. Սայլը տանիցը դուրս եկաւ առաւօտեան 10 ժամին և ամեն-մի ժամումը գնում էր 4 վերստ. երեկոյեան 6 ժամին միւսնոյն տեղից ճանապարհ ընկաւ մի մարդ, որ ամեն-մի ժամումը գնում էր 6 վերստ: Մարդը ո՞ր ժամին կհասնէր սայլին:

221. Աշակերտին պատուիրեցին, որ սովորի իւր տետրակի 3 երեսի բառերը. տետրակի ամեն-մի երեսում կար 11 բառ, դասի ժամանակը նա 7 բառ մոռացաւ: Քանի՞ բառ զիտէր նա:

222. Թոկի երկարութիւնը 11 սաժէն էր. նորանից կտրեցին 2 անգամ 6 արշին և 3 անգամ 5 արշին, իսկ մնացածիցը երեսերքը ճորթի շինեցին: Ճորթու երկարութիւնը ո՞րքան էր:

223. Պղնձգործը կամենում էր 33 զրվանքայ պղնձից շինել 11 աման, բայց յետոյ միտքը փոխեց և ամեն-մի ամանը առաջվանից 1 զրվանքայ ծանր շինեց և նորա մօտ մնաց էլի 1 զրվանքայ պղնձ: Նա քանի՞ աման շինեց:

224. Իմ երկու զրպանումը միասին կայ 33 կոպէկ. մէկի մէջ 15 կոպէկ, իսկ միւսումը 3 հատ զանազան զրամներ: Իմ միւս զրպանումը ո՞րպիսի զրամներ են:

225. Տանը 34 աթոռ կար. ղոցանից մի դիւժին դահլիճումն էր, 10 հատ սեղանատանը, իսկ մնացածը հաւասար դարսած էր ննջարանումը և զրասնետկումը: Քանի՞ աթոռ կար զրասնետկումը:

226. Ճանապարհորդը 4 ժամումը գնաց 34 վերստ. նա իւրաքանչիւր հետեւեալ ժամումը 1 վերստ աւելի էր գնում առաջուայ ժամից: Նա առաջին ժամումը քանի՞ վերստ գնաց:

227. Մի մարդ ունէր երկու տեսակ ալիւր, մի տեսակից 8 զրվանքայ, զրվանքան 3-կոպէկանոց, միւս տեսակից 9 զրվանքայ, զրվանքան 1-կոպէկանոց. նա այդ ալիւրները միասին խառնեց և վաճառեց այնպէս, որ բոլորի մէջ աշխատեց 1 կոպէկ: Խառնած ալիւրի ամեն-մի զրվանքան ո՞րքանով վաճառեց նա:

228. Երեք երեխայ փող վեր եկան և միասին տուան 34 նուռը. նոցանից մինը տուեց 6 կոպէկ, միւսը 7 կոպէկ, իսկ երրորդը 4 կոպէկ: Ամեն-մինը քանի՞ հատ պէտք է վերցնի իւր փողին:

229. Եօթը աշակերտին շաբթէնը տալիս են 35 թերթ թուղթ: Որքան թուղթ կհասնի 4 աշակերտին մի շաբաթումը:

230. Սայլը 3 ժամումը գնում է 15 վերստ: Վանի՞ ժամանակումը նա քաղաք կհասնի, եթէ որ քաղաքի հեռավորութիւնը 35 վերստ է և նա ճանապարհին հանգստանալու է 4 ժամ:

231. Երեք հղբայր իւրեանց հօրիցը 35 կոպէկ ստացան և բաժանեցին իւրեանց մէջ այնպէս, որ մեծ հղբայրը 2 անգամ աւելի վերցրեց միջնակից, իսկ միջնակը 2 անգամ աւելի փոքրիցը: Ամեն-մինը քանի՞ կոպէկ ստացաւ:

232. Փոստայի իջեանում 36 ձի կար. դոցանից 2 կառքում լծեցին չորս-չորս ձի. մի ձիով նամակ ուղարկեցին, 3 ձի լծեցին սուրհանդակի համար, իսկ մնացածը լծեցին 6 սայլում: Իւրաքանչիւր սայլում քանի՞ ձի լծեցին:

233. Օր ու կէսումը երկաթուղու գնացքը մի քաղաքից հասաւ միւս քաղաքը, ամեն-մի իջեանը հասնում էր 3 ժամումը: Վանի՞ իջեան կար մէկ քաղաքիցը մինչև միւսը:

234. Վաստատան 6 նստարանի իւրաքանչիւրի վերայ սովորաբար նստում են 6 աշակերտ, եօթը աշակերտ հիւանդութեան պատճառով դուրս գին եկել: Վանի՞ աշակերտ էր եկել:

235. Որդին հօրիցը ստացաւ 18 հատ 2-կոպէկանոց դոցանից նա միշաբթուայ միջոցին իւրաքանչիւր օր մտնում էր 6 կոպէկ, բացի կիրակի օրից: Նորա մօտ ո՞րքան փող մնաց շաբաթուայ վերջը:

236. Առաջ ինդաստանը 12 նստարան կայ որոնց ամեն-մէկի վերայ նստում են 3 աշակերտ, իսկ երկրորդումը 9 նստարան կայ, որոնց իւրաքանչիւրի վերայ նստում են 4 աշակերտ: Ո՞ր դաստան աշակերտները աւելի են:

237. Տանտիկինը մի աղախին վարձեց ամսէնը 5 մանէթով: Եօթը ամսից յետոյ աղախինը ստացաւ իւր վարձը և մի մանէթ էլ պարգև: Այդ փողերիցը 18 մանէթ տուեց շորի, իսկ մնացած փողովը սենեակ վարձեց ամսէնը 3 մանէթով: Վանի՞ ամսուայ սենեակի վարձ ունէր նա:

238. Մի աղջիկ եկեղեցուցը դուրս գալով՝ հաշուեց որ իւր ձեռքի փողը կարող է տալ 12 աղքատի իւրաքանչիւրին 3 կոպէկ. բայց տեսնելով, որ միայն 9 աղքատ կայ եկեղեցու դռանը. նա բոլոր փողերը բաժանեց նոցա: Ամեն-մէկին քանի՞ կոպէկ ընկաւ:

239. Վաճառականը երկու տեսակ թէյ ունէր. առաջին տեսակից 4 զրվանքայ. զրվանքան 4-մանէթանոց, երկրորդ տեսակից 5 զրվանքայ. զրվանքան 3-մանէթանոց: Նոյն այդ բոլոր թէյը խառնելով կամենում է այնպէս վաճառել, որ բոլորի մէջը աշխատի 5 մանէթ: Որքանով պէտք է վաճառի խառնածի զրվանքան:

240. Չորս երեխայ միասին 36 տանձ առան: Ամեն-մէկը քանի՞ տանձ պէտք է վերցնի, եթէ որ առաջինը տուեց 3 կոպէկ, միւսը 4 կոպէկ, երրորդը 5 կոպէկ, իսկ չորրորդը 6 կոպէկ:

241. Տանտիկինը ունէր 3 զիւժին և 1 հատ ափսէ. նոցանից 8 հատ կտորվեց: Վանի՞ զիւժին և քանի՞ հատ մնաց:

242. 37 աշակերտ խաղ էին անում. նոքա երկու խումբ բաժանվեցին. այնպէս որ մի խմբումը 13 հօգի աւելի էր միւս խմբից: Վանի՞ աշակերտ կար ամեն — մի խմբումը:

243. Պատի վերայ քաշ էր արած 37 պատկեր 5 կարգ. այնպէս որ 2 մեծ կարգումը հաւասար էին, իսկ 3 փոքր կարգումը նոյնպէս հաւասար: Վանի՞ պատկեր կար իւրաքանչիւր մեծ և փոքր կարգումը:

244. Մի կտոր քաթանից կարեցին 9 շապիկ, որոնց իւրաքանչիւրի համար գնաց 3 արշին և երկու սփռոց, որոնց ամեն-մէկի համար գնաց 5 արշին և էլի աւելացաւ 1 արշին: Բոլոր կտորը քանի՞ արշին էր:

245. Պործարանումը բանում էին 17 տղամարդ և 21 կին հաւասար վարձով . բայց կանայքը մի շտաբումը 16 մանէթ աւելի էին ստանում տղամարդերից: Վոլորը քանի՞ բանւոր էին և ամեն-մինը շաբթէնը որքան էր ստանում:

246. Հաւանոցումը 19 զոյդ հաւ կար . նոցանից 9 հաս կորել էր: Վանի՞ հատ էր մնացել:

247. Աշակերտը արձակուրդ առաւ 5 շաբաթ և չորս օր . դորանից 6 օր նա մնաց քաղաքումը բիձու մօտ և 27 օր զիւ-ղումը իւր ծնողների մօտ . մնացած օրերը անցկացան դնալու և քաղաք վերադառնալու համար: Վանի՞ օրում նա զիւղիցը հասաւ քաղաք:

248. Երկու եղբայր միասին 39 կոպէկ ունէին . նոցանից ամեն-մինը առաւ 3 տանձ և այն ժամանակը մէկի մօտ մնաց 9 կոպէկ, իսկ միւսի մօտ 12 կոպէկ: Ամեն-մէկը որքան փող ու-նէր և առնձի 10 հատը որքան արժէր:

249. Մշակների համար 3 օրումը գնում է 39 զրվանքայ հաց: Որքան հաց կերթայ 2 օրումը:

250. Աշակերտը ունէր 4 հատ երկու-շահանոց . դոցանով նա առաւ 3 մատիտ, մինը 5 կոպէկով, իսկ մնացած փողովը առաւ 5 զիւժին զրիչ: Վրիժների զիւժինը որքան արժէր:

251. Տանտիկինը 40 արծաթէ զդալ ունէր . նոցանից զիւ-ժին ու կէսը սեղանի զդալ էր, մի զիւժինը թէյի, մնացածը մուրաբի. Որքան արժէին մուրաբի զդալները, եթէ որ ամեն-մէկին տուել էր 4 մանէթ:

252. Երկու եղբօր բարձրութիւնը միասին երկու ու կէս արշին էր, բայց մեծ եղբայրը 12 վերշօկ բարձր էր փոքրից: Ամեն-մէկի բարձրութիւնը որքան էր:

253. Վաճառականը մատիտներ առաւ, իւրաքանչիւր 4 հատը 20 կոպէկով . իսկ ինքը վաճառեց իւրաքանչիւր 5 հատը 35 կոպէկով և բոլորի մէջ աշխատեց 40 կոպէկ: Նա քանի՞ մատիտ էր առել:

253. Մի մարդ պէտքէ ճանապարհորդութիւն անէր 10 օր .

ամեն մի օրուայ ծախք նա վերցրեց 4 մանէթ, բայց առաջին 4 օրումը մնիսեց հօթը-հօթը մանէթ: Իւրաքանչիւր մնացած օ-րումը նա որքան պէտք է մնի, որ փողը բաւական լինի:

254. Պղնձէ լարի երկարութիւնը 3 ֆուտ և 4 զիւլմ էր նորանից կտրեցին 8 զիւլմ, իսկ մնացածիցը շինեցին շղթայ, որի ամեն-մի օղի համար դնաց 4 զիւլմ: Եղթան քանի՞ օղից էր բաղկացած:

255. Վիւղացին 8 տուրակ ալիւր ունէր, իւրաքանչիւրի մէջ 5 չեովբերիկ . դորան տուին 10 մանէթ, բայց նա չհամա-ձայնեց և տարաւ քաղաք, այնտեղ վաճառեց չեովբերտը 3 մա-նէթով, քաղաք տանելու համար 2 մանէթ էլ ծախս արաւ: Նա որքան աւելի օգուտ ստացաւ:

256. Մի երեխայ ունէր 5 կիտրոն, որ արժէր 40 կոպէկ, իսկ միւսը ունէր 10 խնձոր, որ արժէր 40 կոպէկ: Երկրորդ երեխան առաջինին տուեց 6 խնձոր: Նա քանի՞ կիտրոն պէտքէ ստանար դորա փոխարէն:

257. Մի մարդ երկու տեսակ զինի ունէր . առաջին տեսա-կիցը 8 շեշ, ամեն-մի շեշը 3 մանէթանոց . երկրորդիցը 2-շեշ ամեն-մի շեշը 8 մանէթանոց: Նա այդ զինիքը խառնեց մի-մեանց հետ: Որքան արժէր խառնած զինու շեշը:

258. Երեք երեխայ միասին առան 40 հատ սերդեւիլ . նո-ցանից մինը տուեց 8 կոպէկ, իսկ միւսները վեց-վեց կոպէկ: Իւ-րաքանչիւրը որքան սերդեւիլ պէտք է վերցնէր:

259. Վառասուն վեղորօանոց տակառը 3 խողովակ ունէր . մի խողովակից մի բոպէտում ներս էր թափվում 10 վեղրօ ջուր, միւսից 12 վեղրօ, իսկ երկրորդիցը մի բոպէտում դուրս էր թափ-վում 14 վեղրօ: Ջուր ածելու ժամանակը մոռացան երրորդ խողովակը փակելու: Վանի՞ բոպէտում տակառը լցվեց:

260. Մի մարդ 32 կոպէկ ունէր . նա կամենում էր այդ փողը հաւասար բաժանել աղքատներին: Վանի՞ աղքատի կը հասնէր և ամեն-մէկին քանի՞ կոպէկ:

261. Թուկի երկարութիւնը 39 արշին էր և բաղկացաց էր 4

զանազան կտորից: Իւրաքանչիւր կտորի երկարութիւնը ո՞րքան էր:

262. Մի քանի երեկայ 40 խնձոր քաղիցին և հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Քանի՞ երեկայ էին և ամեն-մէկին քանի՞ խնձոր ընկաւ:

263. Վաճառականը ալիւր քաշելու համար ունի միայն 4 քար, այն է 1-փուտանոց, 3-փուտանոց, 9-փուտանոց և 27 փուտանոց: Նա ի՞նչպէս կարող է քաշել միանգամից ամբողջ փուտները սկսած մէկից մինչև 40 ը:

264. Այգիումը դրած էր 40 վեղրօանոց թերաւ տակաւ, երբ այգեպանը նորանից վերցրեց 12 վեղրօ ջուր, այն ժամանակը տակառումը մնաց ուղիղ իւր կէտը: Տակառումը ո՞րքան ջուր մնաց:

265. Հայրը իւր 4 երեխանց համար առաւ մի ամբողջ և մի քառորդ զրկանքայ կակալ և հրամայեց, որ հաւասար բաժանեն իւրեանց մէջ: Ամեն-մէկին քանի՞ կակալ կընկնի. եթէ որ 3 կակալը քաշուժ էր մի լոտ:

266. Երկու մարդ 36 արշին թուկին միասին տուին 40 կոպէկ: Ամեն-մէկին քանի՞ արշին կհասնէր, եթէ որ երկրորդը տուել էր միայն 10 կոպէկ:

267. Տանիկիներ կէս փուտ շաքար առաւ, որի քառորդ մասը դուրս գնաց 10 օրումը: Օրէնը քանի՞ զրկանքայ շաքար էր դուրս գնում:

268. Ուսումնարանումը 40 աշակերտ կար. արձակուրդի ժամանակ նոցա ութերորդ մասը մնաց քաղաքումը, հինգերորդ մասը գնաց զիւղը, չորրորդ մասը գնաց ամարանոց. տասներորդ մասը դուրս գնաց ուսումնարանից, իսկ միւսները մնացին ուսումնարանում: Մնացողները քանի՞ հոգի էին:



ԽՆԴԻՐՆԵՐ

41—50

269. Խոհարարը զազար առաւ, մինը մի կոպէկով. նա քոլոր զազարին տուեց երկու հատ 15-կոպէկանոց, մի հատ 5-կոպէկանոց և երկու հատ 3-կոպէկանոց: Նա քանի՞ զազար առաւ:

270. Արհեստաւորը 4 կտոր պղինձ ունէր. ամեն-մի կտորը քաշում էր 5 զրկանքայ, էլի ունէր 7 ուրիշ կտոր, որոնց ամեն-մինը քաշում էր 3 զրկանքայ: Այդ բոլոր պղինձիցը նա մի ինքնաւ շինեց: Ո՞րքան պղինձ գնաց ինքնաւի համար:

271. Երկու ձմերուկ միասին քաշում էին 41 զրկանքայ, բայց մէկը միւսից ծանր էր 5 զրկանքայ: Ամեն-մի ձմերուկը ո՞րքան էր քաշում:

272. Ուսումնարանի աշակերտները գնում էին 14 կարգ բաժանած. ամեն-մի կարգումը 3 աշակերտ. նոցա հանդիպեցան միւս ուսումնարանի աշակերտները, որոնք 21 կարգ էին, ամեն-մի կարգումը 2 աշակերտ: Ո՞ր ուսումնարանի աշակերտները աւելի էին:

273. Երկու եղբօր տարիները միասին 42-է, բայց մէկը միւսիցը մեծ է 4 տարով: Ամեն-մէկը քանի՞ տարեկան է:

274. Ուսումնարանումը վեց շաբաթ արձակուրդ էր. այդ միջոցին աշակերտը 25 օր կացաւ զիւղումը, իսկ մնացած ժամանակը քաղաքումը: Քանի՞ օր մնաց քաղաքումը:

275. Մի մարդ երկու տեսակ գօրեջուր ունէր. մէկ տեսակից 4 շեշ, որի մի շեշը արժէր 6 կոպէկ. միւս տեսակից 2 շեշ, որի մի շեշը արժէր 9 կոպէկ: Նա այդ բոլորը խառնեց միմեանց հետ: Ո՞րքան կարժենայ խառնած գօրեջրի շեշը:

276. Երկու աղջիկ միասին 43 կակալ ունէին. երբ նոքա հաւասար կերան. այն ժամանակը մէկի մօտ մնաց 9

Հատ, իսկ միւսի մօտ 8 Հատ: Ամեն-մինը քանի՞ կակալ ունէր:

277. Երկու երկխայ փռռան էին թողնում. նոցանից մէկի թելը 9 սաժէն աւելի էր միւսի թելից. բայց երբ թելերը միասին կապեցին զուրս եկաւ 43 սաժէն: Ամեն-մէկի թելը որքան էր:

278. Ուստաւորը ճանապարհորդեց ամիս ու կէս. նա 15 օրում առաջին քաղաքից հասաւ երկրորդը, 17 օրումը երկրորդից հասաւ երրորդը. իսկ մնացած ժամանակում վերադարձաւ առաջին քաղաքը: Նա քանի՞ օրումը վերադարձաւ առաջին քաղաքը:

279. Քինուորը 4 փաթեթ ծխախոտ գնեց, ամեն-մի փաթեթը 11 կոպէկով. նա օրէնը քաշում էր 2 կոպէկի ծխախոտ: Նորա առած ծխախոտը քանի՞ օր բաւական կլինէր:

280. Երեք զիւղացի միասին 44 մանէթի դարի վաճառեցին. զորանից 3 չկողերով մէկինն էր, իսկ չորս-չորս չկողերով միւսներինը: Ամեն-մէկը որքան փող պէտք է վերցնէր:

281. Ուստաւորանի առաջին դասատանը 8 նստարան կար. 4 նստարանի ամեն-մէկի վերայ 6 աշակերտ կար, իսկ մնացածներին ամեն-մէկի վերայ մինը պակաս: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այդ դասատանը:

282. Գերձակը 45 արշն մահուտ ունէր, զորանից նա կտրեց 3 սերտուկ իւրաքանչիւրը 3 արշնից, 4 վերարկու իւրաքանչիւրը 4 արշնից, իսկ մնացածից կտրեց մեծ վերարկուներ, որոնց իւրաքանչիւրի համար գնաց 5 արշն: Վանի՞ մեծ վերարկու զուրս եկաւ:

283. Էնդ մշակ 3 օրումը շենեցին մի (չսփար) ցանկ, որի երկարութիւնն 45 արշն էր: Վանի՞ օրումը նոյն ցանկը կշնէին 15 մշակը:

284. Առաջին դասատանը 6 նստարան կար, իւրաքանչիւրի վերայ 4 աշակերտ, իսկ երկրորդումը 7 նստարան կար, իւրաքանչիւրի վերայ 3 աշակերտ: Երկու դասատանը միասին քանի՞ աշակերտ կար:

285. Մառային 9 շահի տուին և հրամայեցին, որ զորանով 15 խնձոր առնի. բայց նա այդ դնի խնձոր չգտաւ և առաւ 10 Հատ ուրիշ խնձոր, որոնց տասնեակը առաջիններից 8 կոպէկ աւելի արժէր: Նա որքան փող յետ բերեց:

286. Աշակերտը 3 տետրակ գնեց և տուեց երեքշահանոցներ. նորան ամեն-մի երեք-շահանոցից 4 կոպէկ յետ տուին, այնպէս որ բոլոր յետ ստացածը եղաւ 12 կոպէկ: Նա իւրաքանչիւր տետրակին որքան փող տուեց:

287. Մի մարդ 4 զրվանքայ աղ ունէր, զրվանքան 3-կոպէկանոց և էլի 5 զրվանքայ աղ, զրվանքան 6-կոպէկանոց. նա այդ աղերը խառնեց միմեանց հետ: Խառնածի զրվանքան որքանով պէտք է վաճառի, որ բոլորի մէջը աշխատի 3 կոպէկ:

288. Երկու երկխայ միասին ունէին 46 կոպէկ. բայց մէկի փողը 10 կոպէկով աւելի էր միւսի փողից: Այն երկուսն, որի փողը շատ էր՝ քանի՞ մատիտ կարող էր առնել իւր փողովը, եթէ որ մի մատիտը արժէր 4 կոպէկ:

289. Մի դասատանը 19 աշակերտ կար, իսկ միւսումը 8-ով աւելի. երկու դասատան աշակերտները գնացին զբօսնելու զոյգ-զոյգ կանգնած: Վանի՞ զոյգ զուրս եկաւ:

290. Գիւղացին 46 կոպէկ ունէր, նա այդ փողը փոխեց շահանոցների հետ և զորա համար 1 կոպէկ աւելի տուեց: Վանի՞ հատ շահանոց ստացաւ:

291. Գիւղի ուստաւորանումը սովորում են 17 աղջիկ. 4 անգամ նոցանից աւելի տղերք և 5-ով աւելի հասակաւոր մարդիք: Ընդամենը քանի՞ հոգի էին սովորում ուսումնարանումը:

292. Տանտիկինը հիւրեր ունէր. նա 6 հաւասար սեղան բացեց և բոլորի վերայ դարսեց 4 զիւժին գղալ: Ամեն-մի սեղանի վերայ քանի՞ հիւր նստեց:

293. Եղախներ ստանում էր ամսէնը 4 մանէթ. տաւրուայ ընթացքում նա ստացել էր տանտիկինից 25 մանէթ: Տարուայ վերջը էլի որքան պէտք է ստանար:

294. Աշակերտը 6 թերթ թուղթը չորստակեց և տետրակի կարեց. նա այդ տետրակի վերայ թարգմանութիւն էր անում՝ օրէնը 3 երես: Երկու շաբաթից յետոյ քանի՞ երես սպիտակ կմնար:

295. Ռասատան մէջ 29 աշակերտ կար. 19 էլ նորից մտան: Այդ բոլորին հաւասարապէս նստացրին 8 նստաքանի վերայ: Վանի՞ աշակերտ կար ամեն-մի նստարանի վերայ:

296. Մշակների համար 4 դիւթին փայտէ զղալ առան և իւրաքանչիւր 3 զղային տուին 2 կոպէկ: Բոլոր զղախներին ճրքան փող տուին:

297. Մեծպար տեւում է 6 շաբաթ և 6 օր. դորանից 6 օր աշակերտները եկեղեցի էին մանգալի 6 օր կիւրակի էր և 6 օր ազատ էին Չարչարման շաբաթը: Վանի՞ օր ուսում կար Մեծպարին:

298. Վար կրելու համար 3 անգամ կոներ առան, ամեն-մի անգամը 16 հատ և ընդին ամեն-մի սայլումը մի զոյգ: Վանի՞ սայլ քաղ կարելի էր բերել մի անգամում:

299. Ղաշի էին հրաւիրած 48 հոգի, բայց տանտիկներ ուներ միայն 3 դիւթին աման. 39 զոյգ դանտի ու պատառաքաղ և 2 դիւթին անձնուոցիկ: Նա այդ բաներիցը էլի ճրքան պէտք է ճարեր:

300. Երեք մարդ միասին 48 մանէթի մահուտ առան, նոցանից մինը վերցրեց 3 արշնի, միւսը 8 արշնի, իսկ երրորդը 5 արշնի: Ամեն-մէկը ճրքան փող պէտք է տար:

301. Ամառուայ արձակուրդը տեւեց 7 շաբաթ. աշակերտը 12 օր մնաց քաղաքումը եղբօր մօտ, 24 օր մնաց զիւղումը ծնողների մօտ և կամենում էր 11 օրից յետոյ վերադառնալ քաղաք: Նա քանի՞ օր պէտք է ձանապարհ գնար, որ իւր ժամանակին տեղ հասներ:

302. Բազի երկարութիւնը 16 սաժէն և 1 արշն էր. նորա երկարութեամբ տախտակներ դարսեցին. ամեն-մի տախտակի երկարութիւնը 7 արշն էր և իւրաքանչիւրը արժէր 2

մանէթ: Վանի՞ մանէթի տախտակ գնաց:

303. Գիւղացին 7 չեովերա դարի ցանեց և վերցրեց մէկին-եօթը. դորանից 14 չեովերա վաճառեց իւր տեղումը՝ չեովերաը 2 մանէթով, 7 չերվերա վաճառեց քաղաքումը՝ չեովերաը 3 մանէթով, իւր ձիաների համար էլ պահեց 18 չեովերա. իսկ մնացածը ցանեց միւս տարուայ համար: Նա ճրքան փող վերցրեց և նորից ճրքան դարի ցանեց:

304. Երեխային փող տուին, որ դնայ 6 խնձոր առնի, մինը՝ 5 կոպէկի և 5 տանձ, մինը՝ 4 կոպէկի, բայց նա սխալվեց և ընդհակառակը առաւ 6 տանձ և 5 խնձոր: Աճրքան փող յետ բերեց նա:

305. Երկու երեսայ միասին 50 կոպէկ ունէին. մէկը 5-կոպէկանոցներ, իսկ միւսը 2-շահանոցներ և առաջինի փողը 10 կոպէկ աւելի էր երկրորդի փողից: Ամեն—մինը քանի՞ կոպէկ ունէր:

306. Մի տեղ կային 50 հոգի. տղամարդիքը 8 էին, կանայքը 2 անգամ նւցանից աւելի, իսկ մնացածը երեխերք էին: Վանի՞ երեխերք կային:

307. Մշակների համար 50 զրվանքայ հաց առան և դորանից ընկաւ ամեն-մէկին 2 օրուայ պաշար 5 զրվանքայ: Վանի՞ մշակ էին:

308. Մի մարդ մի ոսկէ շղթայ գնեց, որ քաշում էր 5 լոտ և մի քորոց, որ քաշում էր 3 լոտ: Նա շղթային 20 մանէթ աւելի տուեց քորոցից: Իւրաքանչիւրին նա ճրքան փող տուեց:

309. Երկու դասատանը միասին 50 աշակերտ կային իւրաքանչիւրումը հաւասար, ամեն-մի նստարանի վերայ նստած էին 5 հոգի: Վանի՞ նստարան կար իւրաքանչիւր դասատանը:

310. Մի մարդ 50 կոպէկ ունէր. նա կամենում էր այդ փողերը հաւասար բաժանել աղքատներին՝ ամեն-մէկին 25 կոպէկ. բայց տեսաւ որ 3 աղքատ աւելացան, նա այդ փողերը հաւասար բաժանեց բոլորին: Ամեն-մի աղքատին ճրքան ընկաւ:

311. Մի մարդ ունէր 3 շէշ դարեջուր, շէշը 6 կոպէկանոց

և 7 շնչ ուրիշ տեսակ դարեջուր. նա այդ դարեջուրը խառնեց միմեանց հետ, բոլորը միասին վաճառեց 50 կոպեկով և մեջը աշխատեց 4 կոպեկ: Երկրորդ տեսակ դարեջուր իւրաքանչիւր շնչը ո՞րքան արժէր:

312. Վարժապետը 48 կակալ բերեց դասատուն և աւելց աշակերտներին, որ նոքա զանազան կերպի հաւասար բաժին անեն և խոստացաւ ամեն մի նոր կերպի բաժին աւելու համար 5 կակալ տայ: Աշակերտները ի՞նչպիսի բաժիններ արեցին և քանի կակալ ստացան վարժապետից:

313. Պէտք է տաս—շահանոցը զանազան սպիտակ և սև փողերի հետ փոխել. ամեն—մի տեսակիցը քանի՞ դրամ պէտք է տալ:

314. Այգեպանը 12 մարկ ունէր. զոցա ամեն—մէկը ջրելու համար հարկաւոր էր 4 վեդրօ ջուր. նա ունէր երկու քառասուն վեդրօանոց տակաւ, մէկի երեք չորրորդ մասն էր լեքը, իսկ միւսումը կար 17 վեդրօ: Բաւական է արդեօք այդ մարկերը ջրելու համար:

315. Մշակները 6 շաբաթում մի քուչայ քարեցին, որի երկարութիւնը 48 սաժէն էր: Առաջին շաբաթը քարեցին նորա վեցերորդ մասը, երկրորդ շաբաթը ութերորդ մասը, երրորդ շաբաթը տասներկու երրորդ մասը, չորրորդ շաբաթը մասը, հինգերորդ շաբաթը երրորդ մասը, իսկ մնացածը քարեցին վեցերորդ շաբաթը: Վանի՞ սաժէն քարեցին վերջի շաբաթը:

316. Սայլապանը 50 դարեց դարի ունէր. նա իւր չորս ձիաներից իւրաքանչիւրին օրէնը տալիս էր մէկ ու կէս դարեց. 2 դարեց էլ իւր պարտքին տուեց: Այդ դարին քանի՞ օր բաւական կրէներ:

317. Երեսան 50 կոպեկ ունէր, որի կէսը տուեց զրբի, հինգերորդ մասը մատիտների. իսկ մնացած փողովը առաւ կիտրոններ՝ ամեն—մինը 5 կոպեկով: Նա քանի՞ կիտրոն առաւ:

ԽՆԴԻՐՆԵՐ

51—60

318. Երեսան խնձորներ էր առնում մինը 3 կոպեկով. եթէ որ նորան տային 16 հատ, այն ժամանակը նորա մօտ կմնար 2 կոպեկ, իսկ եթէ տային 17 հատ, այն ժամանակը 1 կոպեկ կպակասէր: Նա ո՞րքան փող ունէր:

319. Մի երեսայ առաւ 17 մատիտ, իսկ միւսը 12 և առաջինը 15 կոպեկ աւելի տուեց: Իւրաքանչիւրը ո՞րքան փող տուեց զնա՞մ մատիտներին:

320. Մի մարդ մի զիւժին գղալ առաւ, մինը 4 մանէթով և նորա մօտ մնաց էլի 4 մանէթ: Նա ընդամենը ո՞րքան փող ունէր:

321. Տարին ունի 52 շաբաթ. զորանից 6 շաբաթ ամառուայ արձակուրդ էր. երկու-երկու շաբաթ Օւնեդեան և Յարութեան տօն էր, մի շաբաթ ապաշխարելու համար արձակուրդ էր տուած և 2 շաբաթ էլ կնստատօներ էին: Տարուայ մէջը քանի՞ շաբաթ էր ուսում շարունակվում:

322. Որդին հօրիցը ստացաւ 2 հատ երեք-շահանոց և 11 հատ 2-կոպեկանոց: Այդ փողերովը նա քանի՞ տետրակ կարող է առնել, եթէ որ ամեն—մինը արժէ 13 կոպեկ:

323. Ուսումնարանի աշակերտները գնում էին մանգալու քաղաքից զուրս. նոքա 26 զոյգ էին, բայց երբ քաղաքիցը զուրս եկան, ամեն—մի կարգումը կանգնեցին 4 հօգի, Վանի՞ կարգ զուրս եկաւ և քանի՞ն էին բոլոր աշակերտները:

324. Պահարանում 52 զիրք դարսած են 4 կարգ, այնպէս որ իւրաքանչիւր ներքին կարգում 2 զիրք աւելի է վերին կարգի զրբերից: Ամեն—մի կարգումը քանի՞ զիրք կար:

325. Այգեպանը 6 տասնեակ վարունկ ունէր, տասնեակը

3 կոպէկանոց, էլի ունէր 7 տասնեակ ուրիշ տեսակ վարուենկ, տասնեակը 5-կոպէկանոց: Նա այդ բոլոր վարուենկները խառնեց, վաճառեց մի գնով և քնաս արեց 1 կոպէկ: Նա տասնեակը ո՞րքանով վաճառեց:

326. Մի մարդ 53 ձի ունէր, նորանից վարձեցին 7 սայլ իւրաքանչիւրումը 3 ձի լծած. իսկ մնացած ձիաները նա լծեց զոյգ-զոյգ միւս սայլերումը և ապրանք տարաւ. ամէն-մի սայլի վարձ ստացաւ 3 մանէթ: Բնդամենը նա ո՞րքան վարձ ստացաւ վերջին սայլերի համար:

327. Աշակերտները օրէնք պարապում են 9 ժամ: Շաբաթէնը քանի՞ ամբողջ օր և ժամ են նորա պարապում, եթէ որ կիւրակին չհաշվենք:

328. Աշակերտին պատուիրեցին, որ տօներին 54 բառ սովորի: Նա քանի՞ օրումը կսովորի բոլոր բառերը, եթէ որ օրէնը սովորի 18 բառ:

329. Քանի՞ աղքատի կհասնի 54 կոպէկը. եթէ որ իւրաքանչիւրին տան 2, 3, 6, 9, 18, 27, կոպէկ:

330. Մի ուսումնարանի երկու դասատանը 27 նստարան կայ և ամեն-մէկի վերայ նստած են 2 աշակերտ. իսկ միւս ուսումնարանում 18 նստարան կայ և ամեն-մէկի վերայ նստած են 3 աշակերտ: Ո՞ր ուսումնարանի աշակերտները աւելի են:

331. Մրդավաճառը ամեն մի կիտրոնին 6 կոպէկ տուեց, իսկ ինքը վաճառեց 9 կոպէկով և բոլորի մէջը աշխատեց 54 կոպէկ: Նա քանի՞ կիտրոն վաճառեց:

332. Մի մարդ չորս ու կէս դիւթին զրիչ վաճառեց իւրաքանչիւր 9 հատը 5 կոպէկով: Ո՞րքան փող ստացաւ:

333. Պրնձգործը ունէր 1 փուտ և 15 զրվանքայ պղինձ. զորանից նա շինեց կաթսաներ, ամեն-միւր 11 զրվանքից և վաճառեց իւրաքանչիւրը 9 մանէթով: Նա ո՞րքան շինեալ վարձ ստացաւ, եթէ որ բոլոր պղինձը արժէր 28 մանէթ:

334. Աշակերտը ունէր 2 ապասի և 15 կապէկ. նա այդ փողովը առաւ 6 մատիտ միւր 4 կոպէկով և 7 քարէզրիչ միւր

3 կոպէկով. մնացած փողերովն էլ առաւ 2 դիւթին զրիչ: Նա ամեն-մի դիւթին զրէին ո՞րքան փող տուեց:

335. Քուչայի վերայ 55 տուն կար. նոցանից որքան միջարկանի էին երեք այնքան երկ յարկանի էին. իսկ մնացածները երեք յարկանի էին: Իւրաքանչիւր տեսակից քանի՞ տուն կար այդ քուչայի վերայ:

336. Ուսումնարանի համար 2 զլուխ շաքար առան. ամեն-մի զլուխը քաշում էր 28 զրվանքայ: Այդ շաքարը քանի՞ օր բաւական կլինէր, եթէ որ օրէնը զուրս էր գնում 4 զրվանքայ:

337. Տանտիկինը 3 հաւ ունէր, նոցանից ամեն-միւր 8 ձու զրեց. 4 հաւ թուխսը եկան և նա բոլոր ձուաները հաւասարապէս զրեց նոցա տակը: Ամեն-մի թուխսը քանի՞ ձուտ կարող է հանել:

338. Երկու երեխայ միասին 56 սալոր առան. զոցանից միւրը զորա համար տուեց 9 կոպէկ. իսկ միւսը 5 կոպէկ: Ամեն-միւր քանի՞ սալոր պէտք է վերցնի իւր փողին:

339. Վաճառականը 56 արշին քաթան ունէր. նա զորանից սփռոցներ կարել տուեց, ամեն-միւր 8 արշինից և վաճառեց իւրաքանչիւրը 5 մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ բոլոր սփռոցների համար:

340. Լուսաքը փռելու համար երեք կտոր թուկ կապեցին միմեանց ծայրից. մի կտորի երկարութիւնը 20 արշին էր միւսինը 25 արշին, իսկ երրորդինը 12 արշին. մի արշին էլ գնաց կապերի համար: Բոլոր թուկի երկարութիւնը ո՞րքան դուրս եկաւ:

341. Օրէնը 19 մշակի համար թխում են 57 զրվանքայ հաց: Քանի՞ զրվանքայ հաց պէտք է թխել 8 մշակի համար:

342. Գիւղը քաղաքիցը հեռու էր 57 վերստ. զիւղացին ճանապարհ ընկաւ դէպի քաղաք և առաջին օրը գնաց 9 ժամ, ամեն-մի ժամում 4 վերստ. իսկ մնացած ճանապարհը գնաց միւս օրը 7 ժամում: Միւս օրը նա մի ժամում քանի՞ վերստ էր գնում:

343. Մրգավաճառը զնեց 19 խնձոր, տասնեակը 20 կոպեկով, իսկ ինքը այդ բոլորը վաճառեց՝ տասնեակը 30 կոպեկով: Նա ո՞րքան աշխատեց:

344. Դերձակը մի կտոր մահուտ զնեց և հաշուեց, որ նորանից զուրս կդայ 19 սերտուկ՝ մինը 3 արշինից, բայց յետոյ միտքը փոխեց և կարեց 7 սերտուկ, իսկ մնացած մահուտիցը կարեց վերաբերուենը՝ մինը 4 արշինից: Քանի՞ վերաբերուե զուրս եկաւ:

345. Մի վաճառական տուեց միւսին 29 զրվանքայ թէյ, զրվանքան 2-մանէթանոց, իսկ միւսը զորա փոխարէն տուեց մահուտ՝ արշինը 3-մանէթանոց, և 10 մանէթ էլ փող: Երկրորդ վաճառականը քանի՞ արշին մահուտ տուեց:

346. Մի տուն շինելու համար հրաւիրեցին երեք կարգ արհեստաւոր. մի կարգը 17 հոգի էր, միւսը զորանից 5-ով աւելի: Քանի՞ մարդ կար երրորդ կարգումը, եթէ որ բոլորը միասին 58 հոգի էին:

347. Վաճառականը երկու տեսակ թէյ ունէր. առաջին տեսակի զրվանքան արժէր 4 մանէթ, իսկ միւս տեսակինը արժէր 3 մանէթ: Նա առաջին տեսակիցը վերցրեց 7 զրվանքայ և խառնեց երկրորդ տեսակի հետ. այնպէս որ բոլոր խառնած թէյը զուրս եկաւ 58 մանէթի: Խառնած թէյը ընդամենը քանի՞ զրվանքայ էր:

348. Երկու եղբայր իւրեանց մէջը 59 թերթ թուղթ բաժանեցին, այնպէս որ մինը միւսից 1 թերթ աւելի վերցրեց: Ըմեն մէկը քանի՞ թերթ վերցրեց:

349. Մի երեսայ 59 կոպեկ ունէր, որոնցով նա առաւ 7 մատիտ, մինը 4 կոպեկով. 5-էլ քարէզրիչ, մինը 3 կոպեկով. իսկ մնացած փողովը առաւ երկու տետրակ: Քանի՞ կոպեկ տուեց նա ամեն—մի տետրակին:

350. Ուսումնարանի համար երկու զլուխ շաքար առան. մինը 27 զրվանքայ էր, իսկ միւսը 5 զրվանքայ զորանից աւելի. առաջի շաքարը զուրս զնայ 15 զրվանքայ, Քանի՞

շաքար թաւական կլինէր մնացած շաքարը, եթէ որ շաքարէնը զործ զնէին 11 զրվանքայ:

351. Մշակը նահանջ տարուայ Յունվար և Փետրվար ամիսներում բանեց անտիրոջ մտ և ամեն-մի բանած օրի համար ստացաւ 50 կոպեկ: Նա ընդամենը ո՞րքան փող ստացաւ, եթէ որ այդ երկու ամիսումը 10 օր տօն էր:

352. Երեկոյան 12 շահի ունէր. նա առաւ 3 տանձ, մինը 4 կոպեկով և 4 խնձոր մինը 6 կոպեկով: Նորա մօտ ո՞րքան փող մնաց:

353. Նա ունեմ 60 կոպեկ մի-շահանոցներ և երկու-շահանոցներ. բայց շահանոցները 4 անգամ աւելի են երկու շահանոցներից: Նա քանի՞ շահանոց ունեմ և քանի՞ երկու-շահանոց:

354. Մրգավաճառը 6 տասնեակ խնձոր ունէր. որ զարսեց կողովներէ մէջ, ամեն մէկում 12 հատ: Նա քանի՞ կողովում զարսեց:

355. Փոքր եղբայրը 60 ամսական էր, իսկ միւսը 3 տարով նորանից մեծ էր: Քանի՞ տարեկան էր մեծ եղբայրը:

356. Վարժապետը 60 մատիտ ունէր. զորանից նա առաջին դասատան աշակերտների ամեն-մէկին տուեց 2 հատ. իսկ մնացածը տուեց միւս դասատան 6 աշակերտին, ամեն մէկին 3 հատ: Առաջին դասատանը քանի՞ աշակերտ կար:

357. Մի մարդ երկու օր ու կէս ծանապարհ էր զնում. այդ միջոցին նա 17 ժամ քնեց, 9 ժամ էլ իջւաններումը հանգստացաւ: Քանի՞ ժամ մանեկաւ:

358. Մի աշակերտ առաջարկեց միւսին 8 խնդիր, այն պայմանով, որ իւրաքանչիւր ուղիղ վճառ խնդրի համար տայ նորան 12 կախալ. իսկ ամեն-մի սխալ վճառածի համար նորանից ստանայ 6 կախալ աւելի: Նոցանից ո՞րը և քանի՞ կախալ տարաւ, եթէ որ առաջինը ուղիղ վճռեց 5 խնդիր:

359. Մեքենան 15 րոպեում քաշում է 11 արշին թել: Մի ժամումը քանի՞ արշին կքաշի:

360. Մի երեխայ ասում է միւսին՝ իմ մէկ զրպանիս կա-
կալը 2 անգամ աւելի է միւս զրպանիս կակալից, բայց ե-
թէ առաջին զրպանիցս 10 հատ հանեմ և դնեմ երկրորդ
զրպանումս, այն ժամանակը ամեն մի զրպանումս կլինի 30
կակալ: Նորա իւրաքանչիւր զրպանումը քանի՞ կակալ կար:

361. Մի երեխայ 4 բոպէումը վազում է 56 սաժէն, իսկ
միւսը 5 բոպէումը վազում է 60 սաժէն: Նոցանից ո՞րն է շուտ
վազում:

362. Նս մտքումս մի թիւ եմ բռնել, եթէ նորան շատա-
ցնեմ 2 անգամ և վերան աւելացնեմ 8, այն ժամանակը
կդառնայ 60: Նս ի՞նչ թիւ եմ բռնել մտքումս:

363. Պոռի ժամանակը դործ էին տեսնում 3 թնդանօթ
4 ժամ և ամեն-մինը արձակվում էր մի ժամումը 5 անգամ:
Ի՞նչուր թնդանօթները քանի՞ անգամ արձակվեցան:

364. Մի սայլ դուրս եկաւ քաղաքիցը առաւօտեան 7
ժամին և գնում էր մի ժամումը 4 վերստ. միւս սայլը դուրս
եկաւ 12 ժամին և գնում էր մի ժամումը 6 վերստ: Նրկրորդ
սայլը ո՞ր ժամին և քաղաքիցը քանի՞ վերստ հեռու կհասնի
առաջին սայլին, եթէ որ նոքա երկուսն էլ ճանապարհին հան-
գստանան 2 ժամ:

365. Նրեխան 59 կակալ ունէր. այդ կակալները նա 4 ան-
հաւասար բաժին արեց: Ամեն-մի բաժնումը քանի՞ կակալ կա-
րող էր լինել:

366. Պառաւը եկեղեցի դնալիս 60 կոպէկ վերցրեց, որ մօմ
առնի և պատկերների առաջը վառի: Նա քանի՞ մօմ կարող
է առնել և ի՞նչ գնանի:

367. Ղասը շարունակվում էր մի ժամ. աշակերաները
դասի չորրորդ մասը գործ դրին մի յօդուած կարդալու, երրորդ
մասը գործ դրին կարդացածը լուծելու, իսկ մնացած ժամա-
նակում կարդացածը զրեցին իւրեանց խօսքերով: Քանի՞ բո-
պէումը զրեցին նոքա իւրեանց խօսքերով:

368. Պապը 60 տարեկան էր, հայրը 2 անգամ նորանից

փոքր էր, իսկ որդու տարիքը պապի տարիքի տասներորդ մասն
էր: Հօր և որդու տարիքը միասին ո՞րքան են պակաս պապի
տարիքից:

369. Մառային տուել էին նորա վարձի երրորդ մասը և
էլի 8 մանէթ: Նորան էլի ո՞րքան պէտք էր տալ, եթէ որ նորա
բոլոր վարձը 60 մանէթ էր:

370. Պիւղացին իւր արտերիցը վերցրեց 60 չետվերտ դա-
րի. որի չորրորդ մասը տուեց իւր ձիաներին, երրորդ մասը
վաճառեց, վեցերորդ մասը փոխեց խոտի հետ, տասներորդ
մասը փոխ տուեց, իսկ մնացած զարին ցանեց հետեւեալ տար-
վայ համար և վերցրեց մէկին-վեց: Նա հետեւեալ տարումը
քանի՞ չետվերտ դարի վերցրեց:

ԽՆԴԻՐՆԵՐ

61—70

371. Տունը երեք յարկանի է. երկրորդ և երրորդ յարկերի
իւրաքանչիւրում կայ 22 պատուհան, իսկ ներքին յարկումը
5-ով պակաս է երկրորդից: Ի՞նչուր երեք յարկումը քանի՞ պա-
տուհան կայ:

372. Մառան մնաց տանտիրոջ մօտ Մայիս և Յունիս
ամիսները. օրէնը նա ստանում էր մի մանէթ, իսկ ճաշի փող
դուրս էին դալիս նորա ոռձիկից շաբթէնը 2 մանէթ. նորան
կերակրեցին 8 շաբաթ: Ո՞րքան փող նա պէտք է ստանար
դուրս գալու ժամանակ:

373. Երկու մարդ մահուտ առան. մինը առաւ 7 արշին,
արշինը 4 մանէթով, իսկ միւսը առաւ 11 արշին ուրիշ տե-
սակից: Այդ բոլոր մահուտին նոքա տուին 61 մանէթ: Երկ-
րորդ տեսակ մահուտի արշինը ո՞րքան արժէր:

374. Մի մարդ ունէր 6 հատ Ֆրանսերէն զիրք, 4 անդամ դորանից աւելի ռուսներէն զիրք, իսկ հայերէնը 2-ով աւելի էր Ֆրանսերէնից և ռուսներէնից միասին: Աս ընդամենը քանի՞ զիրք ունէր:

375. Մի տեղ կային 27 տղամարդ և 35 կին. նոցանից 18 հոգի չէին պարուժ: Քանի՞ զոյգ էին պարողները և քանի՞ տղամարդ չէր պարում, եթէ որ զոյգը կազմում էր մի տղամարդից և մի կինարմատից:

376. Դերձակը 31 արշին մահուտ գնեց՝ արշինը 2 մանէթանոց, նա փողի մի մասը վճարեց, բայց էլի պարտ մնաց 19 մանէթ: Աս ճրքան վճարեց:

377. Աշակերտը 62 երես կարդաց 4 ժամումը, այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ ժամումը մի երես աւելի էր կարդում նախորդ ժամում կարդացածից: Աս քանի՞ երես կարդաց վերջին ժամումը:

378. Մշակը բանեց 4 շաբաթ և շաբթէնը վաստակեց 8 մանէթ, միւս անգամ բանեց 3 շաբաթ և շաբթէնը վաստակեց 7 մանէթ, երրորդ անգամը բանեց 2 շաբաթ և շաբթէնը վաստակեց 5 մանէթ: Աս միջին թւով շաբթէնը ճրքան վաստակեց:

379. Գիւղացին զիւղեցը ոտով հասաւ քաղաք 21 ժամումը, իւրաքանչիւր ժամումը զնալով 3 վերստ. բայց քաղաքիցը ձիով վերադարձաւ զիւղը 9 ժամումը: Ա իւրաքանչիւր ժամումը քանի՞ վերստ էր զնում:

380. Ուսումնարանումը 63 ուսանող կար, միայն աշակերտները 6 անգամ աւելի էին աշակերտուհիներէից: Քանի՞ աշակերտ և քանի՞ աշակերտուհի կար այդ ուսումնարանումը:

381. Մի աշակերտ սովորում էր օրէնը 4 բառ, իսկ միւսը նորանից 3-ով աւելի: Աոցանից իւրաքանչիւրը քանի՞ բառ սովորեց 9 օրումը:

382. Այգու մէջ ծառերը տնկած են կարգով, այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ կարգում մի ծառ աւելի է քան նա-

խորդ կարգում: Քանի՞ ծառ կար առաջին կարգում, եթէ որ բոլորը 63 ծառ էր:

383. Մի մարդ գնեց մի ջահ, որ քաշում էր 19 զրվանքայ, և մի լապտեր, որ քաշում էր 13 զրվանքայ: Աս դոցա ամենմի զրվանքին տուեց 2 մանէթ: Աս ճրքան վճարեց այդ երկու բանին:

384. Հացթուխը 8 տոպրակ ալիւր առաւ. ամեն մի տոպրակի ալիւրը քաշում էր 8 փութ, նա այդ ալիւրը ածեց 16 հաւաքար տոպրակի մէջ: Իւրաքանչիւրի մէջ քանի՞ փութ մտաւ:

385. Մրդավաճառը 64 խնձորը 3 կարդ դարսեց այնպէս, որ վերին կարգումը 15 խնձոր էր, իսկ ներքին կարգումը 28 խնձոր: Քանի՞ խնձոր կար միջին կարգումը:

386. Գինեւաճառը մի տակառ ունէր, որ տանում էր 64 շեշ: Այդ տակառը երկու խողովակ ունէր. մէկով կարելի էր լցնել տակառը 4 րոպէումը. իսկ միւսով կարելի էր լիքը տակառը դարդակել 8 րոպէումը: Մի անգամ դարդակ տակառը զինի էին ածում, բայց 3 րոպէից յետոյ նկատելով որ երկրորդ խողովակն էլ բաց է մնացել և զինին դուրս է թափում, իսկայն երկու խողովակն էլ կալան: ճրքան զինի մնաց տակառումը և ճրքան վայր թափեց:

387. Մի զիւժին զգալ առան, որ քաշում էր 2 զրվանքայ: ճրքան արժէին այդ գդալները, եթէ որ 8 լոտը արժէր 7 մանէթ:

388. Նրեք երեխայ փող վէր եկան և 64 արշին թել առան փռանի համար. մինը տուեց դորա համար 5 կոպէկ, միւսը 7 կոպէկ, իսկ երրորդը 4 կոպէկ: Իւրաքանչիւր երեխան քանի՞ արշին թել պէտք է վերցնի:

389. Նրկաթուղու գնացքը իւրաքանչիւր ժամումը զնալով 32 վերստ՝ մի քաղաքից հասաւ միւսը 2 ժամումը: Ճառապարհորդը այդ տարածութիւնը քանի՞ ժամումը կերթայ, եթէ որ մի ժամումը զնայ 4 վերստ:

390. Գինեկաճառը 64 տակառ զինի տուն բերելու համար վարձեց սայլեր և իւրաքանչիւրի վերայ զրեց 4 տակառ: Բոլոր գինին բերելու վարձ իրքան տուեց, եթէ որ ամեն-մի սայլը վարձեց 3 մանէթով:

391. Վաճառականի մօտ ալիւր բերին 4 սայլով. ամեն-մի սայլի վերայ զրաժ էր 2 տոպրակ, որոնց իւրաքանչիւրի մէջը կար 8 փուտ: Այդ բոլոր ալիւրը իրքան արժէր, եթէ որ 4 փուտը արժէր 3 մանէթ:

392. Սայլը ղուրս եկաւ մի քաղաքից առաւօտեան 5 ժամին և դնում էր իւրաքանչիւր ժամում 5 վերստ: Երեկոյեան իր ժամին կհասնէր միւս քաղաք, որ հեռու էր առաջինից 65 վերստ, եթէ որ ճանապարհին 5 ժամ հանգստանար:

393. Այգեպանը քաղեց 6 տասնեակ խոշոր վարունկ, որոնց տասնեակը արժէր 6 կոպէկ և 7 տասնեակ մանր վարունկ, որոնց տասնեակը արժէր 4 կոպէկ: Նա այդ երկու տեսակը միասին խառնեց և մի դնով վաճառեց ու աշխատեց բոլորի մէջ 1 կոպէկ: Ամեն-տասնեակը իրքանով վաճառեց:

394. Վաճառականը 65 արշին մահուտ ունէր. զորանից 27 արշին վաճառեց, ամեն-մի 3 արշինը 4 մանէթով. միւս անգամ վաճառեց 28 արշին, իւրաքանչիւր 4 արշինը 3 մանէթով. իսկ մնացածը վաճառեց 8 մանէթով: Այդ մահուտի ամեն-մի արշինը իրքանով պէտք էր վաճառել, որ միւսնոյն փողը ստացվէր:

395. Տանախկինը հինգ ու կէս զիւժին արծաթէ զղալ ունէր. որոնցից 36-ը թէյի էր, 15-ը սեղանի, իսկ մնացածը մուրաբի: Սուրսբի գլանները քանիսն էին:

396. 66 արշին քաթանից սփռոյններ շինեցին, ամեն-մի 11 արշինից և իւրաքանչիւրը վաճառեցին 9 մանէթով: Որքան արժէին բոլոր սփռոյնները:

397. Աշակերտը 66 զրիչ առաւ. որոնց 22 հաար արժէր 10 կոպէկ: Նա իրքան վճարեց բոլոր զրիչների համար:

398. Ուսումնարանի երեք դասատան իւրաքանչիւրի մէջ

կար 11 նստարան, որոնց ամեն-մեկի վերայ նստած էին 2 աշակերտ: Այդ բոլոր աշակերտները խաղալու ժամանակը կարգ-կարգ կանգնեցին, ամեն-մի կարգումը 6 հոգի: Վանի՞ կարգ ղուրս եկաւ:

399. Երկու երեխայ 66 կոպէկի տետրակներ առան հաւասար գնանի. նոցանից մինը վերցրեց 4 տետրակ, իսկ միւսը 7-ը: Իւրաքանչիւրը իրքան վճարեց իւր տետրակներին:

400. Իւրձակը 67 արշին մահուտ ունէր, զորանից 39 արշին կտրեց սերտուկներ կարելու, մինը 3 արշինից. իսկ մնացածից կտրեց վերարկուներ մինը 4 արշինից: Իւրձակը իրքան կարելավարձ ստացաւ, եթէ որ իւրաքանչիւր սերտուկի համար ստացաւ 3 մանէթ, իսկ վերարկուի համար 2 մանէթ:

401. Ուսումնարանումը 67 աշակերտուհի կային. զոցանից առաջին դասատանը 29 հոգի էին, երկրորդումը զոցանից 6-ով պակաս. իսկ մնացածը երրորդումն էին: Երրորդ դասատանը քանի՞ աշակերտուհի կար:

402. Նա մտքումն բռնել եմ մի թիւ, որի կիսի վերայ եթէ աւելացնեմ 38, կստանամ 67-ը: Ի՞նչ թիւ եմ բռնել մտքումն:

403. Աշակերտը զրբի 2 երեսը ղուրս էր զրում տետրակի 4 երեսի վերայ: Նա զրբի քանի՞ երեսը ղուրս զրեց, եթէ որ տետրակումը ղուրս զրածր 68 երես էր:

404. Չորս զիւղացի 68 մանէթի զարի վաճառեցին: Ամեն-մեկին իրքան փող կրնին, եթէ որ 3 տոպրակ մէկն էր, 4-ը միւսինը, 5-ը երրորդինը և 5-ը չորրորդինը:

405. Վաճառականը 34 տոպրակ ալիւր առաւ, տոպրակը 2 մանէթով. զորանից 9 տոպրակ նա վերցրեց իւր համար, իսկ մնացածը վաճառեց իւրաքանչիւր 5 տոպրակը 12 մանէթով: Այն 9 տոպրակը որ պահեց իւր համար իրքան նստեց իւրեան:

406. Նախքապանը արածացնում էր 68 զլուխ տաւար. նոցա միջև կովերը 3 անգամ աւելի էին հորդերից: Նախքումը քանի՞ կով կար և քանի՞ հորդ:

407. Երեխան 68 կակալ զարսեց սեղանի վերայ 4 կարգ

այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ կարգում 2 պահալ աւելի էր նախորդ կարգից: Վանի՞ կակալ կար տուջին կարգումը:

408. Մի տուն լուսաւորելու համար օրէնը գնում է 3 զըրվանքայ նաւթ: Որքան նաւթ կերթայ 3 շաբաթում և 2 օրում:

409. Երկու ձանապարհորդ դուքս եկան երկու զանազան քաղաքներից և գնում էին միմեանց հանդէպ. այդ քաղաքները հեռու էին միմեանցից 69 վերստ: Նոցանից մինը մի ժամումը գնում էր 11 վերստ. իսկ միւսը 12 վերստ: Վանի՞ ժամից յետոյ նոքա միմեանց կպատահէին:

410. Օսաւային տունն 7 հատ երկու-շահանոց և պատուիրեցին որ կիտրոններ առնի. մինը 5 կոպէկով: Նա քանի՞ հատ կիտրոն պէտք է առնէր:

411. Տօներին աշակերտին պատուիրեցին, որ աշխարհազրուծեան դասից կրկնի 35 թերթ. նա իւրաքանչիւր օր կրկնեց 7 երես, իսկ վերջի օրը դարձեալ կրկնեց բոլորը միասին: Վանի՞ օր էր տօն:

412. Մի երիտասարդ հրացան արձակել էր սովորում. նա 70 անգամ արձակեց և ամեն-մի 14 անգամից 6 անգամ դիպցնում էր նշանին: Նա ընդամենը քանի՞ անգամ դիպցրեց նշանին:

413. Այլուածատէրը մի մշակ վարձեց 10 շաբաթով, այն պայմանով, որ օրէնը մի մանէթ տայ նորան: Նրբ ժամանակը լրացաւ մշակը 38 մանէթ փող ստացաւ, իսկ մնացին 8 չեռվերտ դարի: Ամեն-մի չեռվերտ դարին ո՞րքան նստեց նորան:

414. Թղթավաճառը նամակի 7 ծրարը առնում էր 4 կոպէկով, իսկ ինքը վաճառում էր 10 հատը 7 կոպէկով: Նա ո՞րքան էր աշխատում 70 ծրարում:

415. Գիւղացին վաճառեց 11 խող, մինը 6 մանէթով, էլի վաճառեց 12 հաւ, մինը քառորդ մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ:

416. Երկաթուղով քանի՞ ժամումը կարելի է գնալ 64 վերստը. եթէ որ մի քառորդ ժամումը գնան 8 վերստ:

417. Մի տեղ 64 հոգի էին հրաւիրած. զոցա ութերորդ

մասը ղինուորական էին, տասվեցերորդ մասը վաճառական էին, չորրորդ մասը երեսայք էին, իսկ մնացածը կանայք: Վանի՞ կանայք կային այնտեղ:

418. Իմ փողի կիսով ես մի զրվանքայ սուրջ աւայ, իսկ չորրորդ մասով մի զրվանքայ շաքար և սուրջին 16 կոպէկ աւելի տուի շաքարից: Որքան արժէր սուրջի զրվանքան:

419. Մրդավաճառը 70 խնձոր ունէր. նա դորա կէսը վաճառեց մէկի վերայ, հինգերորդ մասը միւսի վերայ, եօթերորդ մասը երրորդի վերայ, տասերորդ մասը չորրորդի վերայ, իսկ մնացած խնձորները ինքը կերաւ: Ինքը քանի՞ խնձոր կերաւ:

ԽՆԴԻՆԵՐ

71—80

420. Ելդեպտնը մի մարկից քաղեց 29 վարունկ, միւսից 18 և երրորդից 24. նա զոցանից 6 տասնեակ վաճառեց՝ իւրաքանչիւր տասնեակը 8 կոպէկով, իսկ մնացածի իւրաքանչիւր հատը վաճառեց 1 կոպէկով: Նա ընդամենը ո՞րքան փող ստացաւ:

421. Երկու երեխայ միասին 71 կակալ ունէին, բայց մէկինը 15-ով աւելի էր միւսինից: Եւրաքանչիւրը քանի՞ կակալ ունէր:

422. Մրդավաճառը ունէր երկու թաբախ նուռը, ամեն-մէկում 36 հատ. նա այդ բոլոր նունիքը շաբաններ շնեց. ամեն-մի շաբանում կար 12 նուռ և իւրաքանչիւր շաբանը վաճառեց 2 մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ:

423. Չորս աշակերտից ամեն-մէկը առաւ 18 հատ զրիչ, իսկ հինգերորդը առաւ նոցա բոլորի չափ և տուեց 48 կոպէկ: Գրիչների զիւժինը ո՞րքանով առան:

424. Աղախինը ստանում էր տարէնը 72 մանէթ վարձ:

Նա 9 ամիս ծառայելուց յետոյ դուրս գնաց և իւր վարձումս տացաւ 39 մանէթ փող, իսկ մնացածին շոր: Նորա ստացած շորը ռըքան արժէր:

425. Մշակը օրէնը 9 ժամ բանելով, 8 օրումը շինեց մի արխ, որի երկարութիւնը 72 սաժէն էր: Նա ի՞նչ երկարութեան արխ կարող էր շինել 12 օրումը, եթէ որ օրէնը բանէր 6 ժամ:

426. Մի կտոր մահուտը 32 արշին էր, իսկ միւսը 8 արշինով աւելի էր: Վանի՞ ձերք շոր դուրս կգայ բոլոր մահուտից, եթէ որ ամեն-մի ձերքի համար գնում է 4 արշին:

427. Մի ժամումը ներս է ածվում տակառի մէջ մի խողովակով 5 վերո ջուր, երկրորդովը 6 վերո և երրորդովը 7 վերո: Ո՞րքան ջուր ներս կածվի երեք խողովակով միասին 4 ժամումը:

428. Նանապարհորդը Թիֆլիզիցը դուրս եկաւ ցերեկվայ 12 ժամին և մի ժամումը գնում էր 9 վերստ, կէս օրից յետոյ 2 ժամին դուրս եկաւ միւս ճանապարհորդը և հասաւ առաջինին երեկոյեան 8 ժամին: Արկրորդ ճանապարհորդը մի ժամումը քանի՞ վերստ էր գնում:

429. Նրեք աշակերտ 3 դաստայ թուղթ առան. նոցանից ամեն-մէկը ռըքան պէտք է վերցնի, եթէ որ մինը տուեց 16 կոպէկ միւսը 9 կոպէկ, իսկ երրորդը 11 կոպէկ:

430. Պիւղացի երեխան կամենում էր զանգակատան բարձրութիւնը խմանալ, դորա համար նա չափեց նորա ստուերը և տեսաւ որ 24 արշին է, յետոյ մի փայտ ցցեց 6 արշինանոց և տեսաւ, որ նորա ստուերն էլ 2 արշին է: Ո՞րքան էր զանգակատան բարձրութիւնը:

431. Որդին 16 տարեկան է, հայրը 3 անգամ մեծ է նորանից. իսկ պապը 25 տարով մեծ է հօրիցը: Վանի՞ տարեկան է պապը:

432. Պիւղիցը մինչև քաղաքը 73 վերստ էր. զիւղացին դորանից 45 վերստ զնաց սայլով՝ ամեն մի ժամումը 9 վերստ,

իսկ մնացածը զնաց ոտով ամեն-մի ժամումը 4 վերստ: Նա քանի՞ ժամումը հասաւ քաղաք:

433. Ուսումնարանի նստարանների վերայ կային 73 աշակերտ. նստարաններիցը մի քանիսը 2 տեղանի էին, իսկ միւսները 5 տեղանի: Այդ ուսումնարանումը քանի՞ նստարան կար առաջին և երկրորդ տեսակից:

434. Մի կին եկեղեցուցը դուրս դալիս մտադիր էր իւր փողերից տալ 13 աղքատի հինգ-հինգ կոպէկ. իսկ մնացած 9 կոպէկին միրգ առնել իւր երեխանց համար, բայց տեսնելով որ աղքատները շատ են, նա ամեն-մէկին տուեց 2 կոպէկ և էլ փող չմնաց իւր մօտ: Բնդամենը քանի՞ աղքատ կար եկեղեցու մօտ:

435. Մի մարդ 5 խնձորին և 6 տանձին տուեց 49 կոպէկ, իսկ միւսը միւսնոյն զնով առաւ 10 խնձոր և 6 տանձ և տուեց 74 կոպէկ: Ո՞րքանով էին վաճառում տանձի և խնձորի տասնեակը:

436. Նս ունեմ 74 կոպէկ փող. 3-կոպէկանոց և 5-կոպէկանոց: Վանի՞ հատ 3 կոպէկանոց ունեմ և քանի՞ հատ 5-կոպէկանոց:

437. Հայրը մեծ որդուն տուեց 5 հատ 3-շահանոց և հրամայեց որ հաւասար բաժանի իւր միւս 2 եղբայրների հետ: Ամեն-մէկին քանի՞ կոպէկ կընկնի:

438. Նանապարհորդների շողեկառքը 75 վերստը գնում է 3 ժամումը, իսկ ապրանքի շողեկառքը 5 ժամումը: Եթէ որ երկու շողեկառքն էլ դուրս դան միասին՝ 2 ժամի միջոցում առաջինը ռըքան աւելի կերթայ երկրորդից:

439. Արհեստաւորը 75 զրվանքայ պղնձից շինեց խնդաններ, ամեն-մինը 15 զրվանքից և վաճառեց իւրաքանչիւրը 12 մանէթով: Նա ռըքան փող ստացաւ:

440. Ինդ մշակը 4 շաբաթումը աշխատում են 75 մանէթ: Ո՞րքան կաշխատեն 4 մշակը 2 շաբաթում, եթէ որ բանն միւսնոյն պայմանով:

441. Հայրը մի որդուն տուեց 30 կոպէկ, իսկ միւսին 15

կոպէկ նորանից աւելի և հրամայեց երրորդ եղբօր հեա հաւասար բաժանեն: Նոցանից ամեն-մինը ուրբան պէտք է տայ երրորդ եղբօրը:

442. Ի՞նչպիսի միատեսակ զրաֆներ կտան 75 կոպէկին և քանի՞ հատ:

443. Նրեք խումբ մշակ մի արխ փորելու համար ստացան 76 մանէթ: Եւրաքանչեւը խումբը ուրբան պէտք է ստանայ, եթէ որ առաջին խումբը 7 հոգի էր, իսկ միւսները վեց-վեց:

444. Սուրհանդակը զուրս եկաւ մի քաղաքից և գնում էր մի ժամուժը 13 վերստ, իսկ միւս քաղաքից, որ գտանվում էր առաջինից 76 վերստ հեռու, նորա հանդէպ միւսնոյն ժամին զուրս եկաւ մի սայլ, որ մի ժամուժը գնում էր 6 վերստ: Քանի՞ ժամից յետոյ նոքա կը հանդիպեն միմեանց և ուրբան հեռու առաջին քաղաքից:

445. Նրեք մարդ մի քանի աղքատի 76 կոպէկ տուին: Նոցանից մինը իւրաքանչեւին տուեց 10 կոպէկ, միւսը 20 կոպէկ, իսկ երրորդը 8 կոպէկ: Ամեն-մինը ուրբան փող տուեց աղքատներին:

446. Գիւղի բնակիչները 77 հոգի էին, երեխերը 2 անգամ պակաս էին կանանցից, իսկ տղամարդիքը 2 անգամ աւելի էին: Քանի՞ երեխայ կար այդ գիւղում:

447. Մի եղբայրը առաւ 5 տասնեակ խնձոր, իսկ միւսը 2 տասնեակ և առաջինը 33 կոպէկ աւելի վճարեց երկրորդից: Նոքա միասին ուրբան տուին բոլոր խնձորներին:

448. Աւագանը տանում է 77 տակառ ջուր, նա ունի երկու խողովակ, որոնցից մինը լցնում է նորան 7 րոպէում, միւսը դադարկում է 11 րոպէում: Ուրբան ջուր կմնայ աւագանում, եթէ դարդակ աւագանի երկու խողովակն էլ բաց թողնեն 5 րոպէ:

449. Աշուղաճատէրը 77 օրավար հող ունէր. զորանից փարկահողը 2 անգամ աւելի էր արոտատեղից, իսկ մնացածը ծածկուածէր անտառով: Նա քանի՞ օրավար փարկահող ունէր:

450. Աւագանը 78 զրվանքայ շաքար ունէր զուլաներով, ամեն-մի զուլը քաշում էր 26 զրվանքայ. նա իւրաքանչեւը զուլը վաճառեց 5 մանէթով: Ուրբան արժէր բոլոր շաքարը:

451. Պինձգործը առաւ 6 հատ հին կաթսայ, որոնց ամեն-մինը քաշում էր 13 զրվանքայ. նա իւրաքանչեւին տուեց 4 մանէթ. յետոյ զոցանից շինեց ինքնառներ մինը 39 զրվանքից և իւրաքանչեւը վաճառեց 18 մանէթով: Նա բոլորի մէջ ուրբան աշխատեց:

452. Հացթուխը երկու տեսակ ալիւր ունէր, մէկը զրվանքան արժէր 4 կոպէկ, իսկ միւսինը 5 կոպէկ: Նա առաջե տեսակից վերցրեց 6 զրվանքայ, իսկ երկրորդ տեսակից 7 զրվանքայ. այդ բոլորը միասին խառնեց և հաց թխեց: Հացի զրվանքան ուրբանով պէտք է վաճառի նա, որ թխելու վաճառանայ 19 կոպէկ:

453. Ըղբկառքը 78 վերստը գնաց 3 ժամում, այնպէս որ իւրաքանչեւը հետեւալ ժամում 1 վերստ աւելի էր գրնում նախորդ ժամից: Նա քանի՞ վերստ գնաց վերջին ժամում:

454. Գիւղացի կինը մի աման կաթը տարաւ քաղաք և վաճառեց 79 կոպէկով, ոյսինքն 5 շիշե ամեն մինը վաճառեց 7 կոպէկով, իսկ մնացածի ամեն-մի շիշը տուեց 11 կոպէկով: Քանի՞ շիշ կաթ կար նորա ամանում:

455. Իմ մէկ զրպանումը կայ 27 կոպէկ, իսկ միւսումը 25 կոպէկ աւելի: Քանի՞ կոպէկ պէտք է ածեմ ամեն-մի զրպան, որ մէկի մէջ մի կոպէկ աւելի լինի միւսից:

456. Գինեւաճառը 5 տակառ գինի ունէր, ամեն-մէկի մէջ 16 վեղթ, նա այդ գինին ածեց 8 հաւասար տակառի մէջ: Եւրաքանչեւի մէջ ուրբան գինի մտաւ:

457. Քաղաքիցը մինչև գիւղը 80 վերստ է. մի սայլ քաղաքիցը ճանապարհ ընկաւ դէպի գիւղը և գնում էր մի ժամում 6 վերստ, իսկ գիւղացին գիւղիցը զուրս եկաւ սայլի հանդէպ և գնում էր մի ժամում 4 վերստ: Քանի՞ ժամից

յետոյ նորա միմեանց կպատահեն և պատահելուց քանի՞ ժամ յետոյ գիւղացին կհասնի քաղաք, եթէ որ ճանապարհին հանգստանայ 8 ժամ:

458. Ուսուցման արանումը կար 80 աշակերտ. առաջին դասատան աշակերտները 4 անգամ պակաս էին ուսուցման արանի բոլոր աշակերտներից. երկրորդումը 6-ով պակաս էին առաջինից. իսկ երրորդում և չորրորդում հաւասար էին: Քանի՞ աշակերտ կար չորրորդ դասատանը:

459. Մեքենայի անիւը 8 բոպէումը պտոյտ է դալի 4 անգամ: Քանի՞ անգամ պտոյտ կդայ նա 1 ժամումը և 20 բոպէումը:

460. Վաճառականը ուներ 16 արկղ ծխախոտ, իւրաքանչիւրի մէջ 5 զրկանքայ. ամեն-մի արկղը արժէր 4 մանէթ: Նա այդ ծխախոտը ածեց 4 զրկանքանոց արկղների մէջ և վաճառեց ամեն-մի արկղը 4 մանէթով: Նա որքան աշխատեց:

461. Երեք զրազիր արտագրեցին մի շարադրութիւն, որ բաղկանում էր 80 թերթից. առաջինը արդադրում էր 7 ժամ, երկրորդը 5 ժամ, իսկ երրորդը 8 ժամ: Եւրաքանչիւր զրազիրը քանի՞ թերթ արտագրեց, եթէ որ նորա զրում էին հաւասար արագութեամբ:

462. Վաճառականը գնեց 12 արշին թաւիշ, արշինը 7 մանէթով և էլի գնեց մի քանի արշին ուրիշ տեսակից, արշինը 6 մանէթով, իսկ ինքը իւրաքանչիւր արշինը վաճառեց 8 մանէթով և բոլորի մէջը աշխատեց 80 մանէթ: Նա քանի՞ արշին թաւիշ ուներ:

463. Քանի՞ հաւասար կարդ կարելի է կանգնեցնել 72 գնուորին և ամեն-մի կարգումը քանի՞ մարդ կարող է լինել:

464. Երեք եղբայր և երկու քոյր բաժանեցին իւրեանց մէջ 79 կոպէկ. եղբայրները հաւասար ստացան, իսկ քոյրերը անհաւասար: Որքան ստացաւ ամեն-մի եղբայրը և քոյրը:

465. Տանտիկինը գնեց վեց ու կէս դիւթին բաժակ, ամեն-մէկը քառորդ մանէթով: Որքան արժէին բոլոր բաժակները:

466. Վաճառականը 72 զոյգ ձեռնոց առաւ 78 մանէթով և ամեն-մի զոյգը վաճառեց մանէթով չորսով: Նա որքան աշխատեց 12 զոյգ ձեռնոցում:

467. Մշակը ծառայեց տանտիրոջը 2 ամիս ու կէս և ամեն-մի բանեցած օրվայ համար ստացաւ մանէթ ու կէս: Նա որքան փող աշխատեց, եթէ որ այդ միջոցին 23 օր տօն էր:

468. Աշակերտը 72 կոպէկ ուներ. զորա կէսը նա տուեց զրեւրի, չորրորդ մասը տուեց թղթի, ութերորդ մասը տուեց մատիտների, տասերկուերորդ մասը տուեց զրինների, իսկ մնացած փողով առաւ մի խնձոր. Որքան արժէր խնձորը:

469. Վարժապետը 80 թերթ թուղթ բերեց դասատուն, որ ամեն-մի աշակերտին տայ 4 թերթ, բայց այդ օրը աշակերտների հինգերորդ մասը դասի չէին կիկել. այդ պատճառով նա բոլոր թուղթը բաժանեց մնացած աշակերտներին հաւասարապէս: Եւրաքանչիւր աշակերտը քանի՞ թերթ ստացաւ:

ԽՆԴԻՐՆԵՐ

81—90

470. Իննը տարեկան թոռ հարցրեց իւր պապիցը, թէ քանի՞ տարեկան ես, պապը պատասխանեց թէ՛ 1 տարի առաջ 10 անգամ քեզանից մեծ էի: Քանի՞ տարեկան էր պապը:

471. Երեք երեսայի 81 կախալ տուին, այնպէս որ երկրորդը և երրորդը 4 անգամ աւելի ստացան առաջինից: Ամեն-միւր քանի՞ կախալ ստացաւ:

472. Մրգավաճառը 81 կոպէկի խնձոր ծախեց, ամեն-միւր 3 կոպէկով: Նա որքան աշխատեց, եթէ որ ինքը 10 հատը առել էր 20 կոպէկով:

473. Մի երեկայ ունէր 39 կակալ, իսկ միւս 3-ով աւելի: Ղոցանից ամեն մինը քանի՞ կակալ պէտք է տայ երրորդ երեկային. որ բոլորինը ևս հաւասար լինի:

474. Երկու երեկայ վազեցին, որ միմեանց առաջը կտրեն. ղոցանից մինը մի ընդունաւ վազում էր 32 արշին, իսկ միւսը 41 արշին. երկրորդ երեկան 81 արշին առաջ ընկաւ: Նոքա քանի՞ ընդունաւ վազեցին:

475. Երկու մրդավաճառ միասին 82 կիտրոն ունէին, նոքա հաւասար վաճառեցին և դորանից յետոյ առաջինի մօտ մնաց 19 հատ, իսկ երկրորդի մօտ 6-ով աւելի: Մինչև վաճառելը ամեն մինը քանի՞ կիտրոն ունէր:

476. Նս դնեցի 6 տետրակ, ամեն-մինը 4 կոպէկով և 3 կիտրոն, ամեն-մինը 6 կոպէկով, իսկ մնացած փողովս գնեցի 8 մօտիտ, ամեն-մինը 5 կոպէկով: Նս որքան փող ունէի:

477. Երեկայքը դնեցին 2 զրվանքայ կակալ. ամեն-մի զրվանքան քաշում էր 41 հատ և բաժանեցին իւրեանց մէջ հետևեալ կերպով՝ 3 երեկայից ամեն-մինը վերցրեց 8 կակալ, 4-ից ամեն մինը 9 կակալ. իսկ մնացած կակալը իւրեանց մէջ հաւասար բաժանեցին վերջի 2 երեկան: Վերջի 2 երեկայից ամեն մինը քանի՞ կակալ ստացաւ:

478. Մի շարագրութիւն արտագրելու համար նստեցի 3 օր և օրէնը արտագրեցի 9 ժամ. միւս անգամ նստեցի 4 օր, օրէնը արտագրեցի 6 ժամ, էլի նստեցի 4 օր, օրէնը արտագրեցի 8 ժամ: Քանի՞ ժամ դործ գրեցի ես այդ շարագրութիւնը արտագրելու համար:

479. Օճառն ստանում էր ամսէնը 9 մանէթ. նորան 2 մանէթ էլ ընծայեցին տօներին: Նա 9 ամիս ծառայելուց յետոյ դուրս գնաց և ստացաւ 18 մանէթ փող, իսկ մնացածին 5 սերտուկ հաւասար գնանի: Որքան նստեց նորան ամեն-մի սերտուկը:

480. Հայրը որդուն 69 մանէթ փող ուղարկեց. նա վճարեց փոստայումը ապա հոգովթեան համար ամեն մի մանէթին

1 կոպէկ, կռի փող 10 կոպէկ և անտորրագրի փող 5 կոպէկ: Որքան նստեց նորան փողի ուղարկելը:

481. Պապը 84 տարեկան էր, որդին 39 տարով նորանից փոքր էր, իսկ թոռը 7 անգամ պապիցը փոքր էր: Քանի՞ տարեկան էին որդին և թոռը:

482. Երկու շարաթուայ մէջ օրէնը այրում էին 6 մօմ, 4-մօմը քաշում էր 1 զրվանքայ: Քանի՞ զրվանքայ մօմ կայրվէր 2 շարաթուայ:

483. Իմ սենեակի 3 պատի վերայ քաշարած են պատկերներ, ամեն-մի պատի վերայ 4 կարգ, ամեն-մի կարգումը 7 պատկեր: Ընդամենը քանի՞ պատկեր կայ քաշ արած:

484. Վաճառականը երկու տեսակ վառելանաւթ ունէր, առաջին տեսակի զրվանքան արժէր 16 կոպէկ, իսկ երկրորդ տեսակինը 13 կոպէկ. նա առաջին տեսակից վերցրեց 2 զրվանքայ, երկրորդ տեսակից էլ 4 զրվանքայ և միմեանց հետ խառնեց: Նա խառնուրդի զրվանքան որքանով պէտքէ վաճառի, որ ոչ մնաս անի, և ոչ օգուտ:

485. Շապիկներին համար դնեցին 7 զիւժին կոճակ, 10 հատը 5 կոպէկով: Որքան արժէին բոլոր կոճակները:

486. Շոգենաւը ամեն-մի 21 վերստում այրում է 3 սաժէն փայտ: Որքան փայտ կայրի նա 84 վերստում:

487. Մշակերտը զրբիցը դուրս գրեց 28 երես և նկատեց, որ զրբի 5 երեսը մտնում է տետրակի 15 երեսումը: Բոլոր 28 երեսը տետրակի քանի՞ երեսումը մտաւ:

488. Գիւղացի կինը 60 ձու տարաւ քաղաք վաճառելու. ձանապարհին 18 ձու կտորվեցաւ. մնացածի իւրաքանչիւր 10 հատը նա վաճառեց 20 կոպէկով: Նա որքան փող ստացաւ և որքանից զրկվեց:

489. Երեկայի մօտ մնացել էին մահուտի կտորներ, 5 արշին 5-մանէթանոց, 3 արշին 2-մանէթանոց և 9 արշին 6-մանէթանոց: Նա այդ բոլոր մահուտը միասին վաճառեց այն գնով, որ իւրան էր նստել: Եւրաքանչիւր արշինը որքանով

վաճառեց:

490. Եւ մտքումս բռնել եմ երկու թիւ. եթէ նոցանից մինը կրկնեմ 3 անգամ և վերան աւելացնեմ միւսը՝ կստացվի 85: Ի՞նչ թուեր եմ բռնել մտքումս:

491. Մի մարդ գիւղիցը գնում էր քաղաք. նա 7 վերստ գնացել էր արդէն, բայց ձին սկսեց կաղալ, նա կրկին յետ դարձաւ գիւղը և մի այլ ձիու վերայ նստելով՝ գնաց քաղաքը և միւս օրը վերադարձաւ: Եւ յիշու օրումը նա մանեկաւ ընդամենը 86 վերստ: Գիւղը որքան էր հեռու քաղաքից:

492. Եւ յգին մաքրելու համար հրաւիրեցին երեք խումբ մշակ. մի խմբումը կար 15 մարդ, միւսումը 17. իսկ երրորդումը 11. իւրաքանչեւր մշակին առաջարկեցին 2 մանէթ, բայց երկրորդ խումբը յանձն առաւ մենակ մաքրել այգին, եթէ որ իւրաքանչեւրին տան 5 մանէթ: Ո՞րպէս է ձեռնտու այգին մաքրել տալը:

493. Երկու եղբայր միասին 87 կոպէկ ունէին, բայց երբ հաւասար մխեցին, այն ժամանակը մէկի մօտ մնաց 24 կոպէկ, իսկ միւսի մօտ 19 կոպէկ: Ամեն-մինը քանի՞ կոպէկ ունէր:

494. Իմ մի զրպանումը կակալներ կան, որոնցից եթէ 23 հատ դնեմ միւս զրպանումս, իսկ մնացածը 4 բաժին անեմ, այն ժամանակը ամեն-մի բաժինը կլինի 16 հատ: Վանի՞ կակալ կայ իմ զրպանումը:

495. Հեծեղազօրը մի քաղաքից գնում էր միւս քաղաքը. 6 ժամի ընթացքում նա իւրաքանչեւր ժամումը գնում էր 7 վերստ, բայց յետոյ մի ժամումը 2 վերստ աւելի գնալով՝ 5 ժամումը տեղ հասաւ: Վանի՞ վերստ գնաց հեծեղազօրը:

496. Վաճառականը 87 զրվանքայ շաքար ունէր զլուխներով, ամեն-մի զլուխը 29 զրվանքայ էր. նա իւրաքանչեւր զլուխը վաճառեց 6 մանէթով: Ո՞րքան փող վերցրեց:

497. Ուսումնարանումը 6 դասատուն կար. չորս դասատան ամեն-մէկի մէջ կար 3 նստարան, իսկ մնացածներում 2-ով աւելի: Վանի՞ աշակերտ կար այդ ուսումնարանումը, եթէ որ

ամեն-մի նստարանի վերայ նստում էր 4 աշակերտ:

498. Տունը բաղկացած էր երեք սենեակից. ամեն-մէկի մէջ շաբթեւը այրվում էր 8 ճրագուէ մօմ: Ո՞րքան արժէր այդ սենեակների լուսաւորութիւնը 2 շաբաթում, եթէ որ մնալի զրվանքան արժէր 11 կոպէկ և 6 մոմը քաշում էր մի զրվանքայ:

499. Երկու սայլով շաքարաւաղ բերին խանութը. ամեն-մի սայլի վերայ կար 2 տակառ և իւրաքանչեւր տակառումը 22 փուտ: Եւ յիշու շաքարը ածեցին մանր տակառների մէջ, որոնց ամեն-մինը տանում էր 8 փուտ: Վանի՞ տակառ լցրին շաքարով:

500. Չորս երեկոյ ամառը թիթեռներ էին բռնում. նոցանից ամեն-մինը բռնեց 22 հատ. այդ թիթեռները նոքա զրին երկու կողովում հաւասար: Իւրաքանչեւր կողովում քանի՞ թիթեռ զրին:

501. Չորս մեքենան 11 բոպէում քաշում են 88 սաժէն պղնձէ լար: Ո՞րքան լար կքաշեն 3 մեքենան 12 ժամումը:

502. Երկու մշակ բանատիրոջից ստացան 89 մանէթ. նոցանից մինը աւելի ստացաւ միւսից 2 անգամ և էլի 5 մանէթ: Ո՞րքան ստացաւ ամեն-մինը:

503. Երեկոքը գնեցին 89 գեղձ և բաժանեցին այսպէս՝ 7 երեկոյ վերցրին եօթը հատ, իսկ մնացածները տասը-տասը հատ: Ընդամենը քանի՞ երեկոյ էին:

504. Մի դասատան մէջ 18 աշակերտ կար. նոքա փող վեր եկան, ամեն-մինը 5 կոպէկ և հաւասար բաժանեցին 10 չքաւոր ընկերներին: Իւրաքանչեւրին որքան փող ընկաւ:

505. Մի երեկոյ 56 կակալ ունէր, իսկ միւսը նորանից 22-ով պակաս: Ամեն-մինը քանի՞ կակալ պէտք է տայ երրորդին, որ ամենն էլ հաւասար ունենան:

506. Ուսումնարանումը 3 դասատուն կայ և 90 աշակերտ և ամեն-մի դասատունը երկու հաւասար բաժանմունք ունի: Վանի՞ աշակերտ կայ իւրաքանչեւր բաժանման մէջ:

507. Գիւղացին 5 դեռնաւին հողում զարի ցանեց. ամեն-մէկում 3 չեւերտ և ինքը ստացաւ մէկին-վեց: Նա որքան

փող կստանայ, եթէ որ 50 չեալերտ պահի իւր համար, իսկ մնացածի իւրաքանչիւր 4 չեալերտը վաճառի 9 մանէթով:

508. Աշակերտը 7 տետրակ առաւ և տուեց երկու շահանոցներ. նա ամեն-մի 2-շահանոցից յետ ստացաւ 3 կոպէկ: Ամեն—մի տետրակին ո՞րքան տուեց, եթէ որ յետ ստացած փողը եղաւ 27 կոպէկ:

509. Արկու որսորդ մարջ եկան, որ ամեն-մի յաջող դարկի համար ստանան 6 մանէթ, իսկ անյաջողի համար վճարեն 4 մանէթ: Նոցանից ամեն-մինը հրացանը արձակեց 29 անգամ, որոնցից առաջինը նշանին ղիպցրեց 15 անգամ, իսկ երկրորդը 14 անգամ: Առաջինը ո՞րքան փող տարաւ:

510. Վաճառականը մի հատ արծաթէ տուփ առաւ, լրտը 83 կոպէկով, իսկ ինքը վաճառեց լրտը 90 կոպէկով և աշխատեց 84 կոպէկ: Քանի՞ լրտ էր քաշում տուփը:

511. Իմ երկու զրպանումը կայ 90 կոպէկ. մէկի մէջ որքան 2-շահանոց կայ, այնքան էլ միւսում մի շահանոց կայ: Ո՞րքան փող կայ ամեն-մի զրպանումս:

512. Մի մրգավաճառ տուեց միւսին 18 զրվանքայ խաղող, որի տասը զրվանքան արժէր 50 կոպէկ, իսկ միւսը դորա փոխարէն տուեց կիտրոններ, որոնց ամեն-մինը արժէր 6 կոպէկ: Նա քանի՞ կիտրոն տուեց:

513. Այգիումը տնկած էր 84 ծառ հաւասար կարգերով: Ո՞րքան ծառ կար ամեն-մի կարգումը:

514. Հովիւը նախիրը ու հօտը պահելու համար ստանում է ամեն-մի կովի համար 1 մանէթ, ամեն-մի ոչխարի համար կէս մանէթ, ամեն-մի այծի համար քառորդ մանէթ: Նա ո՞րքան փող կվերցնի, եթէ որ պահելիս լինի 54 կով, 56 ոչխար և 24 այծ:

515. Գործարանատէրը 7 մշակին ամսական վարձ տուեց 84 մանէթ: Այդ փողի երեք-չորրորդական մասը նոքա մսխեցին կերակուրի համար, իսկ մնացածը հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Ամեն-մինը ո՞րքան ստացաւ:

516. Ուսումնարանումը 84 աշակերտ կար, արձակուրդի ժամանակը դոցա վեցերորդ մասը զնաց զիւղը, եօթերորդ մասը մնաց քաղաքում ծնողների մօտ, իսկ մնացածը զնաց ամառանոց: Քանի՞ աշակերտ զնաց ամառանոց:

517. Արեւիսան հօրիցը ստացաւ 90 կոպէկ. դորա երկու-երրորդ մասը տուեց ղանակի, իսկ մնացածին առաւ 3 տետրակ: Ո՞րքան տուեց ամեն-մի տետրակին:



ԽՆԴԻՐՆԵՐ

91—100

518. Թնդանօթի զնդակները դարսած էին այնպէս, որ ներքի կարգումը կար 6 անգամ 6 հատ, երկրորդումը 5 անգամ 5 հատ և այլն. և ամենավերին կարգումը 1 հատ: Ընդամենը քանի՞ զնդակ կար:

519. Մի երեխայ ասում էր միւսին. եթէ ինչ տան 6 անգամ այնքան կոճի որքան ես այժմ ունեմ և էլի 7 կոճի, այն ժամանակը ես կունենայի 91 կոճի: Նա քանի՞ կոճի ունէր:

520. Չորս երեխայ 2 զրվանքայ կակալ առան. ամեն-մի զրվանքան քաշում էր 46 հատ, այդ կակալներից առաջինը վերցրեց 8 հատ. երկրորդը նորանից 4 անգամ աւելի, երրորդը առաջինից 20-ով աւելի, իսկ մնացածը վերցրեց չորրորդը: Քանի՞ կակալ ընկաւ չորրորդին:

521. Գիւղացին ճանապարհ ընկաւ զիւղիցը ղէպի քաղաք երկաթուղով և հասաւ այն տեղ 4 ժամումը. նա ամեն-մի ժամումը զնում էր 23 վերստ: Վերադառնալիս նա ոտով զնաց 15 վերստ, յետոյ պատահելով իւր ծանօթին՝ նստեց

նորա սայլումը և հասաւ զիւղը. սայլը մի ժամումը գնում էր 7 վերստ: Նա քանի՞ ժամ գնաց սայլով:

522. Չորս բաժին արեք 92-ը այնպէս, որ ամեն-մի հետեւեալ բաժինը 4-ով աւելի լինի իւր նախորդ բաժնից: Որքան կլինի առաջին բաժինը:

523. Նս ունէի 93 կոպէկ. առայ 5 տետրակ, ամեն-մէկը 12 կոպէկով. իսկ մնացած փողովը առայ զրիչներ, ամեն-մի դիւժինը 3 կոպէկով: Նս քանի՞ դիւժին զրիչ առայ:

524. Մի մարդ առաւ 3 տասնեակ խնձոր և 3 տասնեակ ծիրան, այդ բոլորին տուեց 93 կոպէկ: Որքան արժէր ծիրանի տասնեակը, եթէ որ խնձորինը արժէր 24 կոպէկ:

525. Երեք մարդ միասին 93 մանէթի մահուտ առան և բաժանեցին հետեւեալ կերպով՝ առաջինը վերցրեց 8 արշին, միւսը 10 արշին, իսկ երրորդը 13 արշին: Նոցանից ամեն մինը որքան տուեց իւր մահուտին:

526. Դերձակը առաւ 5 արշին թաւիշ, արշինը 9 մանէթով և 7 արշին կարմիր մահուտ: Նա որքան փող տուեց այդ բոլորին, եթէ որ կարմիր մահուտի արշինը 2 մանէթ պակաս արժէր թաւիշի արշինից:

527. Նս կարդում էի մի զիրք. առաջին անգամը կարդացի 4 ժամ, ամեն-մի ժամումը 7 թերթ. յետոյ կարդացի 6 ժամ, ամեն-մի ժամումը 8 թերթ: Որքան է մնացել կարդալու, եթէ որ զիրքս բաղկացած է 94 թերթից:

528. Երկու աղախին ձուաներ առան մի գնով. առաջինը առաւ 9 տասնեակ, իսկ միւսը 4 տասնեակ և առաջինը 95 կոպէկ աւելի տուեց միւսից: Երկրորդ աղախինը որքան փող տուեց:

529. Վաճառականը միմեանց հետ խառնեց 12 զրվանքայ աղ, զրվանքան 6 կոպէկանոց և 7 զրվանքայ, զրվանքան 3 կոպէկանոց և այդ խառնած աղը վաճառեց այնպէս, որ բոլորի մէջ աշխատեց 2 կ: Նա որքանով վաճառեց խառնածի զրվանքան:

530. Երկու մարդ գնում էին քուչայով. նոցանից մինը մի րոպէում անում էր 10 քայլ, իսկ միւսը 12 քայլ: Երկրորդը 8 րոպէից յետոյ քանի՞ քայլ առաջ կընկներ առաջինից, եթէ որ սկզբումը առաջինը 6 քայլ առաջ էր երկրորդից և նոցա քայլերը հաւասար էին:

531. Երկու երկնայ միասին 96 կոպէկ ունէին. նոցանից ամեն-մինը առաւ 5 մատիտ դորանից յետոյ մէկի մօտ մնաց 16 կոպէկ, իսկ միւսի մօտ 30 կոպէկ: Ամեն-մինը որքան փող ունէր սկզբումը:

532. Տունը բաղկացած էր 4 սենեակից. ամեն-մի սենեակը ունէր 3 լուսամուտ և ամեն-մի լուսամուտը՝ 8 ապակի: Ընդամենը քանի՞ ապակի կար տան լուսամուտներումը:

533. Մշակը տարէնը պէտք է ստանար 96 մանէթ. նա զանազան ժամանակներում վերցրել էր 14 մանէթ. նա ծառայեց միայն 10 ամիս և ստացաւ էլի 43 մանէթ փող, իսկ մնացածին շոր: Նորա ստացած շորը որքան արժէր:

534. Գիւղացին պէտք է գնար 96 վերստ ճանապարհ. նա գնաց 12 ժամ, մի ժամումը 3 վերստ. իսկ մնացած ճանապարհը գնաց, ամեն-մի ժամումը 10 վերստ անելով: Նա քանի՞ ժամանակ էր ճանապարհորդում, եթէ որ 12 ժամ էլ հանգստացաւ:

535. Տասներկու զինուորին 4 օրումը տալիս են 96 զրվանքայ հաց: Որքան հաց պէտք է տալ 5 օրումը 9 զինուորին:

536. Վեց մշակ 4 օրումը մի արիւ հանեցին, որի երկարութիւնը 96 սաժէն էր: Եւսկ երկարութեան արիւ կարող էին հանել 8 մշակը 3 օրումը:

537. Մրգավաճառը 3 արկղում 96 կիտրոն ունէր. նա իւրաքանչեւ արկղից հաւասար վաճառեց. դորանից յետոյ մէկի մէջ մնաց 12 կիտրոն, միւսումը 18 և երրորդումը 15: Ամեն-մի արկղումը քանի՞ կիտրոն կար մինչև վաճառելը:

538. Երկաթէ լարը քաշում էր 96 զրվանքայ. դորան հաւասար կտրներ արին. ամեն-մի կտորի երկարութիւնը

դուրս եկաւ 7 սաժէն, իսկ քաշը 12 դրվանքայ: Բոլոր լարի երկարութիւնը քանի՞ սաժէն էր:

539. Երեք զիւղացի փող վէր եկան և միասին առան 8 դիւթին մէխ. մինը տուեց 9 կոպէկ, միւսը 5 կոպէկ. իսկ երրորդը 10 կոպէկ: Ամեն-մէկին քանի՞ մէխ պէտք է հասնի:

540. Մի մշակ գործարանում բանեց 24 շաբաթ, իսկ միւսը 16 շաբաթ հաւասար գնով և առաջինը 32 մանէթ աւելի ստացաւ երկրորդից: Նոցանից իւրաքանչիւրը ռըքան փող վաստակեց գործարանումը:

541. Մրգավաճառը հաշուեց, որ եթէ նա վաճառի 29 կիտրոն, այն ժամանակը 64 կոպէկ պակաս կստանայ այն դու-մարից, որ կամենում էր այդ օրը ստանալ, իսկ եթէ վաճառի բոլոր 45 հատը, այն ժամանակը իւր կամեցածից 32 կոպէկ էլ աւելի կստանայ: Նա ռըքանով էր վաճառում ամեն-մի կիտրոնը:

542. Վաճառականը իւրաքանչիւր 5 մատիտը առնում էր 20 կոպէկով, իսկ ինքը վաճառում էր իւրաքանչիւր 6 հատը 36 կոպէկով. այդպէս նա բոլոր վաճառած մատիտների մէջ աշխատեց 96 կոպէկ: Նա քանի՞ մատիտ էր վաճառել:

543. Ես ունէի 3 հատ ապաստանոց, 3 հատ մի-շահա-նոց և 11 հատ 2-կոպէկանոց: Այդ փողերովը առայ 7 տեա-րակ, ամեն-մինը 8 կոպէկով և 6 մատիտ, ամեն-մինը 3 կո-պէկով: Ինձ մօտ ռըքան փող մնաց:

544. Մի մարդ 97 մանէթ պարտքը վճարեց 4 ամսումը, այնպէս որ ամեն-մի հետեւեալ ամսումը աւելի էր վճարում նախորդ ամսի վճարածից և այդպէս վերջին ամսի վճարը 3 անգամ աւելի էր առաջին ամսուայ վճարածից: Նա իւրա-քանչիւր ամիս ռըքան էր վճարում:

545. Իմ 2 զրպանումը միասին 98 կոպէկ կար. բայց երբ ամեն-մի զրպանիս փողեցը հաւասար մնխեցի, այն ժամանակը մի զրպանումն մնաց 29 կոպէկ, իսկ միւսումը 37 կոպէկ: Ամեն-մի զրպանումն ռըքան փող կար:

546. Մշակը գործարանումը բանելով 98 օր՝ շարժէնը

ստանում էր 5 մանէթ: Նա քանի՞ ամիս կարող է ապրել այդ փողերովը, եթէ որ ամսէնը մնխի 10 մանէթ:

547. Երաշտութեան պատճառով երեք զիւղական ընտա-նիքի տուին 98 մանէթ, որ մարդագլուխ հաւասար բաժանեն: Որքան ստացաւ ամեն-մի ընտանիքը, եթէ որ մէկումը կար 5 հոգի, միւսումը 3, իսկ երրորդումը 6:

548. Ուսումնարանի ամեն-մի որդեգրի համար նշանակած էր ամսէնը 12 զրիչ: Մի ամիս 7 աշակերտ վերցրին միայն ութ-ութ հատ, իսկ մնացածները աասը-տասը հատ, այդպէս այդ ամսումը 98 զրիչ պակաս գործ դրվեց սովորականից: Քանի՞ որդեգիր կար այդ ուսումնարանումը:

549. Ննցեալ տարի 99 կոպէկով կարելի էր առնել 11 զրվանքայ նաւթ, իսկ այս տարի ամեն-մի զրվանքան 2 կոպէկ աւելի արժէ: Նոյն փողով այժմ քանի՞ զրվանքայ նաւթ կարելի է առնել:

550. Որդին 3 անգամ փոքր էր հօրիցը, իսկ հայրը 3 անգամ փոքր է պապիցը: Որդին քանի՞ տարեկան է, եթէ որ պապը 27 տարով մեծ է 72 տարեկան տատիցը:

551. Երկու հիւսն աթոռները նորոգելու համար ստա-ցան միասին 99 մանէթ. նոցանից մինը նորոգեց 19 աթոռ, իսկ միւսը 14. Ամեն-մինը ռըքան պէտք է վերցնի:

552. Երեք մրգավաճառ 46 խնձոր ունէին. նոքա վա-ճառեցին հաւասար գնով. նոցանից մինը իւր խնձորներիցը վաճառեց 30 կոպէկի և էլի մնաց 6 հատ. միւսը վաճառեց 24 կոպէկի և էլի մնաց 4 հատ, իսկ երրորդը վաճառեց 45 կոպէկի և էլի մնաց 3 հատ: Ամեն-մինը քանի՞ խնձոր ունէր:

553. Երեք խումբ մշակ մի ամսումը ստացան 99 մանէթ: Ամեն-մի խումբը ռըքան պէտք է վերցնի, եթէ որ առաջին խմբումը կար 12 հոգի, երկրորդումը 10-ը, իսկ երրորդումը 11:

554. Ղանապարհորդը մի քաղաքից դնաց դէպի միւս քա-ղաքը 11 ժամ, նա ամեն-մի ժամումը դնում էր 9 վերստ, էլի մնաց դնալու 1 վերստ: Նա քանի՞ ժամումը կերթար այդ

բոլոր ճանապարհը, եթէ որ ամեն մի ժամումը զնոր 10 բ վերստ:

555. Դասատան մէջ 5 նստարան կար, ամեն-մէկի վերայ 5 աշակերտ, այդ բոլոր աշակերտներին բաժանեցին 100 զրիչ: Ամեն-մի աշակերտը քանի՞ կոպէկի զրիչ ստացաւ, եթէ որ զրչի զիւժինը արժէր 6 կոպէկ:

556. Հայրը իւր որդիներէնցը տուեց 1 մանէթ և հրամայեց, որ ամեն-մի տղան վերցնի 30 կոպէկ, իսկ ամեն-մի աղջկը 20 կոպէկ: Նա քանի՞ որդի ունէր, եթէ որ տղերքը ու աղջկերքը հաւասար էին:

557. Գիւղացին պէտք է զնոր 100 վերստ. նա զնաց 13 ժամ, ամեն մի ժամումը 4 վերստ. յետոյ պառնահեց իւր ծանօթին, նստեց նորա սայլի մէջ և տեղ հասաւ. սայլը մի ժամումը գնում էր 7 վերստ: Նա քանի՞ ժամ զնաց սայլով:

558. Աշակերտը կամենում էր սովորել 100 բառ. 7 օր նա սովորեց օրէնը 8 բառ, յետոյ 5 օր սովորեց օրէնը 7 բառ, իսկ մնացածը սովորեց մի օրումը: Նա քանի՞ բառ սովորեց վերջի օրումը:

559. Մի մրգավաճառ միւսին տուեց 20 կիտրոն, մինը 4 կոպէկով. իսկ միւսը դորա փոխարէն տուեց խնձորներ, որոնց 10 հատը արժէր 8 կոպէկ: Ներկրորդը քանի՞ խնձոր տուեց:

560. Աղախինը գնեց 4 ձուտ, բայց յետոյ զոցանից 3 յետ տուեց և 20 կոպէկ էլ աւելացնելով՝ առաւ մի սագ: Նա որքանով առաւ ձուտը և սագը, եթէ որ այդ երկուսին միասին տուեց 1 մանէթ:

561. Որդին հօրիցը ստացաւ 5 հատ ապաստանոց և առաւ պատկերներ, մինը 25 կոպէկով: Նա բոլոր փողովը քանի՞ պատկեր առաւ:

562. Մանրում ծախողը ունէր 3 կապոց մատիտ, բոլորը միասին 62 հատ. նա մի կապոցիցը վաճառեց 36 կոպէկի և էլի մնաց 5 հատ, միւսիցը վաճառեց 24 կոպէկի և էլի մնաց 7 հատ, իսկ երրորդ կապոցը վաճառեց 40 կոպէկով: Ամեն-

մի կապոցումը քանի՞ մատիտ կար:

563. Դահլիճումը դարսած էր 96 աթոռ հաւասար կարգերով: Վանի՞ կարգ էր դարսած և քանի՞ աթոռ կար իւրաքանչիւր կարգումը:

564. Ութ ղիւժին մատիտ բաժանեցին աշակերտներին հետեւեալ կերպով՝ բոլոր մատիտների չորրորդ մասը տուին առաջին դասատանցւոյ, մնացածի վեցեցորդ մասը տուին երկրորդ դասատանցւոյ, մնացի տասերորդ մասը տուին երրորդ դասատանցւոյ, իսկ մնացածը բաժանեցին չորրորդ դասատանցւոյ և ամեն-մի աշակերտին ընկաւ 2 մատիտ: Վանի՞ աշակերտ կար չորրորդ դասատանը:

565. Նս իմ փողի չորրորդ մասը տուի զրքերի, մնացածի հինգերորդ մասը տուի թղթի և ինչ որ մնաց նորանով առայ կիտրոնների, մինը 6 կոպէկով: Նս քանի՞ կիտրոն առայ, եթէ որ ընդամենը ունէի 1 մանէթ:

566. Մի մրգավաճառ միւսին տուեց չորս ու կէս տասնեակ խնձոր, որոնց տասնեակը արժէր 20 կոպէկ, իսկ միւսը առաջինին տուեց 26 կիտրոն, որոնց տասնեակը արժէր 30 կոպէկ: Ո՞վ ում պարտ մնաց և որքան:

567. Մի մարդ խանութին պարտ էր 100 մանէթ. նա առաջին ամսումը վճարեց պարտքի տասերորդ մասը, երկրորդումը՝ հինգերորդ մասը, երրորդումը՝ չորրորդ մասը, չորրորդումը՝ քսաներորդ մասը, իսկ մնացածը վճարեց երկու ամսում հաւասարապէս: Նա որքան փող վճարեց վերջին ամսումը:

ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՎԵՐԱՅԱԿԱՆ ԹՈՒԵՐՈՎ

1—100

Գումարում

1+1=	2+2=	3+4=	5+1=	7+2=	7+3=
1+2	2+3	3+5	5+2	7+3	8+1
1+3	2+4	3+6	5+3	8+1	3+5
1+4	2+5	3+7	5+4	8+2	4+2
1+5	2+6	4+1	5+5	9+1	6+3
1+6	2+7	4+2	6+1	2+3	8+2
1+7	2+8	4+3	6+2	3+4	9+1
1+8	3+1	4+4	6+3	5+1	3+3
1+9	3+2	4+5	6+4	6+2	4+1
2+1	3+3	4+6	7+1	2+7	5+4

7+1=	1+2+3=	3+2+4=	1+1+1+1=
6+4	2+3+4	5+1+2	2+2+2+2
5+2	5+3+2	3+1+3	1+1+2+2
1+5	2+4+1	4+4+1	3+3+1+1
3+6	3+1+5	4+3+3	2+2+3+3
1+9	6+1+2	6+2+2	1+2+3+4
2+5	7+2+1	4+1+3	2+2+2+3
4+4	8+1+1	7+1+1	2+3+3+1
4+6	4+5+1	3+3+3	2+3+1+2
9+1	5+2+2	2+2+2	4+1+1+2

Հանում (—)

1-1=	2-2=	4-3=	7-4=	6-6=
2-1	3-2	5-3	8-4	7-6
3-1	4-2	6-3	9-4	8-6
4-1	5-2	7-3	10-4	9-6

5-1	6-2	8-3	5-5	10-6
6-1	7-2	9-3	6-5	7-7
7-1	8-2	10-3	7-5	8-7
8-1	9-2	4-4	8-5	9-7
9-1	10-2	5-4	9-5	10-7
10-1	3-3	6-4	10-5	8-8

9-8=	3-1=	3-3=	6-3=	3-2=
10-8	5-2	5-4	7-4	8-8
9-9	7-1	7-5	8-2	10-1
10-9	8-3	8-7	9-5	9-6
10-10	6-2	6-1	10-4	10-6
7-3	4-3	9-8	5-1	9-4
4-2	8-6	10-3	6-4	10-7
6-5	10-2	8-5	7-6	5-3
8-4	9-4	9-2	8-1	4-1
9-3	7-2	10-5	9-7	9-1

10-3-2=	9-4-1=	8-3-2=	10-2-1-3
10-4-3	9-3-5	7-4-1	9-3-2-2
10-5-1	9-2-3	6-1-4	10-4-4-2
10-6-2	9-1-5	5-2-2	8-2-2-2
10-7-3	9-5-2	4-2-1	7-1-2-3
10-8-1	9-6-1	3-1-1	10-5-2-1
10-9-1	9-7-1	2-1-1	9-4-3-2
10-5-4	9-8-1	8-6-1	8-5-1-1
10-6-3	9-4-4	7-2-4	10-3-4-1
10-2-5	9-3-3	6-2-2	9-7-1-1

Գումարում և Հանում

6+3-5=	10-6+2=	10-7+5=	2+7-4+5=
--------	---------	---------	----------

$$\begin{array}{llll}
 2+7-6 & 9-4+3 & 8+2-6 & 8-5+2-3 \\
 3+5-4 & 8-2+4 & 10-4+2 & 6+4-8+5 \\
 1+7-3 & 7-6+5 & 6+3-7 & 9-6+7-8 \\
 8+2-6 & 6-2+4 & 9-4+5 & 4+2-3+7 \\
 9+1-7 & 5-3+7 & 4+3-6 & 10-8+6-4 \\
 4+5-2 & 4-2+6 & 10-5+2 & 9+1-6+4 \\
 5+4-3 & 10-8+6 & 2+7-8 & 7-5+8-6 \\
 7+3-8 & 9-6+7 & 9-6+6 & 3+6-8+5 \\
 4+4-6 & 8-5+4 & 3+5-6 & 10-6+5-6
 \end{array}$$

$$\begin{array}{ll}
 10-3-5+6-4= & 8-4+6-3+2-8= \\
 9-5+6-2-4 & 6+2-5+7-6-2 \\
 8-6+4+3-5 & 10-6-3+7+2-5 \\
 4+5-7+6-3 & 9-7+5+3-8+7 \\
 10-6+4+2-3 & 4+6-8+6+2-10 \\
 5+3-7+4+5 & 7-5+6+2-3-5 \\
 6-4-1+8-6 & 3+7-1-5+2-6 \\
 7+3-10+4+3 & 10-1-7+6-4+5 \\
 1+7-4+5-8 & 2+8-6+3+3-5 \\
 10-6-3+6-4 & 6-4+8-4+3-9
 \end{array}$$

$$\begin{array}{ll}
 10-4+2-7+5-3+6= & 10-6+3+2-8+6+3-4= \\
 5+5-3-5+4+4-10 & 5+2-7+4-6-8+3+5 \\
 9-3+4-8+7+1-7 & 9-7+8-10+5+4-3-6 \\
 4+5-6+7-4-5+8 & 3+7-6+5-7+6-4+6 \\
 10-3-5-2+9+1-6 & 10-2-7+9-10+2+7-4 \\
 8-6+5+3-4-3-3 & 2+6-4+5-6+7-5+2 \\
 4+4+2-8+6+2-9 & 7-4+6-9+8+2-6+4 \\
 3+3-6+9-7+7-6 & 1+5+4-8+7-6+3-6 \\
 10-9+6-7+3+6-4 & 10-5-3+7-8+6+3-9 \\
 2+3+5-4-2-1-3 & 8+2-6+5-7-2+4+6
 \end{array}$$

$$\begin{array}{l}
 10-3-6+8-4+3-7+9-2= \\
 4+5-8+6-7+6+3-5-2 \\
 6+2+2-10+7+3-10+8-1 \\
 9-3+4-5+3-7+6+3-2 \\
 10-9+8-7+8-7+6-7+8 \\
 3+3+3+1-2-2-2-2-2 \\
 4+4+1-3-3-2-7+2-6 \\
 8-6+2+2+2-7+9-5-5 \\
 5+5-4-4+3+3-2-2+6 \\
 7+3-6-4+5+4-6-3+1
 \end{array}$$

$$\begin{array}{l}
 10-8+3+5-6-4+2+8-7+3= \\
 10-1-2-3-4+6+3+1-3-7 \\
 9-4-3+8-1-7+4+4-8+7 \\
 9-6+7-2-8+10-3-4+6-5 \\
 8-4+6-4-5+8-7+8-5+2 \\
 8+1-2+3-6+5-7+6-5+7 \\
 7+2+1-9+4+5-8+7-1-8 \\
 7-6+8-4+5-3-3-3+4+2 \\
 6-3+7-4-4+8-2-2-2-2 \\
 6+2+2-7-3+9-6+7-4-6
 \end{array}$$

Բազմապատկում և բաժանում (X):

1X1=	2X1=	5X1=	1:1=	2:2=	6:2=
1X2	2X2	5X2	2:1	3:3	8:2
1X3	2X3	2X4	3:1	4:4	10:2
1X4	2X4	3X3	4:1	5:5	6:3
1X5	2X5	6X1	5:1	6:6	9:3
1X6	3X1	3X2	6:1	7:7	8:4
1X7	3X2	7X1	7:1	8:8	10:5
1X8	3X3	4X2	8:1	9:9	6:6
1X9	4X2	8X1	9:1	10:10	8:1
1X10	4X2	2X3	10:1	4:2	4:4

Նշանակիր +, -, × և :

$3 \times 2 + 2$	$3 + (2 \times 3)$	$8 : 2 + 3$
$5 \times 2 - 4$	$15 - (3 \times 3)$	$10 : 2 - 4$
37. Մի նահանգ 9 զաւառ ունէր. մի զաւառի բնակիչներին թիւն էր 599418, միւսինը 100586, երրորդինը 80817, չորրորդինը 77454, հինգերորդինը 57894, վեցերորդինը 103068, եօթերորդինը 38560, ութերորդինը 57978 և իններորդինը 45155: Ընդամենը քանի՞ բնակիչ կար այն նահանգում:

38. Ներդրական Ռուսաստանում համարվում է 65 միլիոն 500 հազար բնակիչ, Ֆինլանդիայումը 2500 հազար, Վիսկոնսին երկրներում 5 միլիոն, Սիբիրիայում 4500 հազար և Վոլկատում 3500 հազար: Ռուսաց բոլոր կայսերութեան մէջ ո՞րքան բնակիչ կայ:

39. Առաջին քաղաքից մինչև երկրորդը 1362 վերստ է, իսկ երկրորդից մինչև երրորդը 604 վերստ է: Նանապարհօրդը քանի՞ վերստ պէտք է անի, որ առաջին քաղաքիցը հասնի երրորդ քաղաքը և կրկին վերադառնայ:

40. Մի կալուածատէր իւր խոտհարքիցը վերցրեց 32568 փուտ խոտ, իսկ միւսը 9534 փուտ նորանից աւելի: Ներկուսը միասին քանի՞ փուտ խոտ վերցրին:

41. Զօր թողած ժառանգութիւնից առաջին օրդին վերցրեց 7560 մանէթ, երկրորդը 6470 մանէթ, իսկ աղջիկը այդ երկուսի չափ: Ո՞րքան էր բոլոր ժառանգութիւնը:

42. Ալալուածատէրը մի տեղ ունէր 2348 օրավար հող, միւս տեղ 456 օրավար առաջինից աւելի, իսկ երրորդ տեղում այդ երկուսիցը 938 օրավար աւելի: Նա ընդ ամենը քանի՞

օրավար հող ունէր:

43. Շաքարի գործարանը առաջին տարին տուեց 23648 մանէթ արդիւնք, իսկ իւրաքանչիւր հետեւեալ տարին 4578 մանէթ աւելի էր բերում նախորդ տարուց: Ընդամենը ո՞րքան արդիւնք ստացվեց 6 տարումը:

44. Մի շողենաւի վերայ բարձած էր 5846 չեռվերտ ցօրին, միւսի վերայ 356 չեռվերտ առաջինից աւելի, երրորդի վերայ առաջին երկուսի չափ, իսկ չորրորդի վերայ 748 չեռվերտ երկրորդիցը աւելի: Ընդամենը ո՞րքան ցօրին էր բարձած չորս շողենաւի վերայ:

45. Ալալուածատէրը իւր մի կալուածը ծախեց 56780 մանէթով, իսկ միւսը 3 անգամ դորանից աւելով, էլի ծախեց մի տուն 18960 մանէթով և մի մահուտի գործարան դորանից 2 անգամ աւել ու: Ե՛ւր բոլորը ո՞րքանով ծախեց:

ՀԱՆՈՒՄՆ

Թուական օրինակներ եւ խնդիրներ:

46.	578—235	56.	6378—3945
47.	691—349	57.	7825—4358
48.	718—495	58.	8321—5657
49.	811—564	59.	7650—4786
50.	960—632	60.	8400—5927
51.	805—497	61.	8075—3697
52.	700—586	62.	7050—3284
53.	3689—2456	63.	9000—4267
54.	4781—3258	64.	37659—25427
55.	5926—4573	65.	47651—35426

66. 58435 — 45198

67. 69217 — 54679

68. 71254 — 36978

69. 85670 — 46795
 70. 74200 — 38567
 71. 65000 — 48073
 72. 80000 — 57089
 73. 60705 — 24850
 74. 70030 — 45078
 75. 62850497 — 36954783

76. Երկու ուսումնարանում միասին կային 936 աշակերտ
 և դոցանից մեկում 428 հոգի էին: Վանի՞ն էին միւսումը:

77. Առաջին քաղաքից մինչև երկրորդը 489 վերստ էր,
 իսկ մինչև երրորդ քաղաքը 1093 վերստ էր: Ճանապարհորդը
 առաջին քաղաքից հասաւ երկրորդը: Վանի՞ վերստ էր մնա-
 ցել, որ նա հասնէր երրորդ քաղաքը:

78. Լճի խորութիւնը չափելու համար 1257 սաժէն թո-
 կի ծայրիցը քար կապեցին և շոգենաւի վերայից թողեցին ջրի
 մէջ, երբ թոկի ծայրը հասաւ յատակին, շոգենաւի վերայ
 էլի մնաց 439 սաժէն թոկ: Ո՞րքան էր լճի խորութիւնը այդ
 տեղում:

79. Եփեսոսեան համար առան 150 հազար աղիւս,
 բայց զործ զրին միայն 128596 հատ: Վանի՞ աղիւս մնաց:

80. Մի մարդ երկու տուն առաւ 72640 մանէթով, ո-
 ռոնցից մինը արժէր 23560 մանէթ: Ո՞րքան արժէր միւս տունը:

81. Մի նահանգում կար 1160930 բնակիչ, իսկ միւ-
 սում 1678784 բնակիչ: Երկրորդ քաղաքի բնակիչները քա-
 նիսով էին աւելի առաջնից:

82. Վառօղի մի գործարանումը մի տարուայ ընթացքում
 պատրաստեցին 82564 զրվանքայ վառօղ, իսկ միւսում
 115623 զրվանքայ: Երկրորդ գործարանումը քանի՞ զրվանքայ
 առաջնից աւելի պատրաստեցին:

83. Ամբողջ նահանգի բնակիչները 1521577 հոգի էին,

որոնցից զաւառներումը 1395935 հոգի էին: Վանի՞ բնակիչ
 կար նահանգական քաղաքումը:

84. Սուրհանդակը չորս օրումը գնաց 1100 վերստ, առա-
 ջին օրը գնաց 256 վերստ, երկրորդ օրը 283 վերստ և երրորդ
 օրը 272 վերստ: Նա քանի՞ վերստ գնաց չորրորդ օրը:

85. Քուչայի երկարութիւնը 485 սաժէն էր. դորան քա-
 րեցին 4 ամսումը. առաջին ամսումը քարեցին 126 սաժէն,
 երկրորդում 97 սաժէն, երրորդում 135 սաժէն, իսկ մնացածը
 աւարտեցին չորրորդ ամսումը: Վանի՞ սաժէն քարեցին չորրորդ
 ամսումը:

86. Վաճառականը երեք մարդի պարտ էր 82546 մանէթ.
 մէկին պարտ էր 9645 մանէթ, միւսին 27966 մանէթ, իսկ
 մնացածը պարտ էր երրորդին: Նա ո՞րքան էր պարտ երրորդին:

87. Վաճառականը առուտուր սկսեց 58600 մանէթով
 և առաջին տարին աշխատեց 2375 մանէթ, երկրորդ տարին
 ֆնաս արաւ 3647 մանէթ, երրորդ տարին աշխատեց 1258 մա-
 նէթ, իսկ չորրորդ տարին ֆնաս արաւ 4567 մանէթ: Նա քա-
 նի՞ մանէթ ունեցաւ չորրորդ տարու վերջին:

88. Եւրոպան 180 հազար քառակուսի մղոն է, Ասիան
 880 հազար, Ափրիկան 545 հազար, Ամերիկան 672 հազար,
 Աւստրալիան 160 հազար. իսկ երկրագնդի բոլոր մակերեսը
 է 9 միլիոն և 250 հազար քառակուսի մղոն: Վանի՞ քառա-
 կուսի մղոն անդ են բռնում ովկիանոսները:

89. Մի նահանգ ունէր 1497995 բնակիչ. դոցանից մի
 զաւառում կար 279408 բնակիչ, միւսում 136359, երրոր-
 դում 353312, չորրորդում 257666, հինգերորդում 134805,
 իսկ մնացածն էր վեցերորդում: Վանի՞ բնակիչ կար վեցերորդ
 զաւառում:

90. Մի նաւով բերին 426 սաժէն փայտ, միւսով 38
 սաժէն դորանից աւելի, իսկ երրորդով 69 սաժէն պակաս երկ-
 րորդից: Այդ բոլոր փայտից վաճառեցին 897 սաժէն: Ո՞րքան
 փայտ մնաց նաւերի վերայ:

91. Հայրը իւր երեք տղին և երկու աղջկանը 56420 մանէթ ժառանգութիւն թողեց, զորանից մի որդին վերցրեց 10840 մանէթ. միւսը 12560 մանէթ, երրորդը 3849 մանէթ երկրորդիցը պակաս. մի աղջիկը ստացաւ 8570 մանէթ, իսկ երկրորդ աղջիկը մնացածը: Երկրորդ աղջիկը որքան ստացաւ:

92. Պապալառուն շինեց երեք երկաթուղի և այդ բոլորի համար ստացաւ 16578342 մանէթ. զոցանից մէկի համար ստացաւ 8274375 մանէթ, միւսի համար զորանից 2896587 մանէթ պակաս, իսկ մնացածը ստացաւ երրորդի համար: Նա որքան ստացաւ երրորդ ճանապարհի համար:

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

Թուական օրինակներ եւ խնդիրներ:

93. 20×9	102. 76×7	111. 3000×8
94. 40×8	103. 99×6	112. 4700×7
95. 60×7	104. 100×9	113. 5680×5
96. 80×6	105. 500×8	114. 6749×4
97. 14×9	106. 650×7	115. 7059×3
98. 16×8	107. 895×6	116. 8006×4
99. 19×7	108. 904×5	117. 9080×7
100. 25×9	109. 999×4	118. 9999×9
101. 57×8	110. 1000×9	

119. Հետևեալ թուերից իւրաքանչիւրը՝ 10, 30, 75, 100, 300, 670, 785, 806, 1000, 3000, 4200, 5870, 6582, 7043, 8005, 9070 բազմապատկել կարգով 10—ի 100—ի և 1000—ի վերայ:

120. Հետևեալ թուերից իւրաքանչիւրը՝ 10, 50, 87, 100, 500, 670, 785, 802, 1000, 3000, 4700, 5920, 6845, 7069, 8003, 9050 բազմապատկել կարգով 30—ի 50—ի, 70—ի, 90—ի, 400—ի, 600—ի, 800—ի, վերայ:

121. 10×12	129. 58×17	137. 999×99
122. 30×15	130. 79×24	138. 1000×25
123. 50×17	131. 98×36	139. 2000×39
124. 70×19	132. 100×53	140. 3500×46
125. 11×11	133. 500×68	141. 4670×53
126. 16×12	134. 640×75	142. 5937×64
127. 19×18	135. 725×84	143. 6084×78
128. 25×13	136. 807×91	144. 7009×85
		145. 8060×87

146. Հետևեալ թուերից իւրաքանչիւրը՝ 100, 300, 450, 567, 708 կարգով բազմապատկել 560—ի, 675—ի, և 709—ի վերայ:

147. Հետևեալ թուերից իւրաքանչիւրը՝ 1000, 2000, 3500, 4890, 5764, 6059, 7008, 8060, 9999 կարգով բազմապատկել 750—ի, 876—ի և 904—ի վերայ:

148. Հետևեալ թուերից իւրաքանչիւրը՝ 10000, 20000, 35000, 46700, 59830, 63529, 70465, 80050, 90300 կարգով բազմապատկել 2300—ի, 3560—ի, 5875—ի, 5069—ի, 6000—ի և 7080—ի վերայ:

149. $27 \times 35 \times 46$: 152. $52 \times 64 \times 78 \times 86$
 150. $49 \times 57 \times 68 \times 72 \times 81$: 153. $335 \times 456 \times 521$
 151. $408 \times 511 \times 609 \times 702$: 154. $5032 \times 6007 \times 7090 \times 8305$

155. Քաղաքի 8 քուչան լուսաւորվում է վառելանալ-թով և իւրաքանչիւր քուչայի համար մի գիշերում գուրս է գնում 136 զրվանքայ: Որքան նաւթ է գնում մի գիշերում այդ բոլոր քուչաների համար:

156. Երկաթուղին ամենը բերում է 82564 մանէթ ար-դիւնք: Որքան արդիւնք կբերի 9 ամսումը:

157. Ըողենաւը մի օրումը գնում է 289 վերստ, իսկ երկաթուղու գնացքը 567 վերստ: Մի շաբաթուայ ընթացքում երկաթուղու գնացքը ռըքան աւելի կերթայ շողենաւից:

158. Մի մարդ ամսէնը ստանում էր 138 մանէթ 60 կոպէկ ռոճիկ և մնսում էր 89 մանէթ 45 կոպէկ: Նա ռըքան փող յետ կղցէր 6 ամսումը:

159. Աւրուածատէրը իւր 8 օրավարի ամեն-մէկից վեր տուեց 145 փուտ խոտ, իսկ 9 օրավարի ամեն-մէկից վեր տուեց 137 փուտ: Նա ընդամենը ռըքան խոտ վեր տուեց:

160. Աղիւսի զործարանում օրէնը պատրաստում են 3835 աղիւս: Քանի՞ աղիւս կպատրաստեն 16 օրումը:

161. Աւրուածատէրը առաւ 24 դետեալին հող, իւրաքանչիւր դետեալինը 36 մանէթով և 98 կոպէկով: Որքան տուեց նա բոլոր հողին:

162. Աւաճառականը 38 արկղ թէյ առաւ և ամեն-մի արկղին տուեց 286 մանէթ 40 կոպէկ: Բերելու վարձ էլ տուեց իւրաքանչիւր արկղի համար 3 մանէթ 68 կոպէկ: Բոլոր թէյը ճանապարհավարձով միասին ռըքան նստեց նորան:

163. Գործարանումը բանում էին 56 տղամարդ և 49 կինամարդ: Ամեն-մի տղամարդը շաբթէնը ստանում էր 10 մանէթ 65 կոպէկ, իսկ կինարմատը 8 մանէթ 75 կոպէկ: Բոլոր տղամարդիքը 39 շաբաթում կանանցից ռըքան աւելի կրստանան:

164. Գիրքը բաղկացած է 58 թերթից, իւրաքանչիւր թերթը ունի 16 երես, իւրաքանչիւր երեսումը կայ 38 տող և իւրաքանչիւր տողում 42 տառ: Ընդամենը քանի՞ տառ կայ այդ գրքումը:

165. Բերդը պաշարած ժամանակ 198 թնդանօթից իւրաքանչիւրը արձակեցին 36 անգամ և ամեն-մի արձակելիս մի թնդանօթի համար գնում էր 15 գրվանքայ վառօդ: Ընդամենը քանի՞ գրվանքայ վառօդ դուրս գնաց:

166. Աւաճառականը գնեց 675 տակառ վառելանաւթ:

իւրաքանչիւր տակառումը կար 36 փուտ: Որքան արժէ այդ բոլոր նաւթը, եթէ որ գրվանքան արժէ 12 կոպէկ:

167. Երկաթուղու իւրաքանչիւր վերստի շինութիւնը նստում էր 17835 մանէթ: Որքան կնստէր ամբողջ ճանապարհի շինութիւնը, եթէ որ ընդամենը 157 վերստ էր:

168. Մահուտի զործարանի վերայ օրէնը ծախս է լինում 138 մանէթ 74 կոպէկ, իսկ ամսէնը նա բերում է 7546 մանէթ 86 կոպէկ արդիւնք: Այդ զործարանը տարէնը ռըքան զուտ արդիւնք է տալի:

169. Աւաճառականը 786 դետեալին անտառին տուեց 95742 մանէթ, իսկ ինքը իւրաքանչիւր դետեալինը ծախեց 178 մանէթով 48 կոպէկով: Նա ռըքան աշխատեց:

170. Պէտքէր հեռագրալար քաշել 736 վերստ տեղ • իւրաքանչիւր վերստի համար գնում էր 247 փուտ լար • զորանից 93846 փուտ արդէն պատրաստ էր: Որքան լար պէտք էր դարձեալ պատրաստել:

171. Մի ամսվայ ընթացքում 360 շողեկառք ապրանք ուղարկեցին • ամեն-մի շողեկառքով 536 փուտ: Որքան ճանապարհավարձ ստացան այդ ապրանքները ուղարկելու համար, եթէ որ մի փուտի համար ստանում էին 45 կոպէկ:

172. Ֆրանսիան 9594 քառակուսի մղն է և իւրաքանչիւր մղնի վերայ ապրում է 3836 բնակիչ: Որքան բնակիչ ունի Ֆրանսիան:

173. Մի քաղաքից տարուայ ընթացքում արտասահման ուղարկեցին 2568 փուտ ծխախոտ: Որքան արժէր այդ բոլոր ապրանքը, եթէ որ փուտը արժէր 56 մանէթ 38 կոպէկ:

174. Եւրոպայում իւրաքանչիւր քառակուսի մղնի վերայ ապրում է միջին թուով 1550 բնակիչ: Եւրոպայի 180000 քառակուսի մղնի վերայ ռըքան բնակիչ է ապրում:

175. 1858 թուին Մոսկովայում հանեցին 7254 միլիօն բերկովեց քարածուխ, Ամերիկայի Միացեալ Նահանգներում 360 միլիօն ցենտներ, Բելժիայում 992 միլիօն բերկովեց, Պրուսիա-

յում 8432 միլիոն փուտ, Ֆրանսիայում 400 միլիոն ցենտներ, Աւստրիայում 35 միլիոն ցենտներ: Այդ թուին Անգլիայում ճրքան քարածուխ աւելի է հանած քան թէ վերոյիշեալ բոլոր աւելութիւններում, եթէ որ ցենտները 62 փուտ է:

176. Արկաթուղի շինող ընկերութիւնը գորան վերաբերեալ հարկաւոր իրեղէններին վճարեց 4 միլիոն հետեւեալ կերպով՝ առաջին տարին իւրաքանչիւր ամիս վճարեց 48560 մանէթ, երկրորդ տարին իւրաքանչիւր ամիս 73893 մանէթ, երրորդ տարին իւրաքանչիւր ամիս 86745 մանէթ. իսկ մնացածը վճարեց չորրորդ տարին: Չորրորդ տարին նա ճրքան փող վճարեց:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ն

177. 200:2 186. 420:2 195. 842:2 205. 1146:6
178. 4000:4 187. 6300:3 196. 9630:3 206. 3128:4
179. 60000:6 188. 84000:4 197. 120:4 207. 4112:8
180. 400:2 189. 640:2 198. 1800:6 208. 5211:9
181. 6000:3 190. 9600:3 199. 21000:7 209. 5649:7
182. 80000:4 191. 444:4 200. 126:6 210. 4218:6
183. 220:2 192. 6630:6 201. 2160:3 211. 13518:6
184. 5500:5 193. 422:2 202. 112:4 212. 34216:8
185. 77000:7 194. 8440:4 203. 2240:8 213. 45243:9
204. 35100:9 214. 56021:7

215. Հետեւեալ թուերից իւրաքանչիւրը՝ 100, 200, 350, 467, 1000, 3000, 4200, 5680, 6795, 7804, 8090 առաջ բաժանել 10—ի և ապա 100—ի վերայ:

216. Հետեւեալ թուերից իւրաքանչիւրը՝ 10000, 20000, 37000, 49500, 56230, 67953, 74008, 80560, 90070 բաժանել կարգով 100—ի, 1000—ի և 10000—ի վերայ:

217. Հետեւեալ թուերից իւրաքանչիւրը՝ 400, 560, 640, 2000, 2200, 48000, բաժանել կարգով 20—ի, 40—ի և 80—ի վերայ:

218. Հետեւեալ թուերից իւրաքանչիւրը՝ 20000, 24000, 320000 բաժանել կարգով 200—ի, 400—ի, 800—ի, 2000—ի և 4000—ի վերայ:

219. 120:12	229. 6448:16	238. 3638:214
220. 260:13	230. 5472:18	239. 15322:326
221. 4500:15	231. 6432:24	240. 46752:487
222. 90000:16	232. 9875:25	241. 66156:596
223. 121:11	233. 27216:36	242. 80319:653
224. 144:12	234. 42615:45	243. 308506:758
225. 182:13	235. 65232:72	244. 13574:1234
226. 342:18	236. 1221:111	245. 34034:2431
227. 1212:12	237. 1625:125	246. 277992:3564
228. 515:15		

247. 533577 : 4807

248. 1542772 : 5009

249. 3039856000 : 6070

250. 52345 : 236

251. 809767 : 375

252. 7205986 : 1279

253. 8520000 : 3243

254. 57200460 : 5230

255. 60037295 : 7960

256. 123456789 : 65432

257. Ութ հաւասար քթոցի մէջ կար 2120 խնձոր:
Վանի՞ խնձոր կար իւրաքանչիւր քթոցում:

258. Ճանապարհորդը 7 օրում երկաթուղով գնաց 2436 վերստ: Նա միջին թւով օրէնք քանի՞ վերստ էր գնում:

259. Ինք վերստ երկաթուղի շինելու համար վճարեցին 128502 մանէթ: Որքան նստեց ամէն-մի վերստը:

260. Քինուորներին համար 4109 արշին մահուտից վերարկուներ կարեցին և ամեն-մի վերարկուի համար գնաց 7 արշին: Վանի՞ վերարկու զուրս եկաւ:

261. Մի այգեպան քաղեց 3234 վարունկ, իսկ միւսը 6 անգամ նորանից պակաս: Նոքա երկուսը միասին որքան քաղեցին:

262 Տասնութ սայլով բերին 2250 աղիւս: Իւրաքանչիւր սայլի վերայ քանի՞ աղիւս դրին:

263. Վասնուչորս անտառահատ իւրեանց աշխատանքի համար ստացան միասին 177 մանէթ 12 կոպէկ: Ամեն-միւնը որքան ստացաւ:

264. Գործարանումը պատրաստեցին 11424 մանէթի հրացան, ամեն-մի հրացանը արժէր 48 մանէթ: Վանի՞ հրացան էր պատրաստած:

265. Գլքի մէջը կայ 401760 տառ: Վանի՞ երեւից է բաղկացած այդ զիրքը, եթէ որ իւրաքանչիւր երեսում կայ 36 տող և իւրաքանչիւր տողում 45 տառ:

266. Գործարանատէրը ամեն-մի մշակին տարէնը վճարում էր 96 մանէթ: Վանի՞ մշակ ուներ նա, եթէ որ բոլորին վճարում էր տարէնը 45696 մանէթ:

267. Երկրադնդի հասարակածը բաժանվում է 360 աստիճան և մի աստիճանի երկարութիւնը է 105 վերստ: Եթէ որ 1 ժամումը գնան 45 վերստ, քանի՞ ժամանակումը կպտտեն երկրագունդը:

268. Խճուղին ունի 26 իջևան մէկը միւսից 25 վերստ հեռաւորութեամբ և զորա շինելը նստել է 7436 հազար մանէթ: Որքան է նստել իւրաքանչիւր վերստը:

269. Մի մարդ մի նահանգում գնեց 126 ղեսեաութին հող, իսկ միւսում 28 ղեսեաութին դորանից աւելի և բոլորին վճարեց 12880 մանէթ: Ամեն-մի ղեսեաութինը որքան նստեց նորան:

270. Գինեվաճառը 299 մանէթով և 20 կոպէկով առաւ 2 տակառ գինի, ամեն-մի տակառիցը զուրս եկաւ 247 շէշ: Նա իւրաքանչիւր շէշը որքանով պէտք է վաճառի, որ բոլոր ղինու մէջ աշխատի 120 մանէթ 70 կոպէկ:

271. Փայտավաճառը տարվայ ընթացքում 784 սաժէն փայտ ծախեց 2548 մանէթով: Նա իւրաքանչիւր սաժէնը որքանով ծախեց:

272. Գործարանը օրէնք պատրաստում է 285 արշին հեռադրար: Վանի՞ օրումը կպատրաստի նա 95 վերստ լար:

273. Գլքաւորը մի ժամումը շարում է 992 տառ: Վանի՞ ժամումը նա կշարի մի զիրք, որ ունի 248 երես, ամեն-մի երեսում 36 տող և ամեն-մի տողում 46 տառ:

274 Մի շաբաթուայ ընթացքում երկաթուղով 38 շոգեկառք ուղարկեցին ապրանքով, ամեն-մի շոգեկառքում կար 356 փուտ և այդ բոլոր ապրանքի համար ճանապարհավարձ ստացան 9740 մանէթ 16 կոպէկ: Ամեն-մի փուտից որքան ճանապարհավարձ էին ստանում:

275. Մի նահանգ ունէր 2198 քառակուսի մղոն և 1017674 բնակիչ: Իւրաքանչիւր քառակուսի մղոնին քանի՞ բնակիչ է ընկնում:

276. Գործարատիրոջը 1000 շոգեկառքի համար վճարեցին 4348560 մանէթ: Որքան պէտք է վճարել այդպիսի 175 շոգեկառքի համար:

277. Տէրութեան բոլոր զօրքը բաղկանում էր 600 գնդից. ամեն-մի գնդումը կար 2400 ղնուոր, բայց յետոյ այդ բոլոր զօրքը բաժանեցին 1000 հաւասար գնդի: Այժմ ամեն-մի գնդումը քանի՞ ղնուոր կայ:

278. Երկրադնդիցը մինչև արեգակը 144732840 վերստ է և զա մօտաւորապէս հաւասար է երկրի 24042 շառաւի-

դին: Երկրի շառաւիղը քանի՞ վերստ է:

279. Լուսնի մակերևոյթը 185000 քառակուսի մղոն է, իսկ երկրի մակերևոյթը 9250000 քառակուսի մղոն: Երկրի մակերևոյթը քանի՞ անգամ է մեծ լուսնի մակերևոյթից:



ԳՐԱԻՈՐ ՎՃՌԵԼՈՒ ԽԱՌԸ ԽՆԴԻՐՆԵՐ

Չորս գործողութեան վերայ:

280. $(126+204+320)-(135+116+227)$.
 281. $(358+749+233+509)-(245+407+376)$.
 282. $(2812+4237+7058)-(1427+4563+5402)$.
 283. $(72547+35296+9328+749)-(68304-29045)$.
 284. $(1245-428)+(2504-785)+(1026-635)$.
 285. $(58112-9896)-(43004-42345)+(67405-39587)$.
 286. $(456+7082+8964+728)\times 378$.
 287. $(75\times 12)+(47\times 15)+(64\times 25)$.
 288. $(385\times 24)+(479\times 37)+(604\times 89)$.
 289. $(129\times 348)+(409\times 507)+(627\times 789)$.
 290. $((125+378)\times 35+(427+334)\times 17+(869+2349)\times 29))\times 15$.
 291. $((234+315)\times 127+(405+198)\times 215+(362+279)\times 315)\times 218$.
 292. $(724\times 84)-(976\times 35)$.
 293. $(666\times 555)-(444\times 777)$.
 294. $(3285-2979)\times 38\times (3305-3849)\times 17$.
 295. $(78213-74899)\times 217\times (315123-314786)\times 318$.
 296. $(85000-(305\times 246))-(389000-(765\times 504))$.

297. $((784\times 459)-(689\times 516))\times ((478\times 395)-(515\times 324))$.
 298. $(665:19)+(432:16)+(943:23)$.
 299. $(81310:346)+(210600:648)+(623168:749)$.
 300. $((28886400:136)+26085):((274715:835)+5786)$.
 301. $((5195306+4529872+3684507):(56315+37029+5987))+((12965756+5108908+4689028):(35829+28405+15082))$.
 302. $(202032:549)-(178480:485)$.
 303. $(318860:428)-(7283-6539)$.
 304. $(7000800-5828475):(1805016-1789385)$.
 305. $((47062802-6007802):105):((2296899-138579):138)$.
 306. $((5304580:205)-(2291736:328))-(2206855:119)-(2319045:237))$.
 307. $(3375\times 627):(225\times 495)$.
 308. $(3396600:5032)\times (635076:897)$.
 309. $309\times 435\times 543:(103\times 181\times 261)$.
 310. $((2342951325:585)\times 356):((899\times 979):89)$.
 311. $(706\times 10)+(420\times 20)+(508\times 30)-(635\times 40)$.
 312. $(36\times 17+79\times 26)-(28\times 16+54\times 27)$.
 313. $315\times 26+(745\times 9)-(236\times 15)+(439\times 35)$.
 314. $((829549+587095)-1415897)\times (1050005-(357685+689239))$.
 315. $((2786\times 465)+704510)-((3500000-3497282)\times 389)$.
 316. $(18650:25)+(12913:37)-(27434:43)$.
 317. $((2059307+2611195)-1871547):(1002005-(521881+376459))$.
 318. $(8583347+(15747808:439))-(9011000-3819968):318$.
 319. $((37844769:687)-49629)+(10000000-(82419492:579))$.
 320. $(45687+33885):349+(8359\times 108)$.
 321. $((6296346+5831094):(32346+25959))\times$

- ((4686×325):(75075:21))
322. $((904 \times 376) + (756 \times 432) + (238 \times 524)) :$
 $((16788 + 16179) : 407) \cdot$
323. $((5600310 : 6715) \times 6789 + (7721415 : 7839) \times 4567) +$
 $+ ((17896 + 19348) \times (6987744 : 15324)) \cdot$
324. $(72504 - 63145) \times 275 - (177135 : 241) \cdot$
325. $(785 \times 639 - (171716200 : 344)) \times$
 $((2740992 : 3569) \times 124) \cdot$
326. $((1422633 : 3453) \times (24399 - 18324)) \cdot$
 $((50006 - 7697) \times (977625 : 4345)) \cdot$
327. $((2100005 - 1989768) \times (506384 - 499785)) -$
 $((2294862 : 426) \times (4279885 : 7853)) \cdot$
328. $(1256 \times 375) + (219304 : 347) - (264 \times 309) \cdot$
329. $((1789 \times 376) + (1910876 : 548)) :$
 $((693999 - (4444152 : 249)) \cdot$
330. $((345 \times 278) : (23540 + 72370)) : ((702 \times 500) :$
 $: (371000 - 20000)) \cdot$
331. $((525 \times 205) - (62783 + 44842)) : ((4950 : 825) -$
 $- (3000 - 2995)) \cdot$
332. $((12789 + 8372) - (7659850 : 418)) \times$
 $\times ((58324 - 39887) - (8056500 : 524)) \cdot$
333. $((8139125 : 17135) \times (21325 - 12687)) -$
 $- ((5694 + 1987) \times (5613683 : 15637)) \cdot$
334. $5809 \times 457 + (1407232 : 368) - 1293432) :$
 $((300201 - 299345) \times 525 + (3279570 : 582)) \cdot$
335. $((365042 \times 56) - (9036542 + 8174305) +$
 $+ (8239005 : 45)) - ((4039875 - 2390492) +$
 $+ (8365717 : 493) - (13246 \times 105) + 3139072) \cdot$
336. $|11951010 - ((389 \times 567) + (1904520 : 472))| :$
 $| : 5000000 - ((5675 + 2894) \times (2634148 : 5027))| \cdot$
337. $((803689 + 742223) : (18356 - 14567)) \times (12315 : 9676) | -$
 $- |((407 \times 238) + (13234 - 5689)) \times (141075 : 15675)| \cdot$

338. Ոսկերիչը մի տարուայ ընթացքում վաճառեց 160 հատ ոսկէ շղթայ, ամեն-մինը 30 մանէթով և 100 կոճակ որոնց ամեն-մինը 10 անգամ արժան էր շղթայից: Նա ընդամենը հրքան փող ստացաւ այդ տարի:

339. Բերդը վերցնելու համար տարան 5 զուեղ-զօրք. ամեն-մի զնդումը կար 12 հարիւր մարդ. զնդերը բաժանեցին զօրաբաժինների, որոնց իւրաքանչիւրումը կար 30 տասնեակ: Յարձակմունքի ժամանակը 7 զօրաբաժին բոլորովին ջարդուեց, մնացածները մտան բերդը: Քանի՞ զինուոր մտաւ բերդը:

340. Վաճառականը ստացաւ 10 արկղ կիտրոն, որոնց իւրաքանչիւրի մէջ կար մէկ ու կէս հազար, կիտրոնի հարիւրը նա առել էր 3 մանէթով. դրացնից 25 մարդի վերայ վաճառեց ութ-ութ տասնեակ, տասնեակը 40 կոպէկով. 300 հատ էլ փչացաւ, իսկ մնացածը վաճառեց տասնեակը 50 կոպէկով: Նա հրքան աշխատեց,

341. Մըզավաճառը ստացաւ 10 տոպրակ խնձոր, որոնց ամեն-մէկում կար 2 հազար և 4 տասնեակ. այդ խնձորները ածեց ուրիշ տոպրակների մէջ. 40 մեծ տոպրակներից ամեն-մէկի մէջ ածեց 2 հարիւր և 6 տասնեակ, իսկ մնացածը ածեց հարիւր մանր տոպրակների մէջ: Մանր տոպրակներից իւրաքանչիւրի մէջ քանի՞ խնձոր մտաւ:

342. Հեղինակը տպեց իւր շարադրութիւնից 4 հազար օրինակ. դրանից նա վաճառեց 8 հարիւր, մէկը 50 կոպէկով: 24 հարիւր էլ տուեց զրավաճառին, մինը 60 կոպէկով, իսկ մնացածը կամենում է վաճառել 10 հատը 5 մանէթով և 50 կոպէկով: Նա հրքան կաշխատէր, եթէ որ տպելու ծախք արել էր 800 մանէթ:

343. Գրավաճառը 3400 մանէթով առաւ երկու տեսակ զիրք մի տեսակից 2500 օրինակ, տասը հատը 4 մանէթով, իսկ միւս տեսակից 12 հարիւր: Նա երկրորդ տեսակ զրքի իւրաքանչիւր օրինակին հրքան տուեց:

344. Վաճառականը ստացաւ 10 արկղ կիտրոն, ամեն

մէկ արկղումը կար 12 հարիւր և տասնեակը արժէր 40 կոպէկ. զորանից 30 մարդի վերայ վաճառեց, ամեն-մէկի վերայ 10-ը տասնեակ, տասնեակը 5 կոպէկով և մի վաճառականի վերայ 4 հազար, 100-ը 5 մանէթով, իսկ ֆնացածը վաճառեց՝ տասնեակը 60 կոպէկով: Աւաճառականը ռըքան աշխատեց:

345. Մըգավաճառը գնեց 3456 խնձոր, հարիւրը 4 մանէթով, իսկ ինքը վաճառեց տասնեակը 50 կոպէկով: Նա ռըքան աշխատեց:

346. Այգեպանը 8 մարկից վարունի քաղեց, ամեն-մի մարկից 1800 հատ, էլի քաղեց 10 մարկից, ամեն մէկից 560 և վաճառեց հարիւրը 2 մանէթով: Նա ռըքան փող ստացաւ:

347. Աւաճառականը ստացաւ 96 հազար կիտրոն արկղ-ներով, իւրաքանչիւր արկղի մէջ կար 24 հարիւր և ամեն-մի արկղին տուեց 154 մանէթ, իսկ ինքը իւրաքանչիւր 1000 վաճառեց 84 մանէթով: Նա ռըքան աշխատեց:

348. Ութ մշակ միասին ստացան վարձ 9 հատ 10 մանէթանոց, 9 հատ մանէթանոց, 4 հատ 2-շահանոց և 4 հատ կոպէկանոց: Ամեն-մէկին ռըքան փող կընկներ:

349. Աւաճառականը ստացաւ 6 արկղ կիտրոն, ամեն մէկումը կար 165 հատ. այդ կիտրոնից 6 մարդի վերայ վաճառեց, ամեն-մէկին 125 հատ, հարիւրը 4 մանէթով, իսկ ֆնացածը կամենում էր վաճառել՝ մինը 6 կոպէկով: Նա ռըքան կաշխատէր բոլորի մէջ, եթէ որ ամեն-մի արկղին ինքը տուել էր 6 մանէթ:

350. Մըգավաճառը սւնէր 2 արկղ միրգ. մէկի մէջ կար 2 հարիւր խնձոր և 60 տասնեակ տանձ, այդ բոլորը արժէր 46 մանէթ, միւս արկղումը միւսնոյն մրգից կար 2 հարիւր խնձոր և 90 տասնեակ տանձ. այդ բոլորն էլ արժէր 64 մանէթ: Որքան արժէր խնձորի և տանձի տասնեակը:

351. Վիւղացին տարաւ վաճառելու 6 քթոց ձու. ամեն մի քթոցում կար 137 հատ. զորանից 245 հատ նա վաճառեց՝ տասնեակը 20 կոպէկով, իսկ ֆնացածը վաճառեց՝ հա-

րիւրը 3 մանէթով: Նա ռըքան փող ստացաւ:

352. Այգեպանը առաջի շաբաթը քաղեց 258 վարունի, երկրորդ շաբաթը 236, երրորդ շաբաթը 185 և չորրորդ շաբաթը 254 և վաճառեց հարիւրը 2 մանէթով: Նա ընդամենը ռըքան փող ստացաւ:

353. Այգեպանը քաղեց 4 քթոց խնձոր. որոնց մէկումը կար 256 հատ, միւսում՝ 238, երրորդում՝ 165 և չորրորդում՝ 283. զորանից նա 369 հատ պահեց, իսկ ֆնացածը վաճառեց՝ տասնեակը 40 կոպէկով: Նա ռըքան փող ստացաւ:

354. Աղ դնելու համար գնեցին 3 սայլ վարունի. առաջին սայլի վերայ կար 8 տոպրակ, ամեն-մի տոպրակում՝ 236 հատ, երկրորդի վերայ կար 7 տոպրակ, ամեն-մէկում՝ 274 հատ և երրորդի վերայ կար 9 տոպրակ, ամեն-մէկում՝ 196 հատ: Այդ վարունիներից 190 հատ փչացել էր, ֆնացածը աղ ղրին 10 հաւասար տակառում: Ամեն-մի տակառում քանի՞ վարունի աղ ղրին:

355. Մի շտեմարան շինելու համար առաջին անգամը բերին 9 սայլ աղիւս, ամեն-մի սայլումը 234 հատ, երկրորդ անգամը բերին 8 սայլ, ամեն-մի սայլումը 168 հատ: Այդ բոլոր աղիւսները դարսեցին 10 հաւասար կարգ: Ամեն-մի կարգումը քանի՞ աղիւս կար:

356. Պատեւազմից յետոյ մի զօրաբաժնից ֆնաց 8 զուռդ. ամեն-մի զուռումը 137 մարդ, իսկ միւս զօրաբաժնից ֆնաց 9 զուռդ, ամեն-մի զուռումը 126 մարդ, այդ բոլոր զօրքը միացրին և կազմեցին 10 հաւասար զօրաբաժին: Ամեն-մի զօրաբաժինը քանի՞ մարդ մտաւ:

357. Աւաճառականը գնեց 8 տակառ վառելանաւթ, ամեն-մի տակառումը կար 1044 գրվանքայ և էլի առաւ 9 տակառ, ամեն-մէկում՝ 1052 գրվանքայ. նա այդ բոլոր վառելանաւթը ածեց 10 հաւասար տակառի մէջ: Որքան վառելանաւթ մտաւ ամեն-մի տակառում և ռըքան արժէր մի տակառը, եթէ որ զրվանքան արժէր 10 կոպէկ:

358. Ղանապարհորդը մանեկաւ ընդամենը 8994 վերստ այսինքն 9 օր մանեկաւ ձիով, օրէնը 142 վերստ, 15 օր մանեկաւ երկաթուղով, օրէնը 356 վերստ. 24 օր մանեկաւ շողեկաւով օրէնը 98 վերստ, իսկ մնացածը մանեկաւ ոտով: Նա քանի՞ վերստ մանեկաւ ոտով:

359. Ութ գիւղացի 12 ձիով 36 չետվերտ դարի տարան քաղաք և ամեն-մի չետվերտը վաճառեցին 6 մանէթով և 28 կոպէկով. ստացած փողերիցը ամեն-մի ձիու համար մսիեցին 1 մանէթ 38 կոպէկ, իսկ ամեն-մի մարդի համար մսիեցին 75 կոպէկ և մնացած փողը հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Ամեն-մէկին որքան ընկաւ:

360. Գործարանատէրը վաճառեց 58 թնդանօթ, ամեն մինը 456 մանէթով և 17 զանգակ, որոնց ամեն-մինը 179 մանէթ պակաս արժէր թնդանօթից: Նա որքան փող ստացաւ:

361. Վաճառականը 38 դիւժին ափսէին տուեց 68 մանէթ 40 կոպէկ. ինքը դորանից վաճառեց 144 հատ. ամեն մի դիւժինը 2 մանէթով և 40 կոպէկով, իսկ մնացածի ամեն-մի դիւժինը վաճառեց 2 մանէթով և 10 կոպէկով: Նա որքան աշխատեց:

362. Շոգենաւով բերում էին 49 տակառ շաքարաւաղ. այդ բոլորը արժէր 6468 մանէթ. ապրանքը շոգենաւիցը դուրս հանելու ժամանակը մի տակառ ջուրն ընկաւ և կոտրվեց: Շոգենաւի տէրը որքան ճանապարհավարձ պէտք է ստանայ շաքարի համար, եթէ որ ամեն-մի տակառի համար նորան պէտք է տային 8 մանէթ 56 կոպէկ և կոտրած տակառի դիւնը պէտք է նորանից դուրս գային:

363. Աշակերտը պէտք է արտադրէր 1348 բառ. 6 օր նա արտադրեց՝ օրէնը 126 բառ, իսկ մնացածը արտադրեց 8 օրումը: Վերջին ամեն-մի օրումը նա քանի՞ բառ արտադրեց:

364. Ղանապարհորդը 2448 վերստ մանեկաւ երկաթուղով, սայլով մանեկաւ 4 անգամ դորանից պակաս, իսկ ծովով մանեկաւ 15 անգամ պակաս երկաթուղով և սայլով մանե-

կածից միասին: Նա ընդամենը քանի՞ վերստ մանեկաւ:

365. Երկաթուղու մի կտոր տեղի համար, որի երկարութիւնն էր 45 սաժէն, պէտք էր 1035 փուտ երկաթ. դորանից 29 սաժէն տեղի համար արդէն պատրաստել էին: Վանի՞ փուտ էլի պէտք է պատրաստէին:

366. Ղանապարհորդը մի ամիս ճանապարհ գնաց, օրէնը 256 վերստ և նոյն ճանապարհով վերադարձաւ տուն 48 օրումը: Վերադառնալիս նա օրէնը քանի՞ վերստ էր գնում:

367. Երկու ճանապարհորդ միմեանց պատահեցին ճանապարհին և խնայան, որ նոցանից ամեն-մինը դուրս է եկել այն քաղաքիցը, որտեղ միւսը կամենում է գնալ. նոցանից մինը մինչև պատահելը գնացել էր 15 օր, օրէնը 84 վերստ, իսկ միւսը 28 օր, օրէնը 90 վերստ: Նոցանից ամեն-մինը քանի՞ օրումը տեղ կհասնէր, եթէ որ գնար առաջուայ պէս:

368. Մշակը մի տարի բանեց դործարանումը, ամսէնը 28 մանէթով և 50 կոպէկով. նա այդ փողեց շաբթէնը մսխում էր 4 մանէթ 95 կոպէկ. յետ դցած փողովը նա առաւ 36 չետվերտ դարի: Նա ամեն-մի չետվերտին որքան փող տուեց:

369. Տանտիկինը մի ծառայ վարձեց տարէնը 144 մանէթով և 84 կոպէկով, ծառան մնաց այդ տեղ 2 տարի 4 ամիս. նա իւր վարձումը ստացաւ 283 մանէթ 56 կոպէկ փող, իսկ մնացածին մի ձի: Որքան արժէր ձին:

370. Շոգենաւը շաբթէնը գնալով 784 վերստ, 48 օրումը հասաւ իւր նշանակած տեղը, իսկ այն տեղից վերադառնալիս նա օրէնը գնում էր 96 վերստ: Նա քանի՞ օրումը վերադարձաւ:

371. Վաճառելու ուղարկեցին 16 սայլ շաքարաւաղ, ամեն-մի սայլումը դրած էր 3 տակառ և բոլոր շաքարը 1632 փուտ էր: Որքան արժէր իւրաքանչիւր տակառը, եթէ որ փուտը արժէր 6 մանէթ 82 կոպէկ:

372. Երկու շոգենաւ, որ հեռու էին միմեանցից 6656 սաժէն. գնացին միմեանց հանդէպ: Վանի՞ ժամից յետոյ մի-

մեանց կալատահնն, եթէ որ մինը մի բոպէսումը գնում է 14 սաժէն, իսկ միւսը 18 սաժէն:

373. Վաղաքիցը մինչև գիւղը 7945 վերստ է. երկու ճանապարհորդ միեկոյն ժամանակ դուրս եկան այդ քաղաքներիցը միմեանց հանդէպ և պատահեցին միմեանց 35 օրից յետոյ: Վաղաքից գնացողը օրէնը գնում էր 136 վերստ: Օրէնը քանի՞ վերստ էր գնում գիւղից դուրս եկողը:

374. Վաղաքիցը մինչև գիւղը 1358 վերստ է. ճանապարհորդը 8 օր գնաց ձիով, իսկ մնացածը ոտով գնաց 9 օրումը, օրէնը գնալով 54 վերստ: Նա ձիով օրէնը քանի՞ վերստ էր գնում:

375. Մի վաճառական միւսին տուեց 7 փուտ շաքար, որի փուտը արժէր 6 մանէթ 82 կոպէկ, իսկ միւսը տուեց 9 զըրվանքայ թէյ, որի զըրվանքան արժէր 4 մանէթ 35 կոպէկ: Նուցանից որը և որքան պէտք է վճարի միւսին:

376. Վաճառականը ունէր երեք ամանում մուրաբայ. մի ամանում կար 8 զըրվանքայ և զըրվանքան արժէր 1 մանէթ 20 կոպէկ, միւսումը կար 6 զըրվանքայ և զըրվանքան արժէր 75 կոպէկ, իսկ երրորդումը կար 10 զըրվանքայ: Նա այդ բոլորը խառնեց միմեանց հետ: Որքան արժէր երրորդ ամանի մուրաբի զըրվանքան, եթէ որ խառնածի զըրվանքան արժէր 95 կոպէկ:

377. Վաճառականը գնեց 76 դիւժին ափսէ 136 մանէթով և 80 կոպէկով. խանութը բերելու ժամանակը 14 հատ կոտորվեց: Նա որքանով պէտք է վաճառի ամեն-մի ափսէն, որ բոլորի մէջ աշխատի 24 մանէթ և 84 կոպէկ:

378. Շտեմբան շինելու համար առաջին անգամը բերին 25 սայլ աղիւս, ամեն-մի սայլի վերայ 160 հատ. միւս անգամ բերին 36 սայլ, ամեն-մի սայլի վերայ 125 հատ: Լշի քանի՞ սայլ պէտք է բերել, եթէ որ ընդամենը առած է 16600 աղիւս և իւրաքանչիւր սայլի վերայ պէտք է դնեն 180 հատ:

379. Տուն շինելու համար 3200 աղիւսին իւր տեղումը տուին 300 մանէթ 80 կոպէկ: Որքան արժէր աղիւսի հաբիւրը և որքան նստեց նորա բերելը, եթէ որ հազարին առ-

նում են 1 մանէթ 25 կոպէկ:

380. Մի մարդ վաճառեց 1400 փուտ շաքար, միւսը 1050 արշին թաւիշ, երրորդը 1200 վեղը գինի. այդ բոլորի համար նորա ստացան 50400 մանէթ և հաւասար բաժանեցին: Որքան արժէր շաքարի փուտը, թաւիշի արշինը և գինու վեղը:

381. Մի մարդ 4400 մանէթով առաւ 32000 աղիւս: Որքան արժէր աղիւսի հազարը:

382. Հասարակածի մի աստիճանը հաւասար է 105 վերստին: Նորա իւրաքանչիւր կետը ի՞նչ արագութեամբ է շարժվում երկրի առանցքի շուրջը:

383. Նրկաթուղին օրէնը բերում է 1356 մանէթ արդիւնք. նորա շաքարթական ծախսն է 2457 մանէթ: Նա տարէնը որքան զուտ արդիւնք է տալի:

384. Գործարանատէրը մի մշակ վարձեց տարէնը 240 մանէթով. մշակը այնտեղ բանեց 2 տարի 8 ամիս և իւր հաշիւումը ստացաւ 470 մանէթ 50 կոպէկ փող, 39 մանէթի 90 կոպէկի շոր, իսկ մնացած փողին վերցրեց մահուտ, որի արշինը արժէր 1 մանէթ 20 կոպէկ: Նա քանի՞ արշին մահուտ ստացաւ:

385. Ընտառատէրը մի անտառ առաւ, որի մէջ կար 72546 ծառ, նորա հաշւով իւրաքանչիւր 6 ծառից դուրս կգար մի խորանարդ սաժէն փայտ, որի սաժէնը նա կամենում էր ծախել 10 մանէթով 80 կոպէկով: Նա որքան կաշխատէր, եթէ որ ինքը անտառին տուել էր 90582 մ. 80 կ:

386. Գինեկաճառը առաւ 12 տակառ գինի, ամեն-մի տակառումը կար 45 շիշ և իւրաքանչիւր տակառին տուեց 40 մանէթ 50 կոպէկ. այդ գինու հետ նա խառնեց 50 շիշ ջուր և խառնուրդի շիշը վաճառեց 1 մանէթով 20 կոպէկով: Նա որքան աշխատեց:

387. Մշակը միջին թւով օրէնը ստանում էր 1 մանէթ 20 կոպէկ, բացի կիւրակի օրերից. նա այդ փողերիցը շաք-

Թէնը յետ էր գցում 1 մանէթ 24 կոպէկ: Նա 2 տարումը
նրբան փող մսխեց:

388. Օօրբը 24 օրումը պէտք է հասնէր իւր նշանակած
տեղը, օրէնը գնալով 36 վերստ, բայց յետոյ տեսան որ-նա
օրէնը կարող է գնալ միայն 32 վերստ և 4 օր էլ պէտք է ճա-
նապարհին հանգստանայ: Օօրբը քանի՞ օրումը տեղ կհասնէր:

389. Վաճառականը առաւ 12000 վեղրօ զինի, վաճարե-
լով 100 վեղրօյին 560 մանէթ, իսկ ինքը 10 վեղրօն վա-
ճառում էր 64 մանէթով: Նա նրբան կաշխատէր բոլորի մէջ:

390. Վաճառականը 100 թուփ մահուտին տուեց 23540
մանէթ: Նա ամեն-մի թուփը նրբանով պէտք է վաճառի, որ
բոլորի մէջ աշխատի 2460 մանէթ:

391. Մի մարդ առաւ 15 զրվանքայ թէյ, զրվանքան 3
մանէթով և 40 կոպէկով, էլի առաւ միւս տեսակից զրվան-
քան 3 մանէթով և 25 կոպէկով, իսկ ինքը 25 զրվանքայ
վաճառեց, զրվանքան 4 մանէթով. մնացածի զրվանքան 3
մանէթով և 75 կոպէկով և բոլորի մէջը աշխատեց 64 մանէթ:
Նա ընդամենը քանի՞ զրվանքայ թէյ էր առել:

392. Գինեվաճառը առաւ մի տակառ զինի, վեղրօն 4 մա-
նէթով և 20 կոպէկով և նորա հետ խառնելով 6 վեղրօ ջուր,
ամեն-մի վեղրօն վաճառեց 5 մանէթով և բոլորի մէջը աշխա-
տեց 49 մանէթ 20 կոպէկ: Նա քանի՞ վեղրօ զինի առաւ:

393. Հովիւը վաճառեց 96 հատ այծ ու ոչխար 250 մանէ-
թով և 5 կոպէկով. իւրաքանչիւր ոչխարը արժէր 3 մանէթ,
իսկ այծը՝ 1 մանէթ 35 կոպէկ: Նա քանի՞ ոչխար ունէր և
քանի՞ այծ:

394. Վաճառականը երեք երեխայի տուեց 100 կիտրոն և
հրամայեց, որ հաւասար գնով վաճառեն. նոցանից մինը բե-
րեց 1 մանէթ 80 կոպէկ և 4 կիտրոն, միւսը բերեց 1 մանէթ
60 կոպէկ և 3 կիտրոն, իսկ երրորդը 1 մանէթ 20 կոպէկ և 1
կիտրոն: Վաճառողի երեխային քանի՞ կիտրոն էր տուել վա-
ճառականը:

ԲԱՐԴ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԹՈՒԵՐԸ

ԹՈՒԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԵՐԱԾՄԱՆ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՎԵՐԱՅ:

Վ Ե Ր Ա Մ Ո Ւ Մ Ն .

395. 275 մանէթը դարձնել տաս-շահանոցներ:
396. 369 մանէթը և 75 կոպէկը դարձնել հինգ-շահանոցներ:
397. 763 մանէթը և 80 կոպէկը դարձնել ապասխներ:
398. 945 մանէթը և 90 կոպէկը դարձնել երկու-շահանոցներ:
399. 1206 մանէթ և 35 կոպէկը դարձնել մի-շահանոցներ:
400. 5078 մանէթը և 94 կոպէկը դարձնել կոպէկներ:
401. 189 չետվերտը դարձնել չետվերիկներ:
402. 258 չետվերիկը դարձնել զարնցներ:
403. 354 զարնցը դարձնել զոլիաններ:
404. 62 չետվերտը և 7 չետվերիկը դարձնել չետվերիկ:
405. 46 չետվերտը 6 չետվերիկը 7 զարնցը դարձնել
զարնցներ:
406. 167 մղոնը դարձնել վերստեր:
407. 258 վերստը դարձնել սաժէններ:
408. 359 սաժէնը դարձնել արշիններ:
409. 483 սաժէնը դարձնել ֆուտեր:
410. 543 արշինը դարձնել վերշոկներ:
411. 652 ֆուտը դարձնել զիւլմներ:
412. 705 զիւլմը դարձնել լենիաններ:
413. 45 մղոնը և 6 վերստը դարձնել վերստեր:
414. 32 մղոնը 5 վերստը 257 սաժէնը դարձնել սաժ:
415. 21 մղոնը 3 վերստը 245 սաժէնը 2 արշինը դարձնել
արշիններ:
416. 12 մղոնը 4 վերստը 121 սաժէնը 3 ֆուտը դարձնել
ֆուտեր:

417. 5 մղոնը 2 վերստը 1 սաժէնը 2 արշնը 4 վերշոկը
դարձնել վերշոկներ:

418. 3 մղոնը 1 վերստը 2 սաժէնը 1 ֆուտը 5 զիւիմը
դարձնել զիւիմներ:

419. 1 մղոնը 2 վերստը 11 սաժէնը 2 ֆուտը 3 զիւիմը
5 լինիան դարձնել լինիաներ:

420. 87 բերկովեցը դարձնել փուտեր:

421. 96 փուտը դարձնել զրվանքաներ:

422. 742 զրվանքան դարձնել լոտեր:

423. 1205 լոտը դարձնել մսխալներ:

424. 324 մսխալը դարձնել զոլիաներ:

425. 53 բերկովեցը և 6 փուտը դարձնել փուտեր:

426. 42 բերկովեցը 7 փուտը 12 զրվանքան 9 լոտը դարձնել
զրվանքաներ:

427. 21 բերկովեցը 4 փուտը 12 զրվանքան 9 լոտը դարձնել
լոտեր:

428. 12 բերկովեցը 3 փուտը 8 զրվանքան 5 լոտը 2 մսխալը
դարձնել մսխալներ:

429. 1 բերկովեցը 2 փուտը 3 զրվանքան 4 լոտը 1 մսխալը
5 զոլիան դարձնել զոլիաներ:

430. 61 տարին դարձնել ամիսներ:

431. 86 շաբաթը դարձնել ամիսներ:

432. 97 օրը դարձնել ժամեր:

433. 103 ժամը դարձնել ըոպէներ:

434. 215 ըոպէն դարձնել վայրկեաններ:

435. 42 տարին և 9 ամիսը դարձնել ամիսներ:

436. 1 տարին 4 օրը 6 ժամը դարձնել ժամեր:

437. 1 տարին 3 օրը 4 ժամը 5 ըոպէն 6 վայրկեանը դարձ-
նել վայրկեաններ:

438. 87 օգման դարձնել զաստաներ:

439. զաստան դարձնել թերթեր:

440. 48 օգման և 23 զաստան դարձնել զաստաներ:

441. 35 օգման 15 զաստան 17 թերթը դարձնել թերթ:

442. 57 զրվանքան դարձնել ունցիաներ:

443. 69 ունցիան դարձնել զրախմաներ:

444. 78 զրախման դարձնել սկրուպուլներ:

445. 95 սկրուպուլը դարձնել զրաններ:

446. 35 զրվանքան և 11 ունցիան դարձնել ունցիաներ:

447. 24 զրվանքան 9 ունցիան 6 զրախման դարձնել
զրախմաներ:

448. 13 զրվանքան 5 ունցիան 4 զրախման 2 սկրուպուլը
դարձնել սկրուպուլներ:

449. 2 զրվանքան 3 ունցիան 5 զրախման 1 սկրուպուլը
4 զրանը դարձնել զրաններ:

Ա Ն Դ Ի Ա Դ Ա Ր Զ Ո Ի Մ Ն

450. 12345 կոպէկը դարձնել շահանոցներ:

451. 64570 կոպէկը դարձնել երկու շահանոցներ:

452. 74610 կոպէկը դարձնել երեք շահանոցներ:

453. 89760 կոպէկը դարձնել ապաստանոցներ:

454. 91375 կոպէկը դարձնել չինդ շահանոցներ:

455. 2034700 կոպէկը դարձնել մանէթներ:

456. 45368 շահանոցները դարձնել երկու շահանոցներ:

457. 75280 շահանոցը դարձնել մանէթներ:

458. 81360 երկու շահանոցները դարձնել մանէթներ:

459. 1200350 կոպէկը դարձնել մանէթներ և երկու շահանոց:

460. 2592 վերշոկը դարձնել արշններ:

461. 3894 արշնը դարձնել սաժէններ:

462. 40090 լինիան դարձնել զիւիմներ:

463. 5460 զիւիմը դարձնել ֆուտեր:

464. 6286 ֆուտը դարձնել սաժէններ:

465. 9000 սաժէնը դարձնել վերստեր:

466. 8127 վերստը դարձնել մղոններ:

467. 102500 սաժէնը դարձնել մղոններ և վերստեր:
 468. 84623 Ֆուտը դարձնել մղոններ, վերստեր և սաժէն:
 469. 97005 արշէնը դարձնել մղոններ, վերստեր և սաժէն:
 470. 40523 արշ. 832 վերշոկը դարձնել մղոններ, վերստեր և սաժէններ:
 471. 32336 Ֆուտը 540 ղիւլմը դարձնել մղոններ, վերստեր, սաժէններ և Ֆուտեր:
 472. 294000 ղիւլմը 6210 լինիան դարձնել մղոններ, սաժէններ, Ֆուտեր, և ղիւլմներ:
 473. 928 դարնցը դարձնել չետվերիկներ:
 474. 1352 չետվերիկը դարձնել չետվերտներ:
 475. 634 չետվերիկը 24 դարնցը դարձնել չետվերտներ և չետվերիկներ:
 476. 1056 դոլիան դարձնել մսխալներ:
 477. 2355 մսխալը դարձնել լոտեր:
 478. 3008 լոտը դարձնել զրվանքաներ:
 479. 51280 զրվանքան դարձնել փուտեր:
 480. 73520 փուտը դարձնել բերկովեցներ:
 481. 9560 զրվանքան դարձնել բերկովեցներ և փուտեր:
 482. 50304 լոտը դարձնել բերկովեցներ. փուտեր և զըրվաքաններ:
 483. 127635 մսխալը դարձնել բերկ. փուտ. զըրվ. և լոտ:
 484. 7856 զրվանքան 896 լոտը դարձնել բերկովեցներ, փուտեր և զրվանքաներ:
 485. 36009 լոտը 527 մսխ. 83 փուտը դարձնել բերկովեց. փուտ. զըրվ. լոտեր, մսխալներ և զոլիաններ:
 486. 576 զրվանքան 398 լոտը 495 մսխալը 1920 դոլիան դարձնել բերկովեցներ, փուտեր, զրվանքաներ, լոտեր և մսխալներ:
 487. 3420 վայրկեանը դարձնել ըոպէներ:
 488. 2940 ըոպէն դարձնել ժամեր:
 489. 1776 ժամը դարձնել օրեր:
 490. 1204 օրը դարձնել շաբաթներ:

491. 2832 ամիսը դարձնել տարիներ:
 492. 3057 ըոպէն 960 վայրկեանը դարձնել օրեր, ժամեր և ըոպէներ:
 493. 489 ժամը 563 ըոպէն 660 վայրկեանը դարձնել շաբաթներ, օրեր, ժամեր և ըոպէներ:
 494. 567 օրը 1234 ժամը 2568 ըոպէն դարձնել շաբաթներ, օրեր, ժամեր և ըոպէներ:
 495. 432 թերթը դարձնել դաստաններ:
 496. 13840 դաստան դարձնել օգմաններ:
 497. 355 դաստան 476 թերթը դարձ. օգ. դաս. թերթեր:
 498. 1240 զրանը դարձնել սկրուպուլներ:
 499. 3648 սկրուպուլը դարձնել զրախմաններ:
 500. 5872 զրախման դարձնել ունցիաներ:
 501. 7056 ունցիան դարձնել զրվանքաններ:
 502. 9384 զրախման դարձնել զրվանքաններ և ունցիաներ:
 503. 15009 սկրուպուլը դարձ. զըրվ. ունց. և զրախմաններ:
 504. 5473 սկրուպուլը 862 զրանը դարձ. զրվանքաններ, ունցիաներ, զրախմաններ, սկրուպուլներ և զրաններ:

Գ Ո Ւ Մ Ա Ր Ո Ւ Մ Ն

Թուական օրինակներ եւ խնդիրներ:

505. (362 մանէթ 34 կոպ.)+(235 մանէթ 23 կոպ.):
 506. (789 մանէթ 58 կոպ.)+(657 մանէթ 96 կոպ.):
 507. (87 չետվերտ 6 չետվերիկ 7 դարնց)+(58 չետվերտ 5 չետվերիկ 4 դարնց):
 508. (256 վերստ 378 սաժ. 2 արշ. 12 վերշ.)+(179 վերստ 296 սաժ. 1 արշ. 12 վերշ.):
 509. (76 զըրվ. 9 ունց. 5 զրախ. 2 սկրուպ. 13 զրան)+(69 զըրվ. 7 ունց. 6 զրախ. 1 սկրուպ. 17 զրան):
 510. (98 բերկովեց 6 փուտ 23 զըրվ. 17 լոտ 1 մսխալ 83

դուխա.)+(76 բերկ. 8 փուտ 19 զրվ. 24 լոտ 2 մսխալ 56 զուխա):

511. (127 օզմայ 16 դաստայ)+(268 օզմայ 9 դաստայ)+(305 օզմայ 17 դաստայ):

512. (68 ժամ 45 բոպէ 38 վայրկեան)+(76 ժամ 29 բոպէ 45 վայրկեան)+(84 ժամ 17 բոպէ 29 վայրկեան):

513. (256 սաթէն 3 ֆուտ 7 դիւիմ 9 լինիա)+(307 սաթէն 5 ֆուտ 11 դիւիմ 6 լինիա)+(489 սաթէն 6 ֆուտ 8 դիւիմ 7 լինիա):

514. (27 շաբաթ 5 օր 17 ժամ 23 բոպէ 46 վայրկեան)+(38 շաբաթ 6 օր 20 ժամ 37 բոպէ 29 վայրկեան)+(46 շաբ. 3 օր 19 ժամ 48 բոպէ 57 վայրկեան):

515. (389 մանէթ 76 կոպ.)+(456 մանէթ 85 կոպ.)+(547 մանէթ 69 կոպ.)+(673 մանէթ 54 կոպ.):

516. (537 օզմայ 18 դաստայ 16 թերթ)+(689 օզմայ 14 դաստայ 23 թերթ)+(705 օզմայ 9 դաստայ 17 թերթ)+(894 օզմայ 17 դաստայ 19 թերթ):

517. (9 ունցիա 7 դրախմայ 2 սկրուպուլ 17 զրան)+(11 ունցիա 5 դրախմայ 19 զրան)+(8 ունցիա 6 դրախմայ 2 սկր. 15 զրան)+(7 ունցիա 1 սկր. 12 զրան):

518. (256 փուտ 24 զրվ. 2 մսխ. 74 զուխա)+(387 փուտ 38 զրվ. 29 լոտ 1 մսխ.)+(409 փուտ 17 զրվ. 18 լոտ 58 զուխա)+(543 փուտ 25 լոտ 1 մսխ. 65 զուխա):

519. (375 մզոն 168 սաթ. 3 ֆուտ 9 դիւիմ 6 լինիա)+(486 մզոն 279 սաթ. 8 դիւիմ 7 լինիա)+(597 մզոն 387 սաթ. 5 ֆուտ 8 լինիա)+(604 մզոն 6 վերստ 65 ֆուտ 11 դիւիմ 9 լինիա):

520. Սաքառականը գնեց 2567 մանէթի 56 կոպէկի թէյ և ճանապարհավարձ էլ տուեց 115 մանէթ 85 կոպէկ: Նա ռիքանով պէտքէ վաճառի այդ բոլոր թէյը, որ մէջը աշխատի 638 մանէթ 79 կոպէկ:

521. Սալուածատէրը իւր զաշտերիցը ստացած բոլոր գա-

րին ածեց երկու շտեմարան այսինքն մէկի մէջ ածեց 255 չեովերտ 7 չեովերիկ 7 դարնց. իսկ միւսի մէջ 95 չեովերտ 6 չեովերիկ և 6 դարնց առաջինից աւելի: Որքան էր նորա բոլոր դարին:

522. Սաքառականը առաջին անգամ վաճառեց 987 չեովերտ 7 չեովերիկ 6 դարնց ցորեն, երկրորդ անգամ վաճառեց 879 չեովերտ 5 չեովերիկ 4 դարնց և նորա մօտ մնաց դարձեալ 769 չեովերտ 4 չեովերիկ 7 դարնց. նա առաւ դարձեալ այնքան դարի, որքան ծախեց: Աւելելուց յետոյ նա ռիքան դարի ունէր:

523. Հեղինակը տպեց 3 շաբաղրութիւն, որոնցից մէկի համար գնաց 54 օզմայ 18 դաստայ 15 թերթ թուղթ, միւսի համար գնաց 18 օզմայ 12 դաստայ 16 թերթ առաջինից աւելի, իսկ երրորդի համար գնաց առաջին երկուսի չափ: Որքան թուղթ գնաց բոլոր 3 շաբաղրութեան համար:

524. Տուելը առաջին տարին բերեց 4567 մանէթ 89 կոպէկ, զուտ արդիւնք, երկրորդ տարին բերեց առաջինից 1238 մանէթ 75 կոպէկ աւելի, իսկ երրորդ տարին բերեց երկրորդ տարուցը 756 մանէթ 68 կոպէկ աւելի: Այդ երեք տարումը ռիքան արդիւնք բերեց տուելը:

525. Սաքառականը առաջին ամիսը շինեցին 7 վերստ 320 սաթէն 4 ֆուտ ճանապարհ, երկրորդ ամիսը շինեցին առաջինից 1 վերստ 480 սաթէն 2 ֆուտ աւելի, իսկ երրորդ ամիսը շինեցին երկրորդից 2 վերստ 117 սաթէն 3 ֆուտ աւելի: Նորա ընդամենը ի՞նչ երկարութեան ճանապարհ շինեցին:

526. Սաքառականը գնեց 5231 մանէթի 42 կոպէկի սև մահուտ, 3052 մանէթի 31 կոպէկի կապուտ մահուտ և 1245 մանէթի 53 կոպէկի կարմիր մահուտ: Նա այդ բոլորը ծախեց և սև մահուտի մէջ աշխատեց 987 մանէթ 88 կոպէկ, կապուտի մէջ աշխատեց 625 մանէթ 56 կոպէկ և կարմրի մէջ աշխատեց 408 մանէթ 64 կոպէկ: Նա բոլոր մահուտը ռիքանով ծախեց:

527. Խանութը տարան 3 տակառ շաքարաւազ, մի տա-

կառը առանց շաքարի քաշումէր 35 գրվ. 18 լոտ, միւսը 1 փուտ 10 գրվ. երրորդը 1 փուտ 15 գրվ. 6 լոտ: Բոլոր 3 տակառը շաքարով միասին ճրքան էր քաշում, եթէ որ առաջին տակառումը կար 12 փուտ 28 գրվանքայ 17 լոտ շաքար, երկրորդումը 13 փուտ 19 գրվանքայ 22 լոտ, երրորդումը 14 փուտ 38 գրվանքայ:

528. Ղանապարհորդը մի քաղաքում մնաց 2 շաբաթ 5 օր 8 ժամ, միւսում 3 շաբաթ 4 օր 9 ժամ, երրորդում ալեքան որքան առաջին երկու քաղաքում միասին, չորրորդ 5 օր 6 ժամ աւելի երրորդից: Ղանապարհորդը ընդամենը ճրքան մնաց այդ չորս քաղաքումը:

529. Երկրագործը մի հողեց վերցրեց 256 չետվերտ 7 չետվերիկ 6 զարնց ցորեն, միւսից վերցրեց 98 չետվերտ 6 չետվերիկ 4 զարնց առաջինից աւելի, երրորդից վերցրեց 409 չետվերտ 4 չետվերիկ, իսկ չորրորդիցը վերցրեց առաջին երկուսի չափ: Նա ընդամենը ճրքան ցորեն վերցրեց:

530. Վաճառականը խառնեց միասին չորս տեսակ թէյ, մի տեսակիցը 1 փուտ 36 գրվանքայ 29 լոտ 1 մսխալ 82 դոլեա, միւս տեսակից 32 գրվանքայ 15 լոտ 2 մսխալ 58 դոլեա առաջինից աւելի, երրորդ տեսակից 4 փուտ 38 գրվանքայ 20 լոտ 2 մսխալ 60 դոլեա, իսկ չորրորդից 25 գրվանքայ 18 լոտ 1 մսխալ 78 դոլեա երկրորդից աւելի: Որքան էր քաշում բոլոր խառնուրդը:

Հ Ա Ն Ո Ւ Մ Ն

Թուական օրինակներ եւ խնդիրներ.

531. (789 մանէթ 65 կպկ.)—(425 Ֆթ. 43 կպկ.)

532. (1234 Ֆթ. 56 կպկ.)—(896 Ֆթ. 87 կպկ.)

533. (365 չետվ. 7 չետվերիկ 3 զարնց)—(234 չետվ. 3 չետվերիկ 5 զարնց):

534. (486 վերստ 275 սաժէն 1 արշ. 9 վեր.)—(243 վերստ 123 սաժէն 2 արշ. 14 վերշոկ):

535. (187 շաբաթ 6 օր 5 ժամ 12 բոպ. 10 վայրկ.)—(125 շաբ. 3 օր 18 ժամ 38 բոպ. 49 վայրկ.):

536. (249 գրվ. 3 ունցիա 2 դրախմայ 1 սկր. 4 զրան)—(125 գրվ. 10 ունց. 7 դրախ. 2 սկր. 16 զրան):

537. (2345 Ֆթ.)—(897 Ֆթ. 64 կպկ.):

538. (382 չետվերտ 6 չետվերիկ)—(297 չետվերտ 7 չետվերիկ 6 զարնց):

539. (182 գրվ. 4 ունց. 5 դրախ. 9 զրան)—(79 գրվ. 8 ունց. 7 դրախ. 2 սկր. 6 զրան):

540. (703 բերկովեց 2 փուտ 5 լոտ 28 դոլեա)—(568 բերկովեց 8 փուտ 24 գրվ. 31 լոտ 2 մսխ. 56 դոլեա):

541. (3564 օզմայ)—(1789 օզմայ 17 դաստայ 19 թերթ):

542. (256 գրվ. 5 ունցիա)—(198 գրվ. 6 ունցիա 5 դրախմայ 2 սկրուպուլ):

543. (271 մզոն 3 վերստ 120 սաժէն)—(85 մզոն 5 վերստ 378 սաժէն 2 արշեն 14 վերշոկ):

544. (341 մզոն 1 վերստ 1 Ֆուտ)—(276 մզոն 6 վերստ 499 սաժ. 6 Ֆուտ 11 դիւիմ 9 լենիա):

545. (258 օր)—(169 օր 16 ժամ 25 յոպէ 54 վայրկեան):

546. (184 մզոն 3 վերստ)—(157 մզոն 5 վերստ 249 սաժ. 2 արշ. 6 վերշ.):

547. (384 բերկովեց 1 գրվ.)—(297 բերկ. 8 փուտ 35 գրվ. 24 լոտ 2 մսխալ 84 դոլեա):

548. (4200 փուտ)—(1765 փուտ 19 գրվ. 17 լոտ 2 մսխալ 69 դոլեա):

549. (162 բերկովեց 8 փուտ 1 մսխ.)—(98 բերկովեց 9 փուտ 7 գրվ. 16 լոտ 2 մսխ. 74 դոլեա):

550. (6000 մզոն 13 սաժէն)—(3258 մզոն 5 վեր. 408 սաժ. 6 Ֆուտ 10 դիւիմ 4 լենիա):

551. Երկաթուղու փոստայի գնացքը մի բոպէումը անում

է 250 սաժէն 2 ֆուտ, իսկ ապրանքի գնացքը մի ըրպէնումը անում է 149 սաժէն 6 ֆուտ: Փոստայի գնացքը մի ըրպէնումը ճրքան է աւելի գնում ապրանքի գնացքից:

552. Ալափը իւր բոլոր ցորենը ծախեց 45625 մանէթ 31 կոպէկով և բոլորի մէջը աշխատեց 8967 մանէթ 96 կոպէկ: Նա ինքը ճրքան էր տուել ցորենին:

553. Վաճառականը միմեանց հետ խառնեց երկու տեսակ թէյ, առաջին տեսակից 2 փուտ 39 գրվանքայ 25 լոտ 2 մսխալ: Ո՞րքան խառնեց նա երկրորդ տեսակից, եթէ որ խառնուողը զուրս եկաւ 5 փուտ 18 գրվ. 12 լոտ 1 մսխալ:

554. Ոսկերիչը արծաթից և պղնձից կազմեց 12 փուտ 15 գրվանքայ 24 լոտ 1 մսխալ 84 զոլիա հալուածք: Ո՞րքան արծաթ կար այդ հալուածքի մէջ, եթէ որ պղնձն էր 3 փուտ 38 գրվանքայ 29 լոտ 2 մսխալ 95 զոլիա:

555. Մի դեղատան ծախեցին 3 գրվանքայ 5 ունցիա 4 զրախմայ 1 սկրուպուլ 12 զրան քինաքինայ, իսկ միւսումը ծախեցին 1 գրվանքայ 9 ունցիա 7 զրախմայ 2 սկրուպուլ 18 զրան առաջինից պակաս: Ո՞րքան քինաքինայ ծախեցին երկրորդ դեղատանը:

556. Ներկիրը պտտում է արեղակի շուրջը 365 օրումը 5 ժամում 48 ըրպէնում 46 վայրկենում, իսկ լուսինը պտտում է երկրի շուրջը 27 օրումը 7 ժամում 43 ըրպէնում 5 վայրկենում: Ներկիրը ճրքան ժամանակ աւելի է զործ գնում լուսնից իւր շրջանը կատարելու համար:

557. Մի վաճառական առուտուրի սկզբումը ունէր 38000 մանէթ 15 կոպէկ, իսկ միւսը ունէր 17000 մանէթ 26 կոպէկ: Տարվայ վերջը երկրորդ վաճառականի փեսքը 789 մանէթ 86 կոպէկ պակաս էր առաջինի փեսքից: Իւրաքանչիւրին ճրքան փող մնաց տարվայ վերջը, եթէ որ առաջինի փեսքն էր 7698 մանէթ 37 կոպէկ:

558. Մի իջեանում կար 515 չետվերտ 2 չետվերիկ 3 դարնց դարի, իսկ միւսումը կար 356 չետվերտ 5 չետվերիկ 4

դարնց: Առաջին իջեանի գարուցը զուրս գնաց 439 չետվերտ 6 չետվերիկ 7 դարնց, իսկ երկրորդից զուրս գնաց 289 չետվերտ 7 չետվերիկ 5 դարնց: Այդ իջեաններիցը ճրքում աւելի դարի մնաց և ճրքան աւելի:

559. Աալուածատէրը մի շտեմարանում ունէր 360 չետվերտ 3 չետվերիկ 4 դարնց դարի, իսկ միւսում ունէր 45 չետվերտ 6 չետվերիկ 7 դարնց տառջինից պակաս: Առաջին շտեմարանից նա մսխեց 248 չետվերտ 4 չետվերիկ 5 դարնց, իսկ երկրորդից մսխեց 179 չետվերտ 5 չետվերիկ 6 դարնց: Այդ շտեմարաններից ճրքում աւելի դարի մնաց և ճրքան աւելի:

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՈՒՆԸ

Թուական օրինակներ եւ խնդիրներ

560. Շողենաւը զուրս եկաւ նաւահանգստից՝

ա. Մարտի 15-ին:

բ. Ապրիլի 27-ին առաւօտեան 7 ժամին:

գ. Յունիսի 9-ին երեկոյեան 3 ժամին 50 ըրպէին:

Շողենաւը երբ վերադարձաւ նաւահանգիստը, եթէ որ նա մանեկաւ 3 ամիս; 5 ամիս 18 ժամ; 7 ամիս 21 ժամ 40 ըրպէ:

561. Օտարականը եկաւ Թիֆլիզ՝ ա. Յունվարի 5-ին:

բ. Մայիսի 12-ին առաւօտեան 9 ժամին:

գ. Օգոստոսի 21-ին երեկոյեան 2 ժամին 11 ըրպէին:

դ. Սեպտ. 30-ին երեկոյեան 7 ժամին 3 ըրպէին 41

վայրկեանին և կրկին վերադարձաւ իւր երկիրը նոյն տարի Հոկտեմբերի 27-ին առաւօտեան 10 ժամին. Նոյեմբերի 11-ին երեկոյեան 1 ժամին 17 ըրպէին: Նա ճրքան ժամանակ կացաւ Թիֆլիզում:

562. Տան շինութիւնը աւարտեցին՝

ա. 1825 թուին:

բ. 1830 թուին Փետրվարի 1-ին:

4. 1845 թուին Ապրիլի 20-ին առաւօտեան 9 ժամին:

7. 1849 թուին Յուլիսի 31-ին երեկոյեան 2 ժամին:

է. 1851 թուին Օգոստոսի 12-ին երեկոյեան 7 ժամին:

Վանի տարի զիմացաւ այդ շինութիւնը, եթէ որ նա այդ-
վեց 1856 թուին: 1859 թուին Մարտի 5-ին: 1861 թուին
Մայիսի 24-ին առաւօտեան 6 ժամին: 1868 թուին Սեպ-
տեմբերի 30-ին երեկոյեան 1 ժամին 17 բոպէին: 1874 թուին
Նոյեմբերի 14-ին երեկոյեան 8 ժամին 12 բոպէին:

563. Հիւանդը զարթեց՝ ա. Առաւօտեան 6 ժամին:

բ. երեկոյեան 2 ժամին 16 բոպէին:

գ. երեկոյեան 9 ժամին 35 բոպէին

47 վայրկեանին: Երբ քնեց հիւանդը, եթէ որ նա քնած մնաց
7 ժամ: 9 ժամ 19 բոպէ: 14 ժամ 53 բոպէ 6 վայրկեան:

564. Ղանապարհորդը վերադարձաւ տուն՝

ա. Սեպտեմբերի 17-ին:

բ. Հոկտեմբերի 24-ին առաւօտեան 12 ժամին:

գ. Նոյեմբերի 5-ին երեկոյեան 2 ժամին 10 բոպէին:

Նա երբ էր ձանապարհ զուրս եկել, եթէ որ նա բացակայ էր
2 ամիս: 3 ամիս 17 օր: 4 ամիս 25 օր 19 ժամ: 6 ամիս 30
օր 23 ժամ 45 բոպէ:

565. Ս. Մեսրոպը Հայոց տառերը հնարեց 374 թուին:

Վանի տարի է անցել այդ ժամանակից մինչև այսօր:

566. Հայոց Ռուբինեան Լևոն վեցերորդ վերջին թաղա-
ւորը դահը բարձրացաւ 1365 թուին և վախճանեցաւ Փարի-
զում 1393 թուին և նորանով վերջացաւ Հայոց թաղաւո-
րութիւնը: Լևոն վեցերորդը քանի տարի թաղաւորեց և Հա-
յոց թաղաւորութեան վերջանալուց մինչև այժմ որքան ժա-
մանակ է անցել:

567. Նապօլէօն առաջինը ծնվեց 1768 թուին Օգոստոսի
16-ին և բարձրացաւ Ֆրանսիական դահը 1804 թուին Մա-
յիսի 18-ին: Նա քանի տարեկան էր, երբ դահը բարձրացաւ:

568. Ֆրանսիացիք մտան Մոսկվա 1812 թուին Սեպտեմ-

տեմբերի 2-ին, իսկ Ռուսները մտան Փարիզ 1814 թուին Մարտի
19-ին: Վանի տարի անցկացաւ այդ երկու անցքի մէջ և որ-
քան ժամանակ է անցկացել այդ երկու անցքիցը մինչև այժմ:

569. Գլխորդ լուսաւորիչը և Տրդատ թագաւորը Ս. Լեւ-
միածինը հիմնեցին 303 թուին, իսկ Գեորգ Չորրորդ Վաթու-
ղիկոսը Նորա Ղեմարանը բացեց 1873 թուին Սեպտեմբերի 28
ին: Որքան ժամանակ է անցել Լեւմիածնի հիմնելուց մինչև
Ղեմարանի բացվելը և այդ երկու անցքից մինչև մեր ժամանակը:

570. Այստեքուհի Եկատերինէ երկրորդը բարձրացաւ դահը
1762 թուին Յունիսի 28-ին, երբ նա 34 տարեկան 2 ամսա-
կան և 7 օրական էր և վախճանեցաւ երբ էր 68 տարեկան 6
ամսական և 15 օրական: Նա որ թուին ծնվեց և որ թուին
վախճանեցաւ:

571. Ղանապարհորդը Նրեանից ձանապարհ ընկաւ ար-
տասահման 1867 թուին Մայիսի 15-ին երեկոյեան 5 ժամին
30 բոպէին և վերադարձաւ Նրեան 1870 թուին Հոկտեմբերի
28-ին առաւօտեան 10 ժամին 40 բոպէին: Նա որքան ժա-
մանակ էր ձանապարհորդում:

572. Ռուսաց կայսր Պետրոս մեծը ծնվեց 1672 թուին
Մայիսի 30-ին և վախճանեցաւ 1725 թուին Յունվարի 28 ին:
Նա քանի տարեկան էր երբ մեռաւ:

573. Ռուսաց կայսր Աղէքսանդր Առաջինը դահը բարձրա-
ցաւ 1801 թուին Մարտի 12-ին և թագաւորեց 24 տարի 8
ամիս 7 օր: Նա որ թուին, որ ամսին և որ օրը մեռաւ:

Թուական օրինակներ եւ խնդիրներ

574. (256 մանէթ 25 կոպէկ) $\times 7$;
 575. (302 բերկովեց 8 փուտ) $\times 8$;
 576. (503 օզմայ 10 դաստայ) $\times 10$;
 577. (50 սաթէն 2 արշն) $\times 27$;
 578. (40 շաբաթ 5 օր) $\times 69$;
 579. (10 տակառ 12 վեղրօ) $\times 100$;
 580. (9 ունցիա 5 դրախմայ) $\times 1000$;
 581. (104 չետվերտ 3 չետվերիկ 5 դարնց) $\times 6$;
 582. (94 փուտ 10 գրվ. 6 լոտ) $\times 7$;
 583. (85 սաթէն 4 Ֆուտ 10 դիւիմ) 10;
 584. (53 օր 20 ժամ 30 բոպէ) $\times 60$;
 585. (40 օզմայ 10 դաստայ 20 թերթ) $\times 104$;
 586. (7 դրախմայ 2 սկրուպուլ 9 դրան) $\times 1008$;
 587. (304 վերստ 201 սաթ. 2 արշ. 3 վերշ.) $\times 5$;
 588. (109 բերկովեց 6 փուտ 30 գրվ. 10 լոտ) $\times 9$;
 589. (60 օր 20 ժամ 30 բոպէ 40 վայրկեան) $\times 38$;
 590. (100 փուտ 30 գրվ. 20 լոտ 40 ղոլեա) $\times 60$;
 591. (50 շաբաթ 6 օր 20 բոպէ 30 վայրկեան) $\times 85$;
 592. (29 գրվանքայ 10 ունց. 1 սկր. 2 դրան) $\times 102$;
 593. (300 մղոն 6 վերստ 2 Ֆուտ 10 դիւիմ 4 լենիա) $\times 9$;
 594. Եկան շրջապատն էր 1 սաթէն 4 Ֆուտ 3 դիւիմ. նա պտտվեց 405 անգամ: Ո՞րքան տարածութիւն գնաց նա:
 595. Ո՞րքան ալիւր կստացվի 365 չետվերտ ցորենից, եթէ որ ամեն մի չետվերտից ստացվումէ 7 փուտ 26 գրվանքայ 23 լոտ 1 մսխալ:
 596. Գործարանատէրը 27 սայլ շաքարաւազ ուղարկեց տօնավաճառ, իւրաքանչիւր սայլի վերայ կար 5 տակառ եւ իւրաքանչիւր տակառում կար 11 փուտ 37 գրվանքայ 23 լոտ

- 2 մսխալ: Ո՞րքան էր բոլոր ուղարկած շաքարաւազը:
 597. Վաճառականը 26 զիւղացու իւրաքանչիւրից գնեց 19 չետվերտ ցորեն: Նա ընդամենը ո՞րքան փող վճարեց, եթէ որ ամեն մի չետվերտին տուեց 3 մանէթ 28 կոպէկ:
 598. Կալուածատէրը ունէր 35 կով. ամեն մի կովը տարէնը տալիս էր 128 վեղրօ կաթը եւ իւրաքանչիւր վեղրօյից յուրս էր գալի 1 գրվանքայ 15 լոտ 2 մսխալ կարագ: Նա ո՞րքան կարագ էր ստանում բոլոր կովերից մի տարումը:
 599. Վանի վերստ կարկի է մանգալ 18 օրումը, եթէ որ օրէն մանգան 16 ժամ եւ ամեն մի ժամումը գնան 27 վերստ 365 սաթէն 6 Ֆուտ:
 600. Տպարանը ամսէնը տպում էր 19 շարադրութիւն: Տարէնը ո՞րքան թուղթ կերթար յորա համար. եթէ որ ամեն մի շարադրութեան համար գնում էր 58 օզմայ 17 դաստայ 23 թերթ:
 601. Ո՞րքան ածուխ դուրս կգայ 38 գերանից, եթէ որ իւրաքանչիւր գերանը քաշում էր 23 փուտ եւ փայտի ամեն մի փուտը տալիս էր 9 գրվանքայ 18 լոտ 2 մսխալ ածուխ:
